Azg
Ազգ
3 ՄԱՅԻՍ 2008 ՇԱԲԱԹ 84 (3978)

Մեծ եղեռնի հուշարձան Կիպրոսում

Մայիսի 1-ին, վկայակոչելով Կիպրական «Ֆիլիֆֆերու» թերթը, այդ մասին տեղեկացրել է թուրքական մամուլը: Տեղեկության համաձայն, Մեծ եղեռնի հուշարձանը կկանգնեցվի Լառնակա քաղաքում, բացումը կկատարվի հունիսին: Հուշարձանի բացմանը նախագահ Սերժ Սարգսյանի գլխավորությամբ կմասնակցի նաեւ Հայաստանի ղեկավարությունը:

Լառնակայում Մեծ եղեռնի հուշարձան կանգնեցնելու որոշումն ընդունել է քաղաքաթեսարանը, որոշումը միաձայն հաստատել են Կիպրոսի խորհրդարանի եւ կառավարության անդամները: Ըստ երեւույթին, այդ հուշարձանը, որի պատվանդանն արդեն կառուցված է, Հայաստանում է պատրաստվել, որ թուրքական մամուլը ենթադրություն է անում, թե ապրիլի 1-ին դա հասած պետք է լիներ Լառնակայի նավահանգիստ:

Մեր կողմից հիշեցնենք, որ հուշարձանի հիմնարկեքը կատարել էր նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանը:

Հ. Ղ.

Տեր-Պետրոսյանը եվրոպացիների վրա եւս ծանր մեղքեր է բարդում

Աղյուսա-ակտյաբրյուսա

ՄԱՐԻՈՆ ԽՈՒՇՈՒՐՅԱՆ

Երեկ տեղի ունեցած իր կողմնակիցների կոնգրեսում Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը մի քանի նոր շեշտադրում արեց, որոնք չէին հնչել մարտի 1-ից հետո տարբեր կայքերում տեղադրված նրա հարցազրույցներում: Նա նկատեց, որ հասարակության (իրենց) եւ վարչախմբի (իշխանությունների) միջեւ լարվածության լիցքաթափման միակ միջոցը, ելը արտահերթ նախագահական եւ խորհրդարանական ընտրություններն են: Բայց ըստ նրա՝ ոչ իշխանությունները, ոչ եվրոպական կազմակերպությունները, որոնք վերահսկում են Հայաստանի ժողովրդավարացման գործընթացը, դեռեւս այս ելին պատրաստ չեն, գաղափարի հասունացումը ժամանակ է պահանջում, դրա համար էլ առայժմ հարկ կա իրենց խոյերը հասկեցնելու, այնպես որ հարկ կա խոսել առաջիկա մի քանի խնդիրների մասին: Ըստ նրա՝ քաղաքական ուժերի նոր հարաբերակցությունը երբեմն այնքան հստակ չի եղել, որքան հիմա՝ մի կողմում իշխանությունն է, մյուս կողմում իրենք, ուրիշ ընդդիմություն էլ չկա: Միեւնույն ժամանակ Տեր-Պետրոսյանի շուրջը ձեւավորված ընդդիմությունը նախընտրական միավորի ձեւաչափ է ունեցել, որն այս պահին անհրաժեշտ է, այնպես որ իր գլխավորած շարժումը նա հարկ է համարում կազմակերպական նոր ձեւի մեջ դնել (գուցե կուսակցություն լինի, գուցե սեփական կառավարություն ունենա) եւ դա անվանել Հայ ազգային կոնգրես: Կազմակերպական այդ նոր ձեւը ժառանգելու է առայժմ Տեր-Պետրոսյանի գլխավորած շարժման քաղաքական խորհուրդն ու մյուս ղեկավար կառույցները: Սա՝ նորությունը կոնգրեսի: Մյուս նորությունն այն էր, որ Տեր-Պետրոսյանը փաստորեն այնքան էլ չհնարաստեց նորընտիր նախագահ Սերժ Սարգսյանին՝ մի տեսակ կարծես լուսանցքի տեղ թողնելով եւ բոլոր մահացու մեղքերի մեջ մեղադրելով արդեն էս- նախագահ Ռոբերտ Քոչարյանին:

Տես էջ 3

ՍԱՄՈՒԼԻ ՕՐ

Մամուլի ազատության պահանջարկը Հայաստանում

ԱՐՄԵՆ ՄԵՍՈՒԵԼՅԱՆ

Այսօր՝ մայիսի 3-ին ողջ աշխարհը նշում է մամուլի ազատության օրը: Այս տոնացույցը սահմանել է Միավորված ազգերի կազմակերպությունը, սակայն ասել, թե ողջ աշխարհը բան ու գործը թողած մամուլի ազատության խնդիրներով է զբաղվում, սուտ կլինի, իսկ ճշմարտությունն այն է, որ ազատ մամուլը աշխարհի մեծ մասում շարունակում է մնալ չպահանջված, հեռացնված եւ հալածանքների ենթարկված մի երեւույթ, որի կարիքը շատերը չունեն, իսկ մյուսներն էլ փորձում են այն ենթարկել իրենց կամքին: Եվ այսպես, կարո՞ղ է գոյություն ունենալ ազատ մամուլ, եթե ենթարկվում է ինչ որ մեկի կամքին:

Ժամանակակից՝ շուկայական հարաբերությունների աշխարհում ամեն ինչ որոշվում է առաջարկի եւ պահանջարկի հարաբերակցությամբ: Եթե ինչ-որ բանի պահանջարկ կա, ապա անմիջապես հայտնվում են մարդիկ, որ փորձում են բավարարել այն: Հենց այս հարաբերությունների տեսանկյունից էլ հարկավոր է դիտարկել մամուլի ազատության ասպիրանտը Հայաստանում: Հիմնական հարցը, որ պետք է տանք, արդյոք Հայաստանում կա՞ ազատ մամուլի պահանջարկ: Եթե այդպիսին կա, ապա հենց մենք, լրագրողներս էլ պետք է փորձենք բավարարել այն մեր հոդվածներով եւ տպագիր ու էլեկտրոնային լրատվամիջոցներով փորձենք լցնել այդ վակուումը: Սակայն միանշանակ են մի քանի ճշմարտություններ՝ Հայաստանում երբեմն գոյություն չեն ունեցել ազատ մամուլ ու ազատ խոսք այս բառի լիակատար իմաստով: Հայաստանի անկախացումից հետո բոլոր փորձերը՝ ստեղծել ազատ լրատվամիջոցներ, անմիջապես բախվեցին գործող իշխանությունների դիմադրությանը: Շատ կարճ ժամանակ տեւած խոսքի ու մամուլի ազատության մեղրամիսը ավարտվեց 1992-ի ապրիլի 1-ին, երբ փակվեց «Հայլուր» լրատվականը: Այդ օրվանից էլ ազատ խոսքը սկսվեց հետապնդվել եւ իսպառ վերացվեց էլեկտրոնային լրատվամիջոցներից: Մի փոքր այլ էր ազատության վիճակը տպագիր մամուլում, որտեղ դեռ հնարավոր էր կարդալ ընդդիմադիր հոդվածներ իշխանությունների հասցեին: Սակայն այդ մամուլն էլ ազատ համարել չէր կարելի, քանի որ հայրենի մամուլը՝ շարժվելով լենինյան լոգունգներով, իսկույն անցավ այս կամ այն կուսակցության ենթակայության տակ կամ ստեղծվեց ու ֆինանսավորվեց նրանց կողմից, վերածվելով պրոպագանդայի ու քարոզչության միջոցի: Նույնիսկ այսօր էլ իր ճնշող մեծամասնությամբ հայրենի տպագիր մամուլը ոչ թե ազատ խոսք տարածող է, այլ տարբեր քաղաքական ուժերի քարոզչություն իրականացնող: Մեր տպագիր մամուլը հայտնվել է երկակի ճնշման տակ թե՛ իշխանությունների եւ թե՛ քաղաքական ուժերի կողմից:

Տես էջ 8

Վարչապետը հանդիպել է Վեհափառին

Վարչապետ Տիգրան Սարգսյանն այսօր կառավարությունում հանդիպում է ունեցել Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի հետ: Քննարկվել են եկեղեցաշինությանն առնչվող մի շարք հարցեր, որոնք վերաբերում են հասարակության մեջ եկեղեցու դերին եւ նշանակությանը, հրատապական արժեքների վրա հիմնված արժեհամակարգի ամրապնդմանը: Ամենայն հայոց կաթողիկոսն ու կառավարության ղեկավարը պայմանավորվել են առաջիկայում անցկացնել ժամանակակից հասարակության մեջ եկեղեցու դերին եւ նշանակությանը նվիրված համաշեղ գիտաժողով, որտեղ «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի, հոգեւորականության, մտավորականների, հասարակական հանրության ներկայացուցիչների մասնակցությամբ կքննարկվեն մեր հասարակությանն այսօր մտահոգող մի շարք կարեւորագույն խնդիրներ եւ դրանց լուծման հնարավոր ուղիները:

Վերաբացվեց հրապարակի «7 աղբյուրը»

«Երեւան» ամսագրի նախաձեռնությամբ եւ Երեւանի քաղաքապետարանի աջակցությամբ բարեկարգվել է Հանրապետության հրապարակի «7 աղբյուր» կամ Կաթողիկոսի կոչվող ցայտաղբյուրը, որի վերաբացումը տեղի ունեցավ մայիսի 2-ին: Ցայտաղբյուրի հեղինակը ճանաչողործ Սպարսակ Գնդեցյանն է: Վերջինս փորձել է Երեւանցիների համար կառուցել այնպիսի աղբյուր, որը ոչ միայն իր սառնորակ ջրով, այլեւ տեսքով տարբերվի մայրաքաղաքի մնացած ցայտաղբյուրներից:

Դիզայներ Նուրի Խոսրեւով, 1990-ականներին ցայտաղբյուրի որոշ մեծաղական մասեր գողացել էին, ինչի հետեւանքով այն կորցրել էր իր երբեմնի փայլը: «Նորացված ցայտաղբյուրը իր ժամանակակից տեսքով կծառայի մեր քաղաքացիներին: Երեւանում տարեցտարի կառուցվում են նոր շինություններ, բայց մենք պետք է պահպանենք նաեւ հինը», նշել է դիզայները, հաղորդում է «Նոյյան տապանը»:

Լրագրողների համար վտանգավոր երկրները

Աշխարհի 13 երկրում լրագրողների սպանությունները հիմնականում մնում են չբացահայտված: 1998 թվականից ի վեր ուսումնասիրություն է անցկացրել ու ըստ «անպատժելիության ինդեքսի» այդ երկրների ցանկը հրապարակել Լրագրողների պաշտպանության կոմիտեն, որի կենտրոնակայանը գտնվում է Նյու Յորքում, հաղորդում է «Ազատություն» ռադիոկայանը: Լրագրողական կազմակերպությունը ցանկում ընդգրկել է այն երկրները, որտեղ 1998-2007 թվականներին չբացահայտված են մնացել 5-ից ավելի սպանություններ: Այդ ցանկում ընդգրկվել է նաեւ Ռուսաստանը, որտեղ 14 լրագրողի սպանություն չի բացահայտվել: Ամենաշատ դեպքերն արձանագրվել են Իրաքում՝ 79 լրագրողի սպանություն մնացել է չբացահայտված: Ցանկում տեղ են գտել նաեւ Սիերա Լեոնեն, Սոմալին, Կոլումբիան, Շրի Լանկան, Ֆիլիպինները, Աֆղանստանը, Նեպալը, Մեքսիկան, Բանգլադեշը, Պակիստանը եւ Հնդկաստանը: Զեկույցը նշում է, որ այդ երկրների մեծ մասում պատերազմական գործողություններ, հակամարտություններ չկան, սակայն լրագրողները պարբերաբար մարդասպանների թիրախ են դառնում եւ ոչ ոք դրա համար պատասխանատվություն չի կրում:

Դրոշ այրելը քաղաքական ակցիա է, եթե դա կատարվում է տվյալ երկրի ներկայացուցչի կամ ներկայացուցչության առջեւ

Այլապես ակցիան վերածվում է սովորական անիմաստ սանձարձակության

ՀԱՍՄԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Ինչպես ՀՀ նախագահի պատասխանում Սերժ Սարգսյանի ընտրությունը, այնպես էլ վարչապետ Տիգրան Սարգսյանի գլխավորությամբ նոր կառավարության կազմավորմանն ու արտգործնախարարի պատասխանում էդվարդ Նալբանդյանի նշանակմանը միանգամայն դրական էր արձագանքել թուրքական մամուլը: Թերեւս դա պայմանավորված էր հայատեսյան պատասխանատուներին Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլի, վարչապետ Ռեջեպ Թայիփ Էրդողանի եւ արտգործնախարար Ալի Բաբաջանի շնորհավորական ջերմ ուղերձներով: Հայկական կողմի համարժեք արձագանքը դրանց առիթ տվեց թուրքական մամուլին գրելու, որ Հայաստանում նոր իշխանությունների ձեւավորումը դրական զարգացում է եւ հույսեր է ներշնչում հայ-թուրքական միջպետական երկխոսության սկզբնավորման համար:

Հայ-թուրքական հնարավոր երկխոսությանը դրական արձագանքը, սակայն, չի խանգարել թուրքական մամուլին, որ երկում ավելորդ կրթբրբրի Մեծ եղեռնի զոհերի ոգեկոչման միջոցառումների Թուրքիայի դրոշը տորելու եւ այրելու միջադեպերի առնչությամբ, խեղաթյուրելով միաժամանակ իրականությունը:

Ի դեպ, ապրիլի 24-ին այդ միջադեպերին արձագանքեց թուրքական հանրային հեռուստատեսությունը եւ դատապարտելով Հայաստանին, այնուամենայնիվ, հարկ համարեց նշելու. «Չի բացառվում, որ երեւանում Թուրքիայի դրոշը ոսնատակ տալու դեպքերը լինեն սադրանք»: Հակառակ դրան, թուրքական որոշ թերթեր, անխնա շահարկելով դրոշի տորման փաստերը, տորումը վերագրեցին նաեւ ՀՀ նորընտիր նախագահին, կառավարության անդամներին եւ Ծիծեռնակաբերդի բոլոր այցելուներին, թե ապրիլի 24-ին անխտիր բոլորը Ցեղասպանության հուշարձան են մտել, տորելով Թուրքիայի դրոշը, որն իր փոված է եղել հուշարձանի շեմին:

Տես էջ 5

Ակադեմիայի տարեկան ժողովից հետո գիտությունը մղվել է խոշոր ոլան

Գիտությունների ազգային ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովում հանդիսավորության նախագահի եւ վարչատեսի ներկայությունը բավականին աշխուժացրեց մամուլի ակումբներին՝ նրանց հայացքը միանգամից սեւեռելով գիտության թեմային, ավելի ճիշտ՝ այդ ժողովում հնչած վիճահարույց այն հարցերին, որ առդեռ երկար ժամանակ գիտական ասոցիացիաների վերաբերյալ նեռածը. «Մտավախությունն այն է, որ մեզ մոտ գիտական թեզեր շատ են պատրաստվում, նույնիսկ գիտության այն բնագավառներում, որոնք, ըստ էության, այդման զարգացած չեն: Օրինակ, եթե չեմ սխալվում տարեկան մոտ 600 թեկնածուական թեզ է պատրաստվում: Դրանցից 106-ը տնտեսագիտության ասպարեզին է վերաբերում, այն դեռեվում, երբ մեր տնտեսությունը նոր-նոր է զարգանում: Այս հակասությունն իրոք կա: Բանակից խուսափելու համար ասպիրանտուրա ընդունվելու վրա ես այդքան կանգ չեմ առնում, որովհետեւ ծառայությունից ազատվելու շատ ձեւեր կան: Տարեկան ասպիրանտուրային տրվում է ընդամենը 220 տեղ, հիմնականում ընդունվում են տղաները: Դրա համար էլ նախագահն ասաց՝ «Աղջիկները չեն կարող ընդունվել»: Իհարկե, լինում է, որ աղջիկներն էլ ընդունվում են, բայց նրանք գնում են հեռակա ուսուցման»:

Նախագահի հաջորդ պահանջն էր՝ խելամիտ ծախսել գիտությունը հատկացվող միջոցները, այլ ոչ թե կառավարությունը վերածել սոցիալ նախարարության: Ռաֆիկ Մարտիրոսյանն, իհարկե, համաձայն է դրան, բայց, մյուս կողմից, կարծում է, որ գիտությունը պետք է լինի կառավարության հովանավորության տակ, ինչպես արվում է զարգացած երկրներում. «Եթե ցանկանում ենք ունենալ գիտելիքի վրա հիմնված հասարակություն եւ տնտեսություն, ուրեմն պետությունը պետք է միջոցներ տրամադրի: Ամենց դրա հնարավոր չէ: Այլ հարց է, որ պետական միջոցներից բացի, մենք պետք է ճանապարհ գտնենք միջազգային գիտական ծրագրերում ընդգրկվելով նյութական միջոցներ հայթայթելու»:

Մարտիրոսյանը խոսեց նաեւ գիտության բարեփոխումների, ակադեմիայի ինստիտուտների նոր տնօրենների եւ այլ հարցերի մասին: «Եթե ասեմ, որ լուրջ արդյունքներ ունենք, այդպես չէ: Ինչո՞ւ, որովհետեւ աշխատանքները կենտրոնացնել Ձեյթունում գտնվող օրգանական քիմիայի ինստիտուտում, բայց ջեռուցման խնդրի պատճառով չենք կարողանում Քանաքեռի նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտը տեղափոխել Ձեյթուն, լաբորատորիաները միացնել եւ այլն: Մեր հաջողված ծրագրերից են ձկնաբանության եւ կենդանաբանության ինստիտուտների միավորումը մեկ կենտրոնում, 90-ականներին որոշ ինստիտուտներում հայտնված ջեռուցման համակարգերի վերանորոգումը եւ այլն»:

Լսագրողները չմոռացան ակադեմիայի նախագահին տալ նաեւ ամենաբաբոլոն հարցը նոա ՊԱԿ-ի գործակալ լինելու մասին: «Ձեմ ուզում մեկնաբանել, միայն մի բան կասեմ: Նիկոլ Փաշինյանը Երեւանի պետական համալսարանից հեռացվել է իմ հրամանով եւ արդեն 14 տարի ինչ ասես մտածում է իմ մասին: Այսքանը»: «Ձեմ ցանկանում որեւէ կերպ հերքել», շարունակեց հարց տվողը: «Ոչ, երբեւէ տեսել եմ, որ ես «Հայկական ժամանակ» թերթում տպագրվածին արձագանքեմ: Բոլորովին»:

Նախագահի եւ ակադեմիկոսի թեյախմությունը դարձել էր օրվա գլխավոր լուրը

Որ երկրի նախագահն ու ակադեմիկոսը կարող են ամեն շաբաթ կամ ամեն ամիս հանդիպել ու միասին թեյել, հասալի գաղափար է: Բայց որ հեռուսատեսությունն ու մամուլը Սերգեյ Համբարձումյանի ծանրակշիռ, ազդու դեմքն ու խոսքը հասարակությանն են հասցնում միայն այն պատճառով, որ նախագահն է պատվել նրան, սա արդեն խոսում է այն մասին, որ մեր հեռուսաշրջիկությունները շարունակում են հրամցնել առաջին հերթին պատշոնական լրատվություն: Մինչդեռ լրատվության արժանին ոչ թե նման հանդիպման փաստն է, այլ հանդիպումից բխած եզրակացությունների մատնավորումը:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Ինչ են առաջարկում Լարիսա Ալավերդյանն ու Արման Մելիքյանը ԼՂՀ հարցով

Խորհրդարանն ընդունեց ԼՂ խնդրի կարգավորման վերաբերյալ ԱԺ հայտարարությունը: Երեկ այդ հարցի շուրջը «Հայելի» ակումբում իրենց տեսակետները ներկայացրին «Ժառանգություն»-ից **Լարիսա Ալավերդյանը** եւ ԼՂՀ նախագահի նախկին խորհրդական **Արման Մելիքյանը**:

Ըստ Մելիքյանի՝ առաջինը Հայաստանը պետք է ճանաչի ԼՂՀ-ն, եւ որոշ շուտ ճանաչվի այդ գործընթացը, այնքան ավելի հեշտ կլինի բանակցային գործընթացում նպատակներին հասնելը. «Իսկ մեր նպատակները պետք է հեռեւյալը լինեն: Դրանք պետք է հստակ ձեւակերպված լինեն որպես հաղթականություն: Արտաքին հաղթականություն մենք չենք ունեցել: Արտաքին հաղթականության մասը կառավարության նոր ծրագրում նշված է չորս տողով: Այսինքն՝ շարունակում ենք մնալ հարաբերությունների մակարդակով: Առաջնային պետք է ճանաչվի ԼՂՀ-ն, հետո նոր տրվի խորհրդարանի հաստատմանը: Այս ծրագրի մեջ հաղթականությունը՝ որպես այդպիսին, ներառված չէ: Այսինքն՝ կարելի է արտաքին տնտեսական հաղթականություն ունենալ առանց արտաքին հաղթականության: Այսպես կոչված հայտարարություն ընդունելը ԱԺ-ում նույնպես որեւէ կերպ չի նպաստելու հաղթականության մակարդակը: Ես «Ժառանգության» նախաձեռնությունը ողջունում եմ այնքանով, որ իշխանության մեջ լինելով ընդդիմության մի հաստված՝ ասում է, որ Հայաստանը անհարգալ պետք է ճանաչի ԼՂՀ-ն»:

Լարիսա Ալավերդյանն իր հերթին նշեց, որ Ղարաբաղը ինքնիշխան պետություն դառնալով արդեն իսկ դարձել է միջազգային հանրության լիիրավ անդամ. «Ընդհանրապես ՀՀ-ում ո՞վ է իրականացնում արտաքին հաղթականությունը: Կա վիճելի մի հարց, եւ վիճելին հաղթականացված մի հարց է. ճանաչել-չճանաչելը հաղթական խնդիր է: Այնինչ պետության կայացումը իրավական մի խնդիր է, որ ես կցանկանայի ընդգծել. ԼՂՀ-ն հենց այն պահից, երբ ինքն իրեն հռչակել է ինքնիշխան պետություն, եւ այդ գործընթացը տեւել է 91-ի սեպտեմբերի 2-ից մինչեւ 92-ի հունվարի 6-ը, միջազգային իրավունքի լիիրավ սուբյեկտ է: Որ ԼՂՀ-ն միջազգային հանրության սուբյեկտ չէ, դա այն է, որ իրեն չեն ճանաչել պետությունները: ԼՂՀ կայացումը անքեր է, դա նշանակում է՝ ՀՀ-ն վաղուց պետք է ճանաչեր ԼՂՀ կայացման լեգիտիմությունը, եւ այսօրվա օրով նրա պատմականորեն կայացած սահմանները»:

Նախագահի նախկին թեկնածու Արման Մելիքյանի խոսքով. «Այստեղ կարելի է երկու մոտեցում ճանաչման առումով դիտարկել: Նախ եւ առաջ, երբ ճանաչվում է հանրապետությունը, առաջին հերթին ճանաչվում է իշխանությունը: Այսինքն, Հայաստանը ճանաչելով ԼՂՀ-ն, պատահար չէ, որ խոսի սահմանների մասին: Ես կողմ եմ, որ ԼՂՀ-ն ճանաչվի ներկայիս սահմաններում, դեռ Շահումյանի ու Գեղարքունիքի հարցն էլ մնա օրախնդիր: Մենք կարող ենք սահմանային խնդիրները լուծել երկկողմ բանակցությունների միջոցով: Սա եւս մեկ անգամ ցույց է տալիս, որ մեր իշխանությունները գոյատեւում են երկակի չափանիշներով՝ մեկ բան ասում ենք, մեկ այլ բան ունենալով մտքում: Այսօր կարեւոր է, թե ինչ դեր է հանձնվում ադրբեջանահայությանը: Իշխանությունների ներկայացրած ծրագրում ընդամենը մեկ հղում կա, որ պետք է շարունակել նրանց ինտեգրումը Հայաստանի հասարակական կյանքի մեջ՝ առաջարկելով նրանց կենցաղային պայմանները: Մենք գիտենք, որ այդ մարդկանց բնակարանային պայմանները ինչպես վատ էին, այնպես վատ էլ մնացել են մինչեւ այսօր: Մենք գիտենք, որ նրանցից շատերը ստիպված եղան լքել Հայաստանը, մնացածն էլ ստիպված եղան ընդունել Հայաստանի հաղթաքիությունը, որպիսիսեւ այլ կերպ Հայաստանը լքել չէին կարող: Հայաստանը ամեն ինչ անում է, որ հայ փախստականի խնդիրը վերանա, հաղթական օրակարգում այդպիսի հարց չերեւա: Այդպես էր նաեւ Նախիջեւանի հայ բնակչության հետ: Քանի մենք հիմա էլ նույնն ենք անում, շարունակելու ենք արտել կիսման եղանակով: Մենք կիսվելով կորցնում ենք մեր հայրենիքը: Մեր հաղթական տիրույթից այսօր դուրս է մնացել ԼՂՀ տարածքներին առնչվող խնդիրների լուծումը: Տարածքների շուրջը ով ասես բանակցում է Ադրբեջանի հետ, բացի ԼՂՀ-ից: Հայաստանը պետք է հրաժարվի ԼՂԻՄ-ը Հայաստանին միանալու 1989-ի որոշումից: Այս հարցով մենք պետք է տարածքային խնդիրը լուծենք»:

ՆԱՐԻՊ ՄՈՒՇԵՂՅԱՆ

Զրպարտագիր Սյունիքի մարզպետի դեմ

Մերօրյա մամուլի որոշ միջոցներում հրապարակվող առաջնին հոդվածներ հար եւ նման են սալինյան շրջանում տպագրված բանավարկությունների եւ հայհոյախոսությունների, որոնք գրվում են «հիմնվելով» բացահայտ կեղծ ու ասեկոսային տեղեկությունների վրա: Լրագրական էթիկայի տարական կանոնները պահանջում են, որ առաջնորդ անձերի դեմ ուղղված «թունոտ» հոդվածներում տեղ գտած «փաստերը» որոշակի ժեսման ենթարկվեն, լսվեն «մեղադրվող» կողմի ներկայացրած փաստերն ու փաստարկումները: Հակառակ պարագայում նմանօրինակ հրապարակումները պարզապես զրպարտագիր են, որպիսի առավելաբար բնորոշ են «դեղին» կամ «բուկվարյան» մամուլի միջոցներին:

Վերջերս մամուլի երկու միջոցներում ուղղակի հրեւալոր կեղծիքների վրա հիմնված, աղաղակող փոխհակասող մտքեր եւ փոխհակասող «փաստեր» պարունակող, բավականին անգրագետ շարադրանքով մատուցված զրպարտագիր տպագրվեց Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի դեմ: Սակն ամբաստանագրի («կլյաուզա») ծայրից ծայր կեղծիք հանդիսանալը, նախ, բացահայտվեց նրանով, որ պարզվեց՝ հոդվածի հեղինակներն ամենեւին Գորիս քաղաքի բնակիչներ, ամուսիններ Գառնիկ եւ Վարդիկ Մաշտոցյանները չեն: Խմբագրություններ հասցեագրած իր վրդովված հերքում-պատասխանում Վարդիկ Մաշտոցյանը նշել էր, որ ամուսինը՝ Գառնիկ Մաշտոցյանը, ոչ ամիս է, ինչ գտնվում է Ռուսաստանում, ինքը զբաղվում է փոքր բիզնեսով, այդ հոդվածի հետ իրենք բացարձակ կապ չունեն եւ որոնում տեղ գտած «փաստերը» բացահայտ սուտ եւ «սարքովի» հերյուրանքներ են մարզպետի հասցեին: Լրատվամիջոցներից մեկը տպագրեց այդ հերքում-նամակը, իսկ արդարությունից շարունակաբար խոսող մյուս լրատվամիջոցը մամուլի մասին օրենքի այդ պահանջն էլ չկատարեց: Խմբագրություններ այցելեցին Սուրեն Խաչատրյանի հետ մարտնչած ազատամարտիկները: Նրանց առաջնորդ վրդովեցրել էր զրպարտագրվ տեղ գտած այն սահող տեղեկությունը, թե, իբր, Ս. Խաչատրյանը չի մասնակցել ազատամարտին: Նրանք իրենց մարտական ընկերոջ պատիվն ու արժանապատվությունը մոռել փորձող այդ զրպարտագրի դեմ հերքող հոդված պահանջեցին տպագրել՝ իրենց ներկայացրած իրական փաստերի հիման վրա, որը հաստատեցին մերժվեց խմբագրատեսերի կողմից: Այսպիսով պարզվեց, որ սալինյան շրջանի ոճով կազմված այդ, փաստորեն, անստորագիր նամակը գրվել է Սյունիքի մարզպետի պատշոնի նկատմամբ ինչ-որ հավակնություններ ունեցող մարդկանց կողմից:

Ազատ մամուլ ասելով ոմանք պատկերացնում են, որ թերթի էջերը պետք է սեւացնեն առանձին մարդկանց հասցեին ուղղված բացահայտորեն անմակարդակ հերյուրանքներով՝ հասատ համոզված լինելով, որ դրանց դիմաց ոչ մի պատասխանատվություն չեն կրելու, քանի որ մեր հասարակության մեջ դեռեւս ընդունված չէ գործող օրենքների շրջանակներում զրպարտություններին արժանի հակահարված տալու սովորույթը: Եվ դա՝ առանձնապես պատշոնյաների շրջանում: Խորհրդային մոտեցման դեմքում՝ արհամարհանքը մամուլում հրատարակվող հոդվածների նկատմամբ, որն արտատպվում է մեր հասարակության մեջ, միայն նպաստում է մամուլի դերի արժեզրկմանը:

ՄԱՐԻՍ ՔՈՐՈՒՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
հրատարակության մասին
Գրանցիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱՐՈՍ ԱԲԵՏԻՔՅԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՒՅՐ ՅԱՐՈՍՅԱՆ / հեռ 529221
Հավատարիմին (գրվարով) / հեռ 582960
Լուսագրության սենյակ / հեռ 581841
Հանձնարար. հասցեներին / հեռ 582483
Շաբաթվա լրահամար ծանուցումներին / հեռ 529353
Հանձնարարական տարածքը «Ազգ» թերթի
Թերթի նիստերի ամբողջական թե մասնակի արտատպումները թույլատր մամուլի միջոցով կամ ռադիոհեռարձակությամբ առանց խմբագրության գրավոր համաձայնության խոցեր արգելվում են համաձայն ՀՀ հեղինակային իրավունքի մասին օրենքի
Նիստերը չեն գրախոսում ու չեն վերադարձնում
Գ. սարով յոլոգանները գրվագրային են, որոնց բովանդակության համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

«Անցյալին ուղղված հսկայ հայացքը ներկան ըմբռնելու, առագան կառուցելու նախապայման է»

Ասել է Բունդեսթագի փոխնախագահ Սյուզաննե Կասները

Ինչպես ամեն տարի, 2008-ին էլ Հայոց ցեղասպանության տարելիցի միջոցառումներ անցկացվեցին Գերմանիայի Դաշնային Հանրապետության զանազան քաղաքներում՝ Համբուրգում, Պոսդամում, Քյոլնում, Մայնի Ֆրանկֆուրտում, Շտուտգարդում, Հյոխբերգում եւ, իհարկե, մայրաքաղաք Բեռլինում՝ հայկական տարբեր կազմակերպությունների կողմից՝ տարաբնույթ բովանդակությամբ:

Ամենաբազմամարդ ձեռնարկները բնականաբար երկուսն էին՝ Գերմանահայոց կենտրոնական խորհրդի Մայիսի 24 հանձնախմբի եւ առաջնորդարանի՝ Մայնի Ֆրանկֆուրտի Ս. Պողոս տաճարում մայիսի 24-ին, ժամը 19-ին հրավիրած հուշ երեկոն եւ Բեռլինի հայ համայնքի Ֆրանսիական մայր տաճարում ժամը 18-ին անցկացված հուշահանդեսը:

Ս. Պողոս տաճարում գլխավոր բանախոսներից Լայպցիգի համալսարանի փիլիսոփայության դոկտոր Գեորգ Մեգլեն ասել է. «Մարդասպանության, առավել ես ցեղասպանության ամեն տեսակի հարաբերականացումը պատճառ է դառնում, որ ոճրագործը խուսանավումի ձեւեր գտնի եւ փորձի խուսափել պատասխանատվությունից: Իսկ Գերմանիան չպետք է մոռանա, որ պատժելի է ոչ միայն ցեղասպանություն արարը, այլեւ՝ աջակցությունը: Իբրեւ ցեղասպանության մասնակից երկիր՝ Գերմանիայի խոսքն ավելի ծանրակշիռ է, քան ուրիշ որեւէ մեկինը: Հետեւաբար՝ Գերմանիան իրավունք չունի լռելու: Շատ երկար լռեց Գերմանիան. առայժմ պատասխանատու չի ընդունել հայոց ցեղասպանությունը: 2005-ի Բունդեսթագի որոշումը, հակառակ իր դրական առաջխաղացման, հայոց ցեղասպանության հսկայ ու բացահայտ ճանաչումը չէ, այլ միայն՝ լռելյայն: Մենք պետք է ազատվենք տարբեր բան մտածելու, բայց ուրիշ բան ասելու բարդույթից: Անհիմն են բոլոր այն պատճառաբանությունները, որոնցով փորձ է արվում հիմնավորելու «ցեղասպանություն» բառի չօգտագործումը խորհրդարանական որոշման մեջ: Որպես գերմանացիներ գիտենք, որ հայերի նկատմամբ կիրառվել է կազմակերպված ցեղասպանություն, պարտավոր ենք այն իր ճիշտ անունով կոչել եւ խստագույնս դատապարտել», եզրակացրել է բանախոսը:

Երաժշտական բաժնում հնչել են Գրիգոր Օսմանյանի (ակորդեոն) եւ Գարեգին Հովսեփյանի (բարիտոն) կատարումները:

Ելույթ են ունեցել նաեւ Գերմանիայի Ազգեսառնական եկեղեցիների միության ներկայացուցիչ դոկտոր Շտեֆան Ռայմերսը, Մայիսի 24 հանձնախմբից Անդրանիկ Ազնավուրյանը, ընթերցվել է ԳԴՀ-ում ՀՅ դեսպան Կարինե Ղազինյանի խոսքը, գերմանահայոց առաջնորդ Գարեգին արեղիսկոպոս Բեկջյանը եզրափակել է հիշատակի երեկոն աղոթքով:

Նույն օրը՝ մայիսի 24-ին Բեռլինի Ֆրանսիական մայր տաճարում կազմակերպված հուշահանդեսում ընդգծվել է պատասխանական Բեռլինի ներկայությունը: Գլխավոր բանախոսը՝ Բունդեսթագի փոխնախագահ դոկտոր Սյուզաննե Կասները իր բավականաչափ հուզիչ ու անկեղծ ելույթը կառուցել է ցեղասպանության հիշատակման ու ճանաչման հարցի վրա կենտրոնանալով: Անցյալին ուղղված հսկայ հայացքը ներկան ըմբռնելու, առագան կառուցելու նախապայման է, ասել է փոխնախագահը:

Տես էջ 4

EXPO-2008

Ընդլայնել հասարակության դատկերացումները ֆինանսական ծառայությունների մասին

Այս նպատակն ունի երկկողմանի մասնագիտացված ցուցահանդեսը

Երեւանում երեկ բացվեց «Ֆինանսներ, վարկեր, ապահովագրություն, եւ առտիճ EXPO-2008» մասնագիտացված ցուցահանդեսը, որը կազմակերպել է «Լոգոս էքսպո կենտրոնը», Հայաստանի կենտրոնական բանկի, էկոնոմիկայի նախարարության, Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների միության, Հայաստանի բանկերի միության, զարգացման հայկական գործակալության աջակցությամբ:

Ինչպես բացման խոսքում նշեց ԿԲ փոխնախագահ **Արթուր Ջավադյանը**, առաջին անգամ Երեւանում անցկացվող այս ցուցահանդեսը նպատակ ունի ընդլայնելու հասարակության դատկերացումները Հայաստանում մատուցվող ֆինանսական ծառայությունների վերաբերյալ եւ իր դրական ազդեցությունը կունենա ֆինանսական համակարգի զարգացման վրա: Այնուհետեւ նա ավելացրեց, որ նման միջոցառումների կազմակերպումը կարեւոր քայլ է ֆինանսական համակարգի թափանցիկության ապահովման եւ ֆինանսական ծառայությունների սպառողների շահերի դատապանության տեսանկյունից: Ըստ ԿԲ փոխնախագահի, այսպիսի ցուցահանդեսները հնարավորություն են տալիս սպառողներին ծանոթանալու ֆինանսական ծառայություններին եւ արտադրանքի լայն տեսականուն:

Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների միության (ՀԱԳՄ) նախագահ **Արսեն Դաբաղյանը** հույս հայտնեց, որ կառավարության ծրագրում ամրագրված՝ Հայաստանը տարածաշրջանի ֆինանսական կենտրոն դարձնելու հավակնությունը մի քանի տարվա մեջ իրականություն կդառնա: ՀԱԳՄ նախագահը նաեւ ցանկություն հայտնեց, որ հաջորդ ցուցահանդեսին ավելի լայն շրջանակներ կմասնակցեն:

Լրագրողների հետ զրույցի ժամանակ, անդրադառնալով Հայաստանում ապահովագրության ոլորտին, Արթուր Ջավադյանը հայտնեց, որ Հայաստանի Կենտրոնական բանկը երկրի ապահովագրական համակարգում փորձում է անել այն, ինչ արդեն արվել է բանկային համակարգում՝ նախ տուկան մարել այսպես կոչված գրպանային ապահովագրական ընկերություններից: Նախկինում գործող 20 ընկերությունների փոխարեն այժմ գործում են 8-ը: Սակայն, ըստ Արթուր Ջավադյանի, այդ ոլորտում գործելու համար բավականին հայտեր են ներկայացվել եւ ներկայումս քննարկվում են երեք ընկերությունների ներկայացրած հայտերը:

Ցուցահանդեսին մասնակցում էին 25 կազմակերպություններ:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՕՐԱԿԱՐԳ

Այսօր

- Ժամը 12.00-ին Ժուռնալիստի տանը ԵՄԱ-ն, «Ինտերնյուսը» եւ Ժուռնալիստների միությունը կազմակերպում են մամուլի ազատության օրվան նվիրված միջոցառում:
- Ժամը 15.00-ին Հրազդան քաղաքի թիվ 10 դպրոցում ԱՄՆ-ի խաղաղության կորպուսը կազմակերպում է «Բառերի հեգում» մրցույթը:

Տեր-Պետրոսյանը եվրոպացիների վրա եւս ծանր մեղքեր է բարդում

1-ին էջից

Ընդհանուր առմամբ կոնգրեսը այստեղ ներկաների նման չմտածող մեկի վրա ճնշող տպավորություն էր թողնում, հանի որ ելույթ ունեցողները խոսելով իրենց տեսլական «ազատանկախ-ժողովրդավար Հայաստանի» մասին՝ հենց սկզբից կարծես բացառում էին բոլոր ուրիշ կերպ մտածողներին, որոնք գոնե վերջին նախագահական ընտրություններին մի հանի անգամ ավելի էին իրենցից: Ֆանատիկների մի ողջ բազմություն էր, կեսն էլ դեռ դուրս մնաց, որովհետեւ դահլիճը փոքր էր նրս մտնել ցանկացողների համար: Ելույթ ունեցողների բնորոշումներում էլ ոչ ահավոր ածականների, ոչ թույնի պակաս կար, չնայած սովորաբար նման բողոքում են իշխանական կողմի թույնից: Մի խոսքով՝ իրենք միակ ճշմարտն են, ամբողջ ժողովուրդն իրենց թիկունքին է, իրենք հարգելու են, պայքար-պայքար մինչեւ վերջ: Ու վերջ: Ուրիշ կերպ մտածողների հերն էլ անիծած: Լավ դեմոկրատիա է, խոսք չկա: Բայց, լավ, ամեն ինչ՝ հերթով:

Տեր-Պետրոսյանը մի հանի թեմայի անդրադարձավ.

Բախում՝, թե տպանդ. մարտի 1-ի իրադարձությունների վերաբերյալ հարցադրումն իրենց էր, բնականաբար նրա վերլուծությունը հարցի պատասխանը բերեց տպանդին, որի ծրագրողն ու կազմակերպիչը, իր բառերով, «վարչախմբի տխրահռչակ պարագլուխ Ռոբերտ Քոչարյանն էր»: Այս եզրակացությանը Տեր-Պետրոսյանը եկել էր վերլուծելով Քոչարյանի հետմարտիկեան 3 ասուլիսների հակասությունները: Եթե ինչպես նախագահ Քոչարյանն էր ասել՝ ոստիկանները ցուցարարներին հայտնել են, թե եկել են միայն խուզարկություն կատարելու, այդ կարծրը իշխանական հեռատաբնկերությունները 100 անգամ ցուցադրած կլինեին: Եթե բանակը գործի չի դրվել, ոստիկանությունն էլ զինված չի եղել, ինչպես որ նախագահն է պնդել իր հարցազրույցների ժամանակ, ինչպես 7 հաղարացի զոհվեցին, հարցնում էր նա: Մարտի մեկի առավոտից հետո, ֆրանսիական դեսպանատան մոտ մարդկանց հավաքվելուց եւ ժամը 14-ից հետո, Տեր-Պետրոսյանի խոսքով՝ ինքը երեք անգամ բանակցել է նախագահ Քոչարյանի հետ Հայաստանում եվրամիության դեսպանների միջոցով, Դավիթ Շահնազարյանին եւ Արարատ Զուրաբյանին խոսափող ունենալով: Տեր-Պետրոսյանը պետք է գնար եւ հանդիսատեսներ ցուցարարներին, բայց՝ «ես Դատարկ ձեռքով չեմ կարող գնալ, ինձ կսպանեն, այլընտրանք էր պետք», եւ այլընտրանքը նորից «Ազատության» հրապարակ մարդկանց տանելն էր, ու... արդեն ամեն օր տանելն էր: Բայց, ախր, արդեն առավոտյան մարդիկ էին վիրավորվել, դժբախտությունն օրում կախված էր, ինչ դատարկ ձեռքեր, ինչ սուրբ, մարդկային կյանքերի մասին էր խոսք գնում, ու Դում, որպես երկրի նախկին ղեկավար, շատ լավ գիտեիր՝ ինչ կարող է լինել: Չէ՞ որ Դում էլ հենց ցույց ճնշելու փորձն ունեիր եւ գիտեիր, թե պետական մեքենան այդպիսի դեպքերում ինչպես է վարվում: Ու ես, հասարակ հաղարացիս, դատապարտում եմ ամեն իշխանության ձգտողի, ով թեթեւ ունի մարդկային կյանքի վրա, միայն թե իշխանության գա:

Տեր-Պետրոսյանը պնդում է, որ ընդդիմությանը հենց այս սցենարով ճնշելու փորձն իշխանությունը շատ ավելի վաղ է պլանավորել՝ ապացույց որպես նշեց փետրվարի 21-ին Քոչարյանի կողմից ցույցերը իշխանությունը զսպելու կոչ անվանելը, իսկ փետրվարի 24-ին հարուցված քրգործը, որեղ ենթադրյալ իշխանության յուրացման փաստ գտնելով «Սիկոլ Փաշինյանը, Մյասնիկ Սաֆարյանը, Սասուն Միհայլյանը, Հակոբ Հակոբյանը, Պետրոս Մակեյանը եւ մյուսները» («Մյուսները՝ այսինքն դրմ, 3 մլն», մանրեց Տեր-Պետրոսյանը) փետրվարի 24-ին գնել են իրենց հետագա գործունեությունը: Մի խոսքով՝ սպանդ, որպեսզի Տեր-Պետրոսյանը, հրաման արձակելու դատապարտանատուն էլ Ռ. Քոչարյանն է, իսկ Սերժ Սարգսյանը թեեւ ֆորմալ առումով հրաման արձակելու հետ կապված չէ, բայց դատարանը էր թույլ չտալ եղածը որպես ընտրված նախագահ: Բացի այդ՝ վերջինս լավ հնարավորություն ունի հասարակությանն ապացուցելու, որ դատապարտանատ չէ թափված արյան համար, եթե եխխվ բանաձեւով առաջարկվող անկախ հետաքննությունն իրականություն դարձնի: Այլապես հազար տարի էլ անցնի՝ նա նույնական մեղավոր կդիտվի մարտի մեկի համար, որեղ Ռ. Քոչարյանը:

Արեւմուտքի վերաբերմունքի մասին. Տեր-Պետրոսյանը ինչպես եւ առաջ, մի լավ ինքնադատեց Եվրոպայի խորհրդին եւ ԵԱՀԿ-ին, որոնց հանդեպ ոչ միայն Հայաստանը պարտավորություններ ունի, այլեւ նրանք պարտավորություններ ունեն Հայաստանի հանդեպ: Տեր-Պետրոսյանին հատկապես զայրացրել էր դիտորդական առաքելության զեկույցի «Ընտրությունները հիմնականում անցան ԵԱՀԿ-ի եւ Եվրախորհրդի սահմանած պարտավորությունների ոգով...» ձեւակերպումը. «Չլիներ այդ նախադասությունը՝ չէր լինի մարտի 1-ը», եվրոպացիների վրա եւս ծանր մեղքեր բարդեց Տեր-Պետրոսյանը: Թվացյալ խիստ, բայց «դատարկ եւ անդատապարտանատ» եվրոպական հայտարարություններով, որոնք առվում էին խաղաղական նկատառումներով եւ երկակի սանդարտներով՝ եվրոպական կազմակերպությունները իրենց վստահությունը կորցրին հայ հասարակության մեջ եւ այդ վստահությունը մասնակի կվերադարձնեն, եթե վերահսկեն մարտի 18-ի եխխվ-ի բանաձեւի կատարումը: Առհասարակ՝ նա եվրոպային անվանեց անհոգի:

Հասարակության դատակնռնմ, թե միավորում. այս հարցը Տեր-Պետրոսյանը դրեց տարբեր ամբիոններից հնչող երկխոսության թեմային անդրադառնալիս: Ըստ նրա՝ ահռելի վիր է ժողովրդի եւ կեղծիքներ իրականացրած մի խումբ փոքրաթիվ մարդկանց միջեւ: Այնուամենայնիվ՝ նույնիսկ այս դեպքում Տեր-Պետրոսյանը չբացառեց երկխոսության հնարավորությունը, ճիշտ է՝ նա կրկին պնդեց եխխվ-ի դահանջների կատարումը, որ նաեւ իրենց նախադայմաններն են՝ հարբանտարկյալների ազատում, անկախ հետաքննության իրականացում: Ըստ նրա՝ իրենց ընկերներին դատանդ են դահում բանտերում, նրանց դիմաց իշխանությունը փրկագին է ուզում, բայց մեկ է, իրենք ենթի չեն գա:

Ասենք, որ ինչպես եւ առաջներում, Մելիք-Ադամյան-2 կառավարության նիստերի դահլիճը լցված էր ազդեցիկ, ողջ էությամբ Լեւոնին տված մարդկանցով, նրանք, օրինակ, հետաքրքրվում էին, թե լրատվամիջոցներից ովքեր էին ներկա՝ սպառնալով դատասան տեսնել կոնգրեսի մասին «բարսուբեսակ» գրող լրագրողների հետ՝ դիտորդության անգամ չդիմանալով, որ իրենց դահելաձեւն իրենց «տեֆի»՝ գոնե ամբիոնից ասածների մեջ չի տեղավորվում: Այս սպար շարքը, որոնց ածեցրել է հենց Տեր-Պետրոսյանը, երեւում է, հետագայում գլխացավանք են դառնալու հենց իր համար, չնայած վերջինս խոստացած է ընդհանրապես գործել օրենքի շրջանակներում:

Ի դեմ, Տեր-Պետրոսյանը երեկ երկու ժողովրդահաճո դիմում հղեց. մեկն առ ԱՄՆ կառավարություն եւ «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրի ղեկավարություն, որպեսզի նրանք տնտեսական դատժամիջոցներ չկիրառեն Հայաստանի հանդեպ, հանի որ դրանից հասարակ ժողովուրդն է տուժելու: Մյուսն առ Ադրբեջան՝ եթե Դարաբաղի հանդեպ ռազմական ոսնձգություն իրականացնի, հայ ժողովրդի միահամուռ դիմադրությանը կհանդիպի, այդ դիպքի վտանգի դեպքում իմն էլ կդիմի իր կողմնակիցներին ժամանակավորապես դադարեցնելու պայքարը եւ լծվելու հայրենիքի պաշտպանության գործին:

Կոնգրեսի մասին մեր տեղեկատվությունն ամբողջական չի լինի, եթե Տեր-Պետրոսյանին աջակից քաղաքական ուժերից գոնե մի հանիսի ղեկավարների ելույթներից մեջբերումներ չանենք:

ՀԺԿ, Ստեփան Դեմիրճյան. «Ընտրությունների արդյունքում առաջացած ճգնաժամը պետք է հաղթահարվի նոր ազատ ու անկախ ընտրությունների անցկացմամբ»:

ՍԴՀԿ ատենապետ Լյուդմիլա Սարգսյանը խնդիր տեսավ՝ վերականգնել սահմանադրական կարգը նոր նախագահական ընտրություններով:

Մարխիս Դավիթ Հակոբյան. «Աղյուսա՝ ընդդիմությունը, աղյուսա-ակցաբրյուսա, գոռոսյու կարելի է ասել...»

«Ժառանգություն», Վարդան Խաչատրյան. «Ազատության ճանը միշտ էլ ցողվում է բռնատեսների արյամբ... միասին ողջունելու ենք ազատության առեւծազը Հայաստանում»:

«Հանրապետություն», Սրամ Սարգսյան. «Ունենք երկու՝ իրար հակադիր Հայաստան: Այսօր խնդիր ունենք սեղծելու երրորդ՝ սանց հանդիսարը, մեկ միասնական Հայաստան»:

Սուրեն Հարությունյան. Ի վերջո մենք պիտի դառնա՞նք ժամանակակից քաղաքակիրթ պետություն

- Պրն Հարությունյան, կուզենայի իմանալ Ձեր կարծիքը Հայաստանում տեղի ունեցած վերջին իրադարձությունների կապակցությամբ:

- Սոցիալական անբավականությունը վաղուց էր հասունացել Հայաստանում եւ դրա պոռթկումը կանխատեսելի էր, ավելի ճիշտ՝ անխուսափելի: Կաբալիզասորի դեր խաղացին նախագահական ընտրությունները, որ շատերն ընկալեցին որպես անարդարացի ու կեղծված: Սակայն, կարծում եմ, իշխանության ու ընդդիմության անողոք բախման գլխավոր պատճառն այն է, որ հանրաքվեության բնակչության մեծ մասն ապրում է չքավորության պայմաններում, մինչդեռ իշխանական ընտրախումբի ներկայացուցիչներն ու նրանց մերձեցված սահմանափակ թվով ընտանիքներ տնօրինում են երկրի ազգային հարստությունը, իրենց զգում են որպես պետության տիրակալներ եւ վստահ են իրենց անպատժելիության մեջ, մենաշնորհ են վայելում տնտեսության շահութաբեր ճյուղերում, ներմուծման ու արտահանման մեջ եւ այլն: Խոր զայրույթ էին առաջացնում ամենակոպիտ կոռուպցիան, կաշառակերությունը, իշխանավորների կամայականությունը: Ժողովրդի նկատմամբ արհամարհանքը հասել էր իր բարձրակետին՝ ցինիզմի: Պարադոքսն այն է, որ հայաստանցին դժգոհում է ոչ այնքան իր վատ կյանքից, որքան իշխանության անարդարությունից:

Չտեսնել ու չկանխատեսել դժգոհության պայթյունը կարող էին միայն նրանք, ովքեր պարզապես դա չէին ուզում տեսնել: Հետեւանքն ակնհայտ է՝ արյունահեղություն, տարանջատվածություն, խոր հուսահատություն ու հիասթափություն:

- Ավարտվեց Ռոբերտ Քոչարյանի նախագահական ժամկետը: Ինչպե՞ս կգնահատեիք նրա տասնամյա կառավարման շրջանը:

- Քոչարյանը Հայաստան եկավ Ղարաբաղից: Բայց այստեղ այլ էին գործունեության մասշտաբները ու պատասխանատվությունը, շրջադիրը: Կարծում եմ, նրա մեջ կային տեփական անվստահության կոմպլեքսներ, եւ նա այդպես էլ չկարողացավ հաղթահարել դրանք իր կառավարման տարիներին: Ինքնադարձիակման, ժողովրդի հանդեպ մտավախության զգացումները կղզիացրին նրան, նրան չհաջողվեց անձնական ճիշտ մեջ մտնել այդ հանրության հետ, անկարելանդ զուգել նրա հետ: Անջրպետը անարդար իրողությունների բերումով գնալով խորացավ եւ վերածվեց հաստատած դժգոհության, ողբերգական բախման ու զոհերի: Գիտեմ, մեր ժողովուրդը միշտ էլ առանձնակի ուշադրությամբ է հետեւում իր ղեկավարի գործողություններին, պահվածքին, վարքին: Գուցե դա փոքր ժողովրդին բնորոշ հատկանիշ է՝ ամեն ինչ աչի առաջ է:

- Ձեր նշած խառնվածքով անձինք հաճախ են հակվում դեպի իշխանության ավտորիտար ձեւերը:

Հայաստանում ստեղծված ներկայիս բարդ իրավիճակը եւ դրան նախորդած ողբերգական իրադարձությունները չեն կարող չհուզել ոչ մի հայի հայրենիքում թե սփյուռքում: Այսօր մենք զուգում ենք մի մարդու հետ, որը եղել է մեր հանրապետության ղեկավարը նրա նորագույն պատմության շատ ավելի դժվարին ու հակասական ժամանակներում:

Մեր հյուրն է Հայաստանի կոմկուսի կենտկոմի նախկին առաջին քարտուղար Սուրեն Հարությունյանը: Ավելորդ է ասել, որ նրա ոչ բոլոր գնահատականներին ենք համաձայն:

- Հայ հաղթական կյանքին խորթ «կլան» հասկացությունը իրողություն դարձավ Քոչարյանի ժամանակ: Խնդրում եմ ինձ ճիշտ հասկանալ, ես բնավ էլ հակված չեմ սպեր գցելու Քոչարյանի որոշ գործունեության վրա: Քավ լիցի, առկա են նաեւ հաջողություններ: Սակայն գուցե անաչառ լինենք: Անկախ Հայաստանի երկրորդ նախագահը ժառանգություն թողեց կոռումպացված, կլանային-օլիգարխիական տեսություն, որտեղ, ինչպես ասվեց, քարուսների ցինիկ ճոխության ֆոնի վրա փաստորեն կոնսերվացվել է բնակչության մեծ մասի թշվառությունը: Գործազրկությունը դարձել է չարիք, աշխատավարձը ողորմելի է, գյուղերը թշվառ վիճակում են, հասարակությունը երկփեղկված է, հայաստանցիների գերակշիռ մասը գոյություն է պահպանում սփյուռքի ու դրսում աշխատող իրենց բարեկամների օգնության շնորհիվ: Եվ դեռ խոսում են տնտեսական «աներեւակայելի» հաջողությունների մասին... Ինչի՞ մասին ենք խոսում, երբ անբավականություն ու դժգոհություն է հայտնում նաեւ համեմատաբար բարեկեցիկ խավը:

Նույնիսկ այնպիսի մի համազգային խնդրում, ինչպիսին Ցեղասպանության ճանաչումն է, ավելի շատ պարտական ենք սփյուռքին, քան հայ պետական վերնախավին: Մենք փաստորեն այդպես էլ չկարողացանք ազգային ինքնիշխանությունից օգտվել համաշխարհային ճաշտաբով հայության համախմբման նոր որակի անցնելու համար:

- Պրն Հարությունյան, Դուք հանրապետության ղեկավարն էիք խորհրդային Միության քայքայման խելահեղ տարիներին: Գումարած աղետաբեր երկրաշարժը, ղարաբաղյան շարժումը, հանրահավաքները, ցույցերը, գործադուլները, հացադուլները: Այնուամենայնիվ, ի տարբերություն հարեւան Ադրբեջանի ու Վրաստանի, հաջողվեց խուսափել եղբայրասպան երկպառակությունից ու զոհերից: Գուցե վերհիշեքք ինչ-որ տեղ ներկա իրադարձությունները հիշեցնող այն ժամանակները:

- 1988-ի սեպտեմբերին երեւանում համանման իրավիճակ էր ստեղծվել, եթե չասենք՝ ավելի բարդ: Թաղերական հարարակը նույն ձեւով օդակված էր միտինգավորներով: Ցնորանանք, որ այն ժամանակ Հայաստանը տակավին անկախ չէր եւ իսկայական ճնշում էր գործադրվում ինձ վրա: Մայրաքաղաքում էին գտնվում խորհրդային ուժային կառույցների ղեկավարության բարձրաստիճան ներկայացուցիչներ: Նրանց մասնակցությամբ որոշում ընդունվեց մարել առեղծեսական ժամանակ «գերեվարված» հարարակը: Նախատեսված էր գործողությունն իրականացնել առավոտյան ժամը 5-ին, եւ այդ նպատակով երեւան էին բերվել ԽՍՀՄ ՆԳՆ-ի համապատասխան ուժեր: Կես գիշերին ինձ մոտ կանչեցի միութենական ներքին գործերի նախարարի տեղակալին, որը պիտի ղեկավարեր գործողությունը, եւ խնդրեցի անձամբ լինել հրապարակում ու տեղում ուսումնասիրել իրավիճակը: Երբ նա վերադարձավ ու ներկայացրեց ինձ իրողությունը եւ թե ինչպես են իրենք պատասխանում գործել, զգացի, որ այդ չարագուշակ ծրագրից արյան հոտ է փչում: Թող վերամբարձ չինչի, իմ խիղճը թույլ չէր տա թափել հայրենակցիս արյունը: Եթե հանրահավաքներում որոշ անձինք իրենց թույլ էին տալիս ինձ անվանել ազգի դավաճան, արդա հակառակ պարագայում ես արդեն ազգի «դահիճ» կդառնայի: Սակայն հարցը զգացմունքային ձեւակերպումների մեջ չէ: Ծանր, հոգեմաշ օրերի եւ ամիսների ընթացքում մեզ այնուամենայնիվ հաջողվեց խուսափել արյունահեղությունից ու զոհերից: Մենք անմիջական երկխոսության մեջ մտանք նաեւ ՀՀՇ-ի ղեկավարների, մյուս ընդդիմադիր ուժերի հետ, ինչը դրական արդյունք տվեց:

- Լեւոն Տեր-Պետրոսյանի «հայտնությունը» հեղաշրջեց հանրապետությունը եւ իշխանություն-ընդդիմություն հարաբերությունը դարձրեց անզիջում: Դուք ելք տեսնո՞ւմ եք այդ հակամարտությունից:

- Ես դեմ եմ միակողմանի մոտեցումներին, թեեւ, գիտեք, Լեւոնն ինձ համար բնավ էլ հայտնություն չէ: Բայց ելեք, ինչպես մեր ժողովուրդն է ասում, ծուռ նստենք, շիտակ խոսենք: Քոչարյանի ժամանակ կար միայն, թող կողմից չինչի, ճնաս ընդդիմություն, որը զարգացնեց Տեր-Պետրոսյանի շնորհիվ: Նրան հաջողվեց զգալի չափով համախմբել Հայաստանի խոր անբավականությամբ համակված էլեկտորատը: Իշխանության համար դա այնքան անակնկալ էր ու անհավատալի, այնքան էր նա հարմարվել իր պարարտ-փափուկ կյանքին, որ արձագանքեց ծայրահեղ հիվանդագին կերպով: Ինձ մինչեւ հիմա էլ զարմեցնում է, թե ինչ խոր լռությամբ էր Քոչարյանը պատասխանում անօրինականությունների ու անարդարությունների վերաբերյալ Տեր-Պետրոսյանի հրապարակային հարցաքննություններին: Մինչդեռ իշխանությունն իրոք ուժեղ է, երբ գործում է ուժեղ ընդդիմության հակազդեցության մրցակցային պայմաններում:

Խոսում են դեմոկրատիայի մասին: Իսկ ինչպե՞ս միակողմանի էին հիշյալ իրադարձությունների մեկնաբանումները Հայաստանի հեռուստատեսությամբ, երբ ջրի պես պարզ էր, որ երկու կողմն էլ մեղավոր են: Պետք է սովորել խոսել ընդդիմության հետ: Թերեւս հաստկնշական է, որ Սերժ Սարգսյանն իր հարցազրույցներից մեկում ընդունեց իշխանությունների մեղքի բաժինը:

Հայաստանը կարիք ունի միասնության: Իմ խորին համոզմամբ, մենք պետք է հրաժարվենք հետաքրքրություններից, ձերբակալություններից, դատավարություններից: Ինչքան շուտ, այնքան լավ:

- Որպես 45-ամյա քաղաքական ու դիվանագիտական փորձ ունեցող պետական այր ինչ կմաղթեիք ձեւավորված նոր իշխանություններին:

- Հայաստանում ասում էին, որ Սերժ Սարգսյանի գահակալությունը կդառնա Ռոբերտ Քոչարյանի նախագահական երրորդ ժամկետը: Սա վարկաբեկիչ պիտակ է նոր ղեկավարի համար եւ նա պիտի անի ամեն ինչ դրանից ձերբազատվելու համար, եթե ուզում է վերականգնել իշխանության հարգը: Նա առաջին հերթին իրեն պիտի շրջապատի ոչ միայն պրոֆեսիոնալ առումով պատրաստ, այլեւ բարոյապես չարատավորված մարդկանցով: Թեեւ կադրային առումով ժառանգությունը շատ սուղ է: Ինձ թվում է, օրինակ, որ հաջող է նոր վարչապետի, արտգործնախարարի ընտրությունը: Հույս է ներշնչում նոր անունների առկայությունը կառավարության կազմի մեջ:

Երկրի զարգացման ներկա մոդելը պետք է հիմնովին արդիականացնել, դեմոկրատական ու քաղաքացիական հասարակությունները վերջապես պետք է իրենց արժանի տեղը գրավեն հայ հասարակության մեջ: Ի վերջո մենք պիտի դառնանք ժամանակակից քաղաքակիրթ պետություն՝ իշխանության իրական բաժանումով, անկախ ընտրական համակարգով, ինքնուրույն լրատվամիջոցներով:

Հարցազրույցը վարեց
ՌՈԲԵՐՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Հ.Գ. (Թղթակցի կողմից)- Երեւի մեծ կուսակցություն չէր պահանջվում Հայաստանի նախկին ղեկավարին հրավիրելու նոր նախագահի երդմնակալության արարողությանը:

«Անցյալին ուղղված հսկայական հայացքը ներկան ըմբռնելու, ապագան կառուցելու նախապայման է»

3-րդ էջից

1915-16-ին մեկ միլիոն հայեր սպանվեցին՝ դիտավորությամբ ու հաշվենկատ: Թուրքական պետության սանձազերծած բռնությանը մասնակցում էին հեղինակավոր ներկայացուցիչներ, ովքեր տեղահանությունների ու ձերբակալությունների էին իրականացնում: Տիկին Կաստները ազդու ետեսով է ձեակերպել իր պահանջը՝ հիշեցնելով Եվրոխորհրդարանի նախագահությունները՝ Թուրքիայի ԵՄ մուտքը պայմանավորել ժամանակակից Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումով, ինչպես նաեւ անդրադարձել է Հայոց ցեղասպանությունը որպես ցեղասպանություն կոչելու ԱՄՆ Ներկայացուցիչների պայքարի արտաքին հանձնաժողովի որոշմանը: Ելույթ է ունեցել նաեւ Բեյրութում ՀՅ դեսպան Կարինե Ղազինյանը: Ընդգծելով, թե 2005-ին Բուդապեշտի ընդունած բանաձեւը հուսալի հայլ էր եւ պետք է հետեւողական զարգացում ունենա, տիկին Ղազինյանն ասել է, թե գերմանա-հայկական հարաբերություններն օրինակելի կարող են լինել թուրք-հայկական հարաբերությունների համար: Ողջակիզման պատասխանատվությունը գերմանական ինքնության ամուր բաղադրիչն է, իսկ Իսրայելի անվտանգության հանդեպ սանձազերծած պատասխանատվությունը Գերմանիայի հաղթականության հիմնադրույթը: «Հայաստանի ու Թուրքիայի համար նշանակալի չէ այդ ճանապարհի սկիզբն իսկ, բայց, իմ կարծիքով, ժամանակն է դրա սկիզբը դնելու», գերմաներեն իր ելույթում հստակ ձեակերպել է Բեյրութում ՀՅ դեսպանը՝ ետեսելով նաեւ, թե անհիմն են հայկական սփյուռքը ազգայնամոլ ներկայացնելու փորձերը:

Ֆրանսիական մայր տաճարում, ուր ներկաներն ունկնդրել են Մելինե Պողոսյան-Բյուլուի ղեկավարած հայ հանդիսի երգչախմբին, հանրահայտ դաշնակահար Վարդան Մամիկոնյանին, խոսք են ասել նաեւ Նացիոնալ-սոցիալիզմի պատմության փաստագրական կենտրոնի ղեկավար, Սիաբնկչության տեղագրություն հիմնադրամի տնօրեն ռաբբի Անդրեաս Նահաման, Բեյրութի հայ համայնքի ներկայացուցիչ Վարդան Այանամը: «Ցեղասպանությունը մի ոճրագործություն է, որ հասարակության բոլոր շերտերին է վերաբերում, բոլոր սերունդներին ներառում՝ առանց տարբերության ու բացառության, ճանշի, ով ոճրագործության անմիջական դեռակատար չէ, հանդիսատեսի դերում է: Բայց մի՞թե այս ծավալի զանգվածային տեղահանության դեմոքում հնարավոր է միայն դիտող լինելու մասին խոսել, երբ յուրաքանչյուրն ականատես է դառնում», հարցրել է Վարդան Այանամը՝ դատապարտելով թուրքական ժխտողականությունը որպես ցեղասպանության մեջ սեփական մեղքը պարտակելու յուրօրինակ ոճիր: Պարոն Այանամի խոսքերով, ցեղասպանություն իրագործողները վստահ են, որ ականատեսները համամիտ են իրենց գործողություններին: Ավելին՝ գաղափարախոսական նոպայակներով նրանք գիտակցաբար իրենց բարդի ակտիվ մասնակիցն են դարձնում՝ մինչ այդ այսպես կոչված լուռ «դիտորդն»: Ցեղասպանը ամենեւին չի սառափում իր զոհի դիմադրությունից, այլ միայն՝ «դիտորդի» միջամտությունից: Ուստի, ըստ պարոն Այանամի, ցեղասպանության պարագայում ականատեսները եւս չեն կարող անպատասխանատու մնալ: Պատմական Թուրքիայի կողմից հայերի ցեղասպանության ուրացման դիտորդման հանդեպ միջազգային հանրության՝ մարդկության դեմ գործած այս ոճիրը ճանաչելու եւ դատապարտելու փոխարեն այսօրվա անարդար լռությունը եւս նրանց կոչին հանդուրժող «դիտորդի» է վերածում:

Տարեցտարի ԳԴՀ հասարակական լայն շրջանակների ներկայացուցիչների աճող մասնակցությունը հիշատակի արարողություններին վկայում է, որ Հայոց ցեղասպանությունն իր առանձնահատուկ ու հատուկ տեղն ունի դաշնային հանրապետության հիշողության մակարդակի մեջ իբրեւ 20-րդ դարի եվրոպական պատմության կենտրոնական փորձառություն, ուրեմն եվրոպական հիշողության մակարդակի անփակելի բաղադրիչ լինելու իրավունքն ունի, մեր զուգում նկատել տվեց Բոխումի Սփյուռքի եւ ցեղասպանություն ինստիտուտի տնօրեն դոկտոր Միհրան Դաբաղը:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

3 ՄԱՅԻՍ 2008 ԷՋ Ա

ԱԶԳ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ատոռումներ Մելգոնեան բարեռարներու օրուան առիթով

ԱԳԱՊԻ ՆԱՍԻՊԵԱՆ-ԷՔՄԵՔՃԵԱՆ
Պատմաբան-աղբյուրագետ, ՄԿՀ նախկին տնօրեն

Սբ. Յուլիանոս Կառաղեցի տօնին առիթով, Մելգոնեանցիներ, ի սփիւռս աշխարհի, սրբազան աւանդութեամբ մը, կը խոնարհին իրենց պաշտելի բարեռարներուն՝ Գրիգոր ու Կառաղեց Մելգոնեան եղբայրներու յիշատակին առջեւ ու կուխտեն հաւատարիմ մնալ անոնց ոգիին ու գործին:

Այս տարի եւս, աւանդական հոգեհանգստեան արարողութիւն տեղի ունեցաւ Նիկոսիոյ Սբ. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, ուր տէր Մոմիկ քահանայ Յարութեան յատուկ պաշտօնի մի խանի խօսքով վեր առաւ գործը ազգային մեծ բարեռարներուն: Սովորութիւն էր անցեալին, որ Մելգոնեանի աւարտական դասարանի սանսանուհիները հաղորդութիւն առնէին ու վերանորոգէին իրենց ուխտը Մելգոնեանի ոգիին: «Բանակը ճաշակ կառնէ այս գիտեր» ըսեր էր մելգոնեանցի ընկերուհի մը մի խանի տարիներ առաջ, մեջբերելով Թէքէեանի ծանօթ տողը: Հիմա... չկան աշակերտները ու չկայ այդ աւանդութիւնը:

Հոգեհանգիստէն ետ, «Այլաձայի կիմնազիոն» ցուցասախսակին առջեւէն անցնելով կուտդուտնի Մելգոնեանի հողասարածի, դէմի Բարեռարներու դամբարանը, ծաղկեփունջերով: Բաւական մեծ թիւ մը մելգոնեանցիներու ու բարեկամներու եկած է հոն՝ հաւաքաբար խոնարհելու զոյգ եղբայրներու յիշատակին առջեւ:

Անձի մը յիշողութեան կորուստը՝ մահ կը նշանակէ: Կը մխիթարուիմ, որ անտարբերութեան մեր օրերուն՝ տակաւին մեր հասակակ յիշողութիւնը չէ կորսուած բոլորովին:

Լուռ է ամէն կողմ: Ջոյգ շէմերը Մելգոնեանի՝ մենակառոյց ու վեհաշուք, անշշունչ կը նային իրենց հիմնադիրներու արձաններուն: Ոչ հայ աղջիկներու ու տղոց եռուզեռը, ոչ անոնց ուրախ կամ տխուր բացագանչութիւնն ու ոտոչտուը, ոչ ալ մայրենի անոյշ լեզուով ճվլտոցը կայ հիմա:

Խոնարհած են շատերու այտերը: Անսահմանօրէն տխուր ու ցաւած ըլլալու են նաեւ հոգիները բարեռարներուն:

Մելգոնեանի վաստակաշատ ուսուցիչ Մրմ Սեթոյտ Աբգարեանի առաջնորդութեամբ կաշխատիմ երգել Տէրունական աղօթքը, ի Վերին Երուսաղէմ եւ... Մելգոնեանի հայրերը: Պրն. Աբգարեան կը փղձկի...

«Փառ ու պատի՜ն յաւիտեան,
Լուսոյ անբէգ վառարան՝
Կրթարանին Մելգոնեան՝
Փառ ու պատի՜ն յաւիտեան...»

Կը հեռանամ դամբանէն ծանր տրամադրութեամբ: Մի խանի հոգի կը հետեւիմ պրն Աբգարեանին, որ կուտդուտի դէմի ետեւի շրջաբակին արձանները: Արձաններէն ոմանք սրբադրուած են ու փորձեր եղած՝ զանոնք մարելու:

Մուխէս խորենացիի աչերուն մէջ բիբեր շինուած են՝ սեւով ներկուած: Կոմիտասի ձախ ականջին մէջ վառագոյն ձիւթ մնացած է, իսկ բերանին վրայ՝ ճերմակ ներկ: Ջորավար Անդրանիկին աջ ականջը կարմիր ներկուած է, իսկ Թէքէեանի աջ ականջը՝ կապոյտ: Փորձեր եղած են ներկերը մարելու:

Գեղագէտի բծախնդրութեամբ ու հարազատ մելգոնեանցիի զգացումով ու գուշտանովով, պրն Աբգարեան կաշխատի մարել ներկերն ու ձիւթը եւ դիտել կու տայ, որ նախապէս եղած սրբագրումի փորձերուն հետեւանքով Անդրանիկի եւ Թէքէեանի արձանները կոռնոցուած են իրենց հաստաչափութիւնը:

Ճնշուած է սիրտս: Շտապ ու անզգայացած եմ: Այլանձայի կիմնազիոնի աշակերտները ազատորէն խաղացած են, ըստ կամս, այս արձաններուն հետ: Շա՛տ զգացական եմ: Կարելի է մտածել, թէ արձաններու սրբադրումը պարզապէս աշակերտական չարաճճիութիւն է: Թէ՛ Մելգոնեանը փոխ տուած է Այլանձայի կիմնազիոնին միայն մի խանի տարուան համար...

Վերջը՞... վերջը՞ սակայն...

Ինչ պիտի ըլլայ այս հողասարածը: Որո՞ն կամ ո՞ր օտարներուն ձեռքը պիտի անցնի ան: Բայց հողասարաժ չէ՛ ասիկա, սովորական դաշտ կամ արտ... այլ սրբավայր... նշխար մը մեր պատմութենէն ու վկայութիւնը մեր պատմութեան:

Հոս անցուցած է մաս մը իր կեանքէն բարեռար Կառաղեց աղա Մելգոնեան, որ մինակ մնացած շատ հայ որբերու համար եղած է «միակ հայրիկը», զոր երբեքիցէ ճանչցած են (Թ. Տէլլեթեան, Ողջոյն, Կեանք, 2007, էջ 298):

Հոս, Լիմասոլի ճամբուն վրայ կը գտնուի հայ որբերուն որբ ձեռքերով տնկուած պուրակը: Հիմա, Մելգոնեանի փակումէն ի վեր, ամէն անգամ, որ անցնիմ այս տեղէն, չեմ կրնար չշշնջել...

«Մեռելներուս որդէս խաչ
Ես այս ծառը տնկեցի...»

Հոս մանչն առած է մեր ամէնէն վեհորէն նպատակասլաց բարեռարութիւններէն մէկը, Մելգոնեան կրթական հաստատութիւնը՝ մեր ցեղասպանութեան ազնուագոյն վրէժը:

«Իմ դպրոցը պէտք է մեր վրէժը լուծէ... այդ որբ ծագումներն պէտք է պատասխանեն մեր նոր մեծերը» («Յուսարար», 15 մայիս, 1982, էջ 5):

Թուրք հայութիւնը բնաջնջելու իր մտադրած ծրագիրը սկսեր էր մեր մտատրականներուն, մեր բառ ու բանի նուիրեալներուն ոչնչացումով: 1911 հոկտեմբերին իսկ, երիտթուրքերու մէկ գաղտնի ժողովին որոշում կայացեր էր, թէ կայսրութեան փոքրամասնութիւնները կրնային «պահել իրենց կրօնը, բայց ոչ իրենց լեզուն» (Վահագն Տատրեան, Warrant For Genocide, 1999, էջ 96): Ուրեմն, ժողովուրդ մը ոչնչացնելու ու չեզնելու հզօրագոյն միջոցը գայն զրկել էր մայրենի լեզուէն: Տեղին բնագրական իմաստութեամբ ու հեռատեսութեամբ՝ բարեռար Մելգոնեան ու իր խորհրդատուները եղակացուցեր էին, թէ գոյատեւումի ու վերադրումի հզօրագոյն եռաքիմիը պիտի ըլլար, ուրեմն, հայ դպրոցի մէջ պատասխան նոր սերունդ մը, որ ըլլար տէր մեր լեզուին ու մշակոյթին: Եթէ բնաջնջումին փորձեր էր հայութիւնը զրկել իր մարդոյժէն, իրենց դպրոցն ալ պիտի փորձէր հայութիւնը յաւերժացնել հայ մարդոյժ պատրաստելով հայ դպրոցին մէջ:

Հոս, այս հողասարածին վրայ իրագործուած է մեր ժամանակի մեծագոյն բարեռարութիւններէն մէկը, շուրջ 600,000 անգլ. ինչուն ոսկիի իշխանական նուիրատուութիւն մը, որուն շնորհիւ «Մելգոնեանը պիտի կարենար շարունակել իր գոյութիւնը անարգել»: Առարեւ, այդ շրջանին պետական միջոցներ ունեցողներ իսկ նման գումար չէին տրամադրեր այդպիսի կրթական հաստատութիւններու (Թ. Տէլլեթեան, «Ողջոյն, Կեանք», 2007, էջ 298, 299) եւ Բարեռարին բացայայտ փափաքն էր, որ իր դպրոցը տեւէր «դարէ դար»:

Անգին գրութեան մը մէջ, «Յիշատակարան Մելգոնեան կրթական հաստատութիւններու անդրանիկ հիմնարկութեան», ստորագրած Արծեսանդիա, 1924 յունուար 29-ին, Բարեռարը ըսած է.

«Կը փափաքիմ, որ Մելգոնեան կրթական հաստատութիւնը տեւեն դարէ դար, եւ ըլլան լուսատուքեան վառարաններ, տալու համար հայ ազգին, հայ հայրենիքին եւ մարդկութեան օգտակար եւ պարկեշտ նկարագրով անդամներ»:

Այս տեսիլքով է, որ Մելգոնեան կրթական հաստատութիւնը ծնունդ առաւ հոս հայութեան համար, հայ ազգին գոյակցումն համար, տեւելու՝ «դարէ դար»: Քայլերգին բառերը պարզապէս են: Մելգոնեանը պիտի ըլլար անմահ լուսոյ տաճար, լուսոյ անբէգ վառարան ու պիտի ունենար փառք ու պատիւ յաւիտեան:

Առարեւ, Մելգոնեանը եղաւ լուսոյ տաճար: Հոս, գեղագանցարէս հայաբուսիչ այս սրբավայրին մէջ արդար, հաւատ, ընչան ու դասախօսած են մեր մշակոյթի ամէնէն մեծերէն՝ Օշական, Թէքէեան, անմահ Կոմիտասի տաղանդաւոր աշակերտ Կանաչեան եւ այլ նուիրեալներ... եւ այս տաճարին մէջ ելոյթ ունեցած են Գարեգին կաթողիկոս Յովսէփեան, Արշակ Չօպանեան, Սիլվա Կապուտիկեան, Վահագն Դաւթեան, Վահագն Տատրեան, Գոհար Գասպարեան, Լուսինէ Ջաւարեան եւ ուրիշներ:

Հիմա, ինչ պիտի ըլլայ ճակատագիրը այս սրբավայրին: Որոնց պիտի յանձնուի այս մասնաշնորդութիւնը ինչո՞ւ չտուեցաւ:

Հայաստանի ամէնէն հեղինակաւոր թերթերէն մէկում՝ «Ազգ»-ի աշխատակից Կարինէ Դանիէլեանի 2007 պարիզի գրած յօդուածին նիւթը Մելգոնեանն է: Հանձայն այս գրութեան, անոնք, որոնց մեռնատրներէն ոեւէ մէկում բախտ վիճակուեր է ուսանիլ այս կրթարանին մէջ, միայն եռախտագիտութեամբ ու ծայր ասիճանի ափսոսանքով կու տան անոր անունը, թէ ինչո՞ւ փակուեցաւ համբաւաւոր վարժարանը: Հ. Բ. Ը. Մ.-ի Կեդրոնական վարչական ժողովի անդամ Գարոյին Ասլանեանի եւ կրթական տնօրէն Արթուն Համալեանի հետ իր տեսակցութիւնները հիմ ընդունելով, յօդուածագիրը կանդրադառնայ Երեւանի Նոր Նորք շրջանին մէջ ձեռք ձգուած հողամասին վրայ զետեղուելիք համալիրին՝ որպէս արդարացում Կիպրոսի Մելգոնեանի փակման: Գ. Ասլանեան փակումին իբրեւ պատճառ յիշած է այն հանգամանքը, թէ «Հ. Բ. Ը. Մ.-ի կասարած ծախսերը չեն արդարացուել ոչ ուսման արդիականութեամբ, ոչ աշակերտների հանկով»: Իսկ Արթուն Համալեանի բացատրութեամբ նոր համալիրը պիտի ըլլայ սփիւռքի ուսանողներուն համար, որոնք բարձրագոյն մակարդակով «1 կամ 2 դասանիւթի» հետեւելով պիտի կարենան Հայաստանի համարատասխան համալսարաններուն մէջ ուսանիլ: «Մեր նպատակն է ստեղծել մի համալիր, ուր կու գան բազմաթիւ ուսանողներ սփիւռից» եւ «Հում կունենան հայրենիքի եւ սփիւռքի տարբեր շրջաններու ուսանողներուն հետ:

Հետաքրքրական է յօդուածագիրին եզրակացութիւնը. թէ՝ «Հում իրողութիւնը նոյնն էր Կիպրոսի Մելգոնեանի մէջ եւ թէ՝ բնաւ ալ «պէտք չէ հին հեծանիւը ջարդել», նմանը շինելու համար, թէ՝ Հայաստանի մէջ արդէն կան շուրջ 1400 դպրոցներ եւ թէ Բարեգործականը կրնար ասոնցմէ մէկը կամ միւսը «դրեցրել» («Ազգ», 7 Մայիս, 2007):

Դիտուկ յօդուած մը արդարեւ, որուն տուեալները, սակայն, շատ ճիշդ չեն: Հայաստանի մէջ բացուելիք համալիրը չի կրնար համարձակ դառնալ Մելգոնեանին: Բայց կայ նաեւ ուրիշ հիմնական պարագայ մը:

1915-ին արեւմտահայութիւնն է, որ հայրենազրկուեցաւ, հետեւաբար սփիւռքն է, բարոյապէս, ժառանգորդը Արեւմտահայաստանին եւ սփիւռքն է, որ առաւելաբար տէր պէտք է կանգնի եղեռնաբար ինկած մեր նահատակներու լեզուին, մշակոյթին եւ ազգային իրաւունքներուն:

Իսկ արեւմտահայերէնը հարստութիւն մըն է, որ պէտք չէ անտեսուի կամ լռուի: Յանձնարարու բանաստեղծ-մատենագիր Սիլվա Կապուտիկեան «անփոխարինելի գանձարան» կը նկատէ գրաբարը ու կաւելցնէ թէ «ոչ պակաս հարստութիւն է նաեւ արեւմտահայերէնը» («Լեզուն մեր հոգեւոր հարստութիւնն է», «Ծաղիկ», 25 հոկտեմբեր, 2007, էջ 6):

Մեր պիտի պահպանէ արեւմտահայերէնը եթէ ոչ մեր սփիւռքահայ երկրորդական վարժարաններուն մէջ պատասխանած սերունդը:

Երրորդի խորհուրդ նախարարներուն յանձնախումբն ալ 27 սեպտեմբեր 2006-ին որոշեց շրջանային կամ փորձարարական լեզուներու երրորդական հիմնաթուղթին (European Charter) գործադրութեան որոշումը Կիպրոսի մէջ եւ յայտարարեց «միջոցներ ձեռք առնել առպահովելու հայերէն լեզուով եւ հայերէնի ուսուցումը երկրորդական ուսման մակարդակով»:

Յատակ է, որ մարդկային իրաւունքներուն մասնագիտութեամբ այս յանձնառութիւնն ալ անհաղթաբար կը դարձնէ Մելգոնեանի դերակատարումը Կիպրոսի մէջ, եթէ հայերէնը պիտի չվանգնի կորդին մէջ մասնատարար, եւ երրորդի ու Միջին Արեւելքի մէջ՝ ընդհանրապէս:

Բայց կայ նաեւ շատ լուրջ ուրիշ պատճառ մը, որ Մելգոնեանը մնայ Կիպրոսի մէջ: Ամէն տեղ ալ մայրենի լեզուները նահանջ կարձանագրեն համաշխարհայնացումի համաարթեցնող

Շարունակությունը՝ էջ 5

Մելգոնյան բարեգործների հուշարձանը՝ կրթարանի մուտքին

ԹՈՄԱՍ ԴԵ ՎԱԱԼԻ «Սև այգի» ԳԻՐՔԸ

Երևան, «Զանգակ 97» հրատ., 2007, 432 էջ

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

Թոմաս դե Վաալը Ռուսաստանին եւ Կովկասին վերաբերող հարցերում մասնագիտացած գրող եւ լրագրող է: BBC-ում ապխատանքի անցնելուց առաջ ռուսերեն եւ հունարեն է սովորել Օքսֆորդի համալսարանում: Գիտական աստիճան է ստացել ռուս գրականության գծով: Աշխատել է Մոսկվայում որպես Moscow Times-ի, լոնդոնյան Times-ի եւ Economist-ի թղթակից: Ներկայումս Թոմաս դե Վաալը Կովկասի տարածաշրջանային խմբագիրն է Լոնդոնի Պատերազմի եւ խաղաղության լուսաբանման ինստիտուտում: Մոսկվայում ապրելու տարիներին Շարլոտա Գալի համահեղինակությամբ գրել է «Չեչնիա. փոքրիկ հաղթական պատերազմ» գիրքը, որն առաջին անգամ հրատարակեց գիրքն է չեչենական հակամարտության վերաբերյալ: «Սեւ այգի. Հայաստանն ու Ադրբեջանը՝ խաղաղության եւ պատերազմի միջով» գիրքը անգլերեն տպագրել է 2003 թվականին New York University Press հրատարակչությունը: Այժմ այս հակասական գրքին կարող են ծանոթանալ նաեւ հայ ընթերցողները:

Թոմաս դե Վաալն այս գիրքը գրել է օտարերկրյա ընթերցողների համար, որպեսզի նրանք ավելի լավ պատկերացնեն Ղարաբաղյան հակամարտության էությունը, սակայն այն մեծ հետաքրքրություն է առաջացրել թե՛ հայ, թե՛ ադրբեջանցի ընթերցողների շրջանում: Ոչ միայն հետաքրքրություն է առաջացրել, այլեւ բազմաթիվ հակասական եւ հրատապ կարծիքներ է հարուցել՝ ինքնադպվելով թե՛ հայերից, թե՛ ադրբեջանցիների կողմից: Նշանակո՞ւմ է արդյոք դա, որ հեղինակը հասել է որոշակի օբյեկտիվության եւ անկողմնակալության: Լրագրողն իր գրքի հանդեպ հետաքրքրությունը Հայաստանում եւ Ադրբեջանում բացատրում է երկու պատճառով. նախ, որ եզակի հեղինակներ են երկարատեւ ժամանակ անցկացրել հակամարտության երկու կողմերում էլ՝ այնինչ՝ շատ բան գրում նոր է «մյուս կողմի» համար: «Երկրորդ՝ գրքի հիմքում հակամարտությամբ անցած ու դրանից տառապած անհատների, իրական մարդկանց վկայություններն են, կարծիքներն ու գնահատականները: Այն փորձում է մարդկային տեսանկյունից ներկայացնել իրադարձությունները»: Հեղինակը մեծ թվով հարցազրույցներ է անցկացրել երկու երկրների նախագահների, պատգամավորների, գրողների, հասարակական-քաղաքական եւ ռազմական գործիչների հետ՝ պատերազմը, որպես քաղաքականություն, ազգային-գաղափարական պայքար ներկայացնելու, եւ շարքային քաղաքացիների հետ՝ պատերազմը որպես մարդկային ողբերգություն ցույց տալու համար, ընդ որում այստեղ ավելի հաճախ հանդիմանություն թիրախում հայտնվում էին հայերս, հատկապես ադրբեջանցի փախստականների եւ Ադրբեջանի Մանկական հանրապետության մասին պատմող գլուխներում: Այնուհանդերձ, այս գրքի հանդեպ հետաքրքրությունը բացատրելի է նաեւ մի երրորդ պատճառով. մեզ համար այն ուշագրավ է նաեւ որպես դիտարկում-տեսակետ, որը հակամարտության մասին կարծիք է ձեւավորելու արեւմուտքում: Անշուշտ թե՛ հայ, թե՛ ադրբեջանցի ընթերցողին հետաքրքրելու է հեղինակի տրամաբանությամբ բաղկացած եւ բացահայտ կարծիք Լեռնային Ղարաբաղի հակամարտության հնարավոր լուծումների շուրջ: Ակնհայտ է, որ վերջնական եզրահանգումը հումանիզմն է՝ լինելու: Բնաբանները, տողեր՝ ընտրված էլիաս Քանեթիի «Ամբոխներն ու իշխանությունը» գրքից եւ Սայաթ-Նովայի ադրբեջաներեն գրված բանաստեղծություններից մեկից, արդեն իսկ նախանշում են գրքի մարդասիրական բովանդակությունը: Թոմաս դե Վաալի հումանիզմը հանգում է կովկասյան ժողովուրդների ցանկալի համեռախության ու միասնականության փնտրմն իդեալին: «Սայաթ-Նովայի կենսագիրներից Չաղզ Դաուսեթը,-գրում է նա,- խորհրդածում է բանաստեղծությունում գործածված «խալֆա» (ժողովուրդ) բառի շուրջ: Ինչ ժողովուրդ: Եթե հայ կամ վրացի ժողովուրդը, ապա ինչո՞ւ է բանաստեղծությունն ադրբեջաներեն գրված: Նրա մտահորիզոնը, կարծես, շատ ավելի լայն էր, ու նկատի ուներ, թերեւս, միասնականությունը Կովկասում, որտեղ հայերը, վրացիներն ու ադրբեջանցիները ապրում էին ներդաշնակության պայմաններում՝ հեռակլ 2-րդ թաքավորի իմաստուն կառավարման ներքո, եւ ադրբեջանցիները՝ որպես ընդհանուր լեզու, Սայաթ-Նովայի համար իր բանաստեղծական մտքերն արտահայտելու լավագույն միջոցն էր»: Այսպիսին է Թոմաս դե Վաալի հումանիզմը. հեգնելով տարբեր ազգերին խորհրդային Միության մեկ ժողովուրդ դարձնելու փորձը՝ չգիտես ինչու հեղինակը մոռանում է կոմունիզմին ուղղված իր սարկազմը եւ հաստատում կոմունիզմի սեփական իդեալը:

Թոմաս դե Վաալը խոսում է հայոց հազարավոր ադրբեջանցի փախստականների մասին, որոնց թիվը Ալիեւն ուռճացրած միլիոնի է հասցնում (այս եւ այլ վիճակագրական տվյալներ են բերվում գրքի վերջում) եւ ապա փաստում, որ «հայերը հայրենիքի իրենց իրավունքը իրականացրին այս մարդկանց հաշվին»: Սակայն ճնշադատություն կա նաեւ ուղղված Ադրբեջանի իշխանություններին, որոնք բանագրգռված չեն ադրբեջանցի փախստականների ճակատագրով. այդ մարդիկ նրանց անհրաժեշտ են որպես տարածքի կենդանի խորհրդանիշ: Ադրբեջանցիներին Թոմաս դե Վաալը հիմնականում ներկայացնում է որպես ողբերգության կողմեր, իսկ հայերին՝ ազգային-գաղափարական պայքարի մարտիկներ:

Թոմաս դե Վաալը համակրանքով է խոսում Ղարաբաղի մասին... որպես մշակույթների միահյուսման եւ փոխազդեցության ուշագրավ տեղանքի: Խոսում է գրքում զետեղված եւ գրքի շարիկի լուսանկարի ընտրությունը. լուսանկարը ներկայացնում է տեսարան Շուշիից՝ մզկիթն ու Ղազանչեցոց եկեղեցին նայում են իրար՝ այս լուսանկարը մահմեդական եւ քրիստոնեական մշակույթների հանդիպադրման յուրօրինակ խորհրդանիշ է:

Այս առումով ուշագրավ է, որ ինքնադավում է «Ղարաբաղի չճանաչված հանրապետությունն» ուղղված հովանավորյալների մարդասիրական զգացմունքների տակ թաքնված մղումները. «Ղարաբաղի այս բոլոր բարեկամները շնորհակալ գործ են արել՝ չխավորությունից դուրս քաշելով մարդկանց, օգնելով երեխաներին, խնամելով հիվանդներին: Բայց դժվար է կիսել Լեռնային Ղարաբաղի նրանց ընկալումը՝ որպես պաշտպան խիզախ քրիստոնյաների հեռակես»:

Գրքում կարծես թե առկախ է մնում հայկական տարածքների հարցը եւ Ղարաբաղը վեր է անվում էթնիկ հակամարտության բաներաբերի: Իսկ այդ հակամարտության էթնիկ բնույթը բազմիցս, թեեւ բավական զգուշորեն, փորձում է ընդգծել հեղինակը: Թոմաս դե Վաալը բերում է ադրբեջանցի պատգամավորների տեսակետները, թեեւ հեղինակն ինքը բացահայտ կերպով հեռու է հայերի ծագման եւ պատմական հայրենիքի մասին այդ անհեթեթ տեսություններին հավատալուց: Ըստ Ֆարիդա Մամեդովայի. «Ազերիական ընդամենը երկու ազգ կա, որ ունեն ազգային ինքնություն, բայց չունեն պետություն: Հրեաները եւ հայերը: Տարբերությունն այն է, որ հրեաները պետություն ստեղծեցին իրենց պատմական հայրենիքում, իսկ հայերի ստեղծած պետությունը իրենց պատմական հայրենիքում չէ»: Ադրբեջանցի պատգամավոր Ազիզ Բունիաթովը պնդում է, թե հայկական եկեղեցիները պատկանել են էրիստոնյա ալբանացիներին: Այդ դեպքում հայկական գրությունների առկայության հարցը, հարցնում է լրագրողը ադրբեջանցի պատգամավորին: Թոմաս դե Վաալը բերում է մի օրինակ՝ Իգոր Ալիեւի եւ Քամիլ Մամեդզադեի «Ղարաբաղի պատմական հուշարձանները» գրքի շարիկի վրա Գանձասարի եկեղեցու դիմապատի նկարում հայերեն արձանագրությունների բացակայությունը: «Բոլոր դեպքերում զետեղված բոլոր լուսանկարներն արված են այնպիսի հեռավորությունից,-նկատում է նա,-որպեսզի ադրբեջանցի ընթերցողը գաղափար անգամ չունենա, որ այնտեղ հայկական արձանագրություններ կան»: Իր գրքի այսպիսի հատվածներում Թոմաս դե Վաալը ցույց է տալիս հայերիս ազգային ինքնասիրությունը եւ դրանով իսկ այնպիսի տպավորություն անում, փորձելով անգամ մեզ ապացուցել, որ իր գիրքը օբյեկտիվ լրագրողական հետաքննություն է:

Գրքում ներկայացված է խորհրդային տարիների ծգնաժամը, Հայաստանի եւ Ադրբեջանի ներքաղաքական կյանքը, պատերազմն իր բոլոր փուլերով՝ հայտնի եւ չլուսաբանված դրվագներով, դարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման շուրջ ընթացող բանակցային գործընթացները, միջազգային հանրության դիտորդումը, Ադրբեջանի քաղաքական դիտորդումները, պատերազմի նրանց ընկալումը, հարցի կարգավորման հեռանկարները եւ նոր պատերազմի հնարավորությունը:

1994 թվականի Հայաստանի հաղթանակն ու Ադրբեջանի պարտությունը հեղինակը պայմանավորում է երեք գործոններով. քաղաքական ու ռազմական քաղաքական Ադրբեջանում, Ռուսաստանի ավելի մեծ աջակցությամբ հայերին եւ հայերի ավելի բարձր մարտական պատրաստությամբ: «Այս վերջին գործոնը պատմական արմատներ ունի: Կովկասյան մյուս ազգերի՝ լեռնականների՝ չեչենների պես Ղարաբաղի հայերի շրջանում էլ ուժեղ են մարտական ավանդույթները»: Մեկ այլ տեղ Ղարաբաղի անվանի զինվորականների մասին խոսելիս գրում է. «Հայերի շրջանում Ղարաբաղը ընկալվում է որպես մահմեդական արեւելքի դեմ պատերազմի վերջին հենարան: Դրա հետեւանքով ռազմական ավանդույթները ղարաբաղցիների շրջանում նույնիսկ ուժեղ են, որքան Մեծ Բրիտանիայում տոլանդացիների շրջանում»: Խոսվում է նաեւ Ղարաբաղի լեռնաբնակ հայերի եւ Հայաստանի հարթավայրում բնակվող հայերի խառնվածքների տարբերությունների եւ, ցավոք, փոխադարձ անհանդուրժողականության մասին: Ղարաբաղյան պատերազմում հայերի ամենամեծ սայթաքումն ըստ հեղինակի, Քելբաջարի գրավումն էր: «Հայերի համար Քելբաջարի գործողության հաջողությունը ցամաքային նոր կամուրջ բացեց Ղարաբաղի եւ Հայաստանի միջեւ, բայց դրա դիմաց վճարված դիվանագիտական գինը շատ բարձր էր,-գրում է Թոմաս դե Վաալը:-Առաջին անգամ երեւան եկան ցցուն փաստեր, որ Հայաստանի Հանրապետության զորքերը մարտական գործողությունների են մասնակցել Ղարաբաղից դուրս՝ Ադրբեջանի տարածքում»:

Ինչ վերաբերում է հարցի խաղաղ կարգավորման հեղինակի կարծիքին, ապա ցանկացած արդարացի լուծում կողմերի համար ցավոց զիջումներ է ենթադրում: Խաղաղ լուծման միակ մեկնարկը Ղարաբաղի հայերի այսօր ունեցած դե ֆակտո ինքնակառավարումը ամրագրելն է եւ նրանց անվտանգության անսասան երաշխիքներն ապահովելը: Ինչ վերաբերում է նոր պատերազմի հեռանկարներին, ապա հեղինակի կարծիքով մոտակա 5-10 եւ նույնիսկ ավելի երկար ժամանակաշրջանում Ադրբեջանը պատրաստ չի լինի պատերազմի: Եթե նույնիսկ Ադրբեջանը մեծ գումարներ հատկացնի նորագույն սպառազինությամբ բանակն ապահովելու համար, դա չի կարող երաշխավորել հաղթանակը, կարծում է հեղինակը: Մոտ ապագայում Ադրբեջանի ենթադրյան համար նա կանխատեսում է ավելի պայծառ հեռանկարներ, քան Հայաստանի: «Մշուշոտ է մնում, սակայն, հարցը, թե ինչպես է

բարեկեցությունը օգնելու Ադրբեջանին լուծել դարաբաղյան հանգույցը»: Նոր պատերազմի սանձազերծումն ու Հայաստանի հնարավոր ենթադրյան ծգնաժամը, սակայն, չեն կարող Հայաստանի ենթադրությունը հասցնել լիակատար փլուզման, քանի որ Հայաստանի հզոր բարեկամները Ռուսաստանում եւ Միացյալ Նահանգներում թույլ չեն տա դա: Վաղարագույն դեպքում Հայաստանը կարող է վերածվել արեւմտյան մի դիվանագետի բնորոշմամբ «սփյուռքի զբոսավայր-արգելոցի»:

Այս գրքի ամենաարժեքավոր եզրակացություններից մեկը հեղինակի հիշեցումն է, թե «Պատերազմը աղետալի կլինի եւ հարկ է հիշել, որ որեւէ պատերազմ չի ավարտվում այնպես, ինչպես ակնկալում են այն սկսած մարդիկ», եւ այս հիշեցումն ինքնըստինքյան ուղղվում է ադրբեջանցիներին: Թեեւ հեղինակը մի քանի անգամ որոշ վերապահումներով եւ թերահավատությամբ է խոսում հայկական եւ ադրբեջանական կողմերում պատերազմի ընկալման մասին, թե հայաստանը Մեծ Թուրանի ճանապարհին կանգնած «փոքր խոչընդոտ» է, իսկ Ադրբեջանը ռուսական իմպերիալիզմի ճանապարհին կանգնած «փոքր արգելք» եւ չխնայելով այդ ընկալումների խորային էությունը, եւ թե իրականում որքանով են ճշմարտացի արտացոլած այդ ընկալումները, նա եզրակացնում է, որ նոր պատերազմը կարող է վերածվել երրորդ համաշխարհային պատերազմի: «Չի կարելի բացառել մեկ այլ՝ ավելի մղձավանջային սցենար՝ Հայաստանում տեղակայված ռուսական զինված ուժերի բացահայտ ինտերվենցիան հայկական կողմից, կամ ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիայի ինտերվենցիան ադրբեջանական կողմից: Հարկավոր է ամեն ջանք գործադրել՝ կանխելու համար կովկասում երրորդ համաշխարհային պատերազմի սանձազերծման անգամ ամենահեռավոր հավանականությունը»:

Թոմաս դե Վաալի գիրքն ընթերցվում է մեծ հետաքրքրությամբ, առանձին դրվագներում այն գեղարվեստական բարձրարժեք էսսեների հիասքանչ նմուշներ է մատուցում, ակնհայտ է, որ երեսուքների ընկալումը գեղարվեստական է՝ թեեւ ոչ որպես իրականությունը չափազանցելու հակում, խոսքն, ասենք, վերաբերում է նկարագրություններին, կերպավորումներին, պատկեր, կերպար, կոլորիտ ստեղծելու հեղինակի կարողությանը: Ցնորանանք նաեւ, որ պատերազմը իրականություն է դառնում այնտեղ, որտեղ մարդկային երեւակայությունն ու գեղարվեստական հորինվածքը հասնում են անհեթեթության, մղձավանջի: ■

Ս էջից

Ատրումներ Մելգոնեան...

ծանրիին նեղեն: Ու թեեւ բացայայտ անտարբերություն կայ նաեւ սփիւռքի մեր մայրենի լեզուին նկատմամբ, շատ մտատրականներու կարծիքն է, որ մեր հայրենիքին մեջ հայերէնի նախանցը հասած է լուրջ հանգամանքներու ներկայիս, թէ՝ հայ լեզուն վերանալու է «...նոր բաբելոնականութեան մը, բարբառներու եւ ռուսերէնի կողքին, արեւմտեան բառարարարի ներխուժումով» (Պ. Աղրաբեան, «2007-ը՝ հայ լեզուի տարի», «Հայկ», նոյնմբեր 2007, էջ 934):

Կիպրոսի մեջ վերակազմակերպուած Մելգոնեանը կրնայ եւ կրցեր է լրացնել հայութեան մարդոցի պակասը: Որեմն պէտք ունինք հայ ուսուցիչներու, խմբագիրներու, ազգային գործիչներու, որոնք լեզուան ըլլան մեր լեզուին ու մշակոյթին պիտի, իմացութեամբ ու պատասխանատուությամբ: Նաեւ ըլլան լաւատեղեակ՝ տեղական լեզուներուն ու պայմաններուն: Մելգոնեան Բարեարներու հոգիները պիտի ջնայայինն, եթէ այս օրերուն հայ պատանիները գային հոս՝ Մելգոնեան, դժուարութեանց մէջ տայող Միջին Արեւելքի երկիրներէն ու մանաւանդ Իրանէն: Օտար բանակներու ներխուժումէն ի վեր այդ երկրէն շուրջ 3000 հայեր առաքուած են: Եղած են նաեւ տասնեակներով մահեր ու գերի բռնուողներ (Center for Armenian Information & Advice, Armenian Voice, London, թիւ 52, էջ 6):

Ակնարկը որեւէ ատենէ աւելի այսօր պէտք ունի Մելգոնեանին: Այնման ակնառուած է մեր հեսարերությունը մեր լեզուին, մշակոյթին ու մեր ազգային արժէքներուն նկատմամբ եւ այնման աղօտած ու խաթարուած՝ մեր իմիտութիւնը, որ եթէ որեւէ միտքին կամ որեւէ դիրքորոշում պիտի մեծարէր գնահատէ հայրենի արդոյ հայ մարդոյ պատասխանելու առաքելութիւնը, իրագործած պիտի ըլլայ մեծագոյն բարերարութիւնը մեր ժողովուրդին համար: Մենք պէտք ունինք այսօր ոչ թէ մէկ Մելգոնեանի, այլ Մելգոնեանի նման մի քանի գիտերթիկ երկրորդական վարժարաններու՝ հայեցի հանրակրթական կրթութեան մը համար: Որովհետեւ, երկրորդական վարժարանի տարիքներն է, որ պատանին կը կազմաւորուի ֆիզիքապես, միտքով ու հոգիով հոս, երկրորդական վարժարանին մէջ է, որ միտքի աչքերուն աճ, որ հոգին ընթերցումովը Ռաֆֆիի վերթրուն, միտքի զմայլի Միսաք Մեծարենցի անմահ բառութեան, միտքի վերանայ Թէքէեանի «Աղօթք վաղուան սերնդի առջեւ» հանդարդեալին ոգիով գրաւած ճարուածով ու փոքրկի Ցարենցի մոկաւունչ տողերով: Հոս, երկրորդական վարժարանին մէջ է, որ պատանին միտքի ունենայ մեր տոհմիկ արժէքներէն այնքան անգնելի զգացողութիւններ ու տպաւորութիւններ, որոնք միտքի ընկերանան իրեն՝ կեանքի ամբողջ տեւողութեան: Ոչ նախակրթարանը, ոչ հանալսարանը եւ ոչ ալ հեռազօսական կեդրոնը կրնան երբեւիցէ փոխարինել հայաբուն, հայրենասէր ու իր մշակութային գրականութիւններով եռուն հայ տոհմիկ երկրորդական վարժարանի վաղուան հայ ուսուցիչը, որ իր կարգին կարենայ յետագային հայ արժէքներով բոցավառել հայ պատանիին միտն ու միտը:

Մելգոնեան Բարեարներու օրուան առիթով աղօթի ցերմեռանդութեամբ կը մաղթեմ, որ Կիպրոսի մէջ վերաբացուի Մելգոնեանը վերակազմակերպուած՝ գալիք սերունդներու հայ աղջկներու ու հայ տղոց համար: Մինչ այդ չեմ կրնար չբնդնել՝

«Մեռելներու որդէս խաչ՝
Եւ այս ծառը տնկեցի...»

Լիմասոլ, Կիպրոս

ԱԶԳ-ՆԵՐԴԻՐ

Հուշագրություն

ԵՐԿՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՊՈՐԵՊԱՆ ՆԺԴԵՀԻ ՀԵՏ

ՎԱՀԱՆ ՄԱՐԳՍՅԱՆ

Մեր պատմագիտությունը դեռևս համոզիչ գնահատական չի տվել 2-րդ աշխարհամարտում ֆաշիստական Գերմանիայում ծառայած հայ զորձիչների՝ Արտաշես Աբեղյանի, Դրասդամատ Կանայանի (Դրո), Գարեգին Նժդեհի եւ մյուսների գործունեության վերաբերյալ: Այնինչ խորհրդային եւ արեւմտյան բանակներում կռված, շուրջ 300 հազար զոհ տված մեր ժողովրդի մարտնչումների ֆոնին հիտլերականների հետ համագործակցած այդ գործիչների վարագիծն արժանի է հատուկ ուշադրության: Պարզելով նման ուսումնասիրությունների երեւան գալուն, ստորեւ հուշագրական մի քանի տող Գարեգին Նժդեհի մասին, Շանգեզուրի հերոսի նրա կերպարի ամբողջացման համար:

Արեւը մայր էր մտնում անտառաբակ բլուրների հետեւում, բայց դեռ ճակատամարտը շարունակվում էր: Հեռվում այրվում էր Կաուսասը, մի քանի տեղից ծխում էր անտառը: Մեր գլխավերեւում երեւացին հինգաթռիչներ: Հանկարծ ինչ-որ բան ընկավ կողքիս ու ոռմբեց: Երբ աչքերս բացեցի՝ մութ էր: Սեւ վերնակի նման տարածվել էր խավարը: Ոչինչ չէր երեւում: Փորձեցի շարժվել: Ի զուր: Կիսով չափ թաղվել էի հողի մեջ: Դժվարությամբ ազատվեցի հողի կաղամներից ու առաջ սողացի: Հանկարծ հողը տակիցս հեռացավ: Երբ երկնքում փայլատակից կայծակը, ես ոռմբից առաջացած ծագարաձեւ փոսում էի. թեւս ու ոտքս ցավում էին: Մի քանի անգամ փորձեցի դուրս գալ՝ չհաջողվեց:

Առդեն լուսանում էր: Անծանոթ ձայներ լսեցի: Փոսի եզրին երեւացին կանաչ համազգեստով մարդիկ ու ինձ վրա ուղղեցին հրացանների փողերը:

- Լոս, տմոր,- հրացանի փողը ուղղելով կրծքիս, ասաց կարճահասակ, ակնոցավոր զինվորը: Բռնեցի նրա հրացանի փողից ու փոսից դուրս եկա: Նա սուզեց գրպանները, վերցրեց դանակը, ժամացույցը, փաստաթղթերը, վերադարձրեց միայն փոքր աղբկաս լուսանկարը ու ցույց տվեց ճանապարհը: Քայլեցի նրա ցույց տված ճանապարհով, մոռանալով վիրավոր թեւս ու ոտքս ցավը:

Քայլեցի դեռի արեւմուտ:

Մի քանի ճամբարներում եղա: Ամենուրեք պայմանները նույնն էին: Արբությամբ կռավում էր Հիտլերի հրամանը՝ «գերիներին պահել այնպես, որ կարողանան մեռնել միայն ուտելու մասին»:

1942 թվականի գարնանն ինձ փոխադրեցին Բեռլինից 60 կիլոմետր հեռու Վուստրաուի հատուկ ճամբար: Իսկա ճամբարում հայ գերիների բարոը մի փոքրիկ Հայաստան էր, յոր հոգեով, երգերով, տխրությամբ, հայրենիքի ու հարազատների կարոտով տառապող հարյուրից ավելի հայ ռազմագերիներ Հայաստանից, Արցախից, Կովկասյան մյուս հանրապետություններից, Հյուսիսային Կովկասից, Մոսկվայից, Տաշքենդից:

Այստեղ շուտով սկսվեցին հակախորհրդային ֆաշիստական դասընթացներ: Դրանք անցկացնում էր փարիզաբնակ դոկտոր-պրոֆեսոր Սարգիս Թորոսյանը: Նա եղել էր Հայաստանի պառլամենտի քարտուղար եւ լավ գիտեր Հայաստանի պատմությունը, մանավանդ 1918-1940 թվականների ընթացքում մեզ մոտ տեղի ունեցած իրադարձությունները, որ բոլորին զարմանք էին պատճառում:

Ճամբարում լուր տարածվեց, որ շուտով մեզ մոտ կգա Գարեգին Նժդեհը: Հայրենիքում Նժդեհի մասին շատ էինք լսել: Դիտել էինք «Շանգեզուր» կինոնկարը, բայց երբեմ չէինք կարծում մի օր, այն էլ գերության մեջ կիանդիպենք նրան: Երկու օր հետո ճամբարի մուտքի մոտ կանգնեց սեւ գույնի ավտոմոբիլն: Մեքենայից դուրս եկավ Նժդեհը: Սրտաբուղխ կոստյումով էր, գլխաբաց, միջահասակ, իր կորացած: Սիրալիր բարեւեց ընդառաջ եկած ճամբարի պետին, նրա տեղակալին, Թորոսյանին, եկան ուղիղ մեր բարոը: Մենք հավաքվել էինք բարոի մուտքի առաջ: Մոտեցավ ու խոսեց ճայնով ասաց.

- Բարեւ, հայ եղբայրներ:

Բարեւեցինք: Հարցրեց, թե ինչպես ենք, արդա մի քանի անգամ ուշի ուշով նայեց մեզ, կարծես ծանոթների էր որոնում: Հարցրեց.

- Շանգեզուրից ոմն կա այստեղ:

- Գորիսից եմ, պարոն Նժդեհ,- պատասխանեց իմ կողքին կանգնած Մինասը: Նժդեհը արագ քայլերով մոտեցավ, ձեռը դրեց Մինասի ուսին, ուղիղ նայելով նրա աչքերի մեջ, հարցրեց.

- Տաթեւի վանքը կա՞, թէ՞ բոլշեւիկները քանդել են:

- Կա, բայց ավերակ է դարձել:

Ճամբարի պետը եւ նրա տեղակալը գնացին:

Ներս ճանք բարակ: Նժդեհը նստեց աթոռին: Մենք շրջապատեցինք նրան:

- Իմ դժբախտ հայրենակիցներ,- այստեղ սկսեց նա,- մենք հանդիպում ենք հայրենիքից հազարավոր կիլոմետր հեռու, տխուր պայմաններում, երբ արյունակուլ պատերազմն իր բոցերի մեջ ներգրավել է աշխարհի շատ ժողովուրդներ, ինչպես նաեւ հայերին: Ամեն օր զոհվում են հազարավոր մարդիկ, հաշմանդամ են դառնում հազար-հազարներ, ավերվում են քաղաքներ ու գյուղեր: Թե պատերազմը ինչպես կավարտվի՝ ասածո կամն է, բայց մենք պետք է այնպես անենք, որ ոչ զոհեր ունենանք եւ Հայաստանը չավերվի: Մենք պետք է միասին լինենք, անկախ այն բանից, թե ինչ կռահակցության ենք պատկանում, թե որ ենք արում: Մենք ունենք մեկ հայրենիք, մեկ կրոն, մեկ լեզու: Մեր հայրենիքի փրկության համար Բեռլինում ստեղծել ենք «Հայ ազգային խորհուրդ», որի նախագահն է Բեռլինի Հումբոլդի համալսարանի պրոֆեսոր Արտաշես Աբեղյանը: Խորհրդի անդամներն ենք ես, Դրոն (Դրասդամատ Կանայանը), Ալֆրեդ Մուրադյանը, Դավիթ Դավիթխանյանը, Աբրահամ Գյուլխանդանյանը, Հարությունը Բաղդասարյանը: Խորհրդի անելիքները բազմազան են: Ինչպես գիտեք, կռիվներն ընթանում են Հյուսիսային Կովկասում: Գերմանական զորքերը բախում են Կովկասի դռները: Եթե այսպես ընթանա, նրանք հեռու չեն Հայաստանից: Մեր խնդիրը գերմանական զինվորական բարձրագույն հրամանատարությունը չի մերժել: Նկատի ունենալով, որ Հայաստանը բացօթյա թանգարան է, խոստացել են երեւանը, Գյումրին, Հայաստանի մյուս հաղարները եւ գյուղերը չռմբակոծել:

Մեր հայրենիքին սպառնում է վտանգ նաեւ Թուրքիայից, որը սահմանի մոտ կենտրոնացրել է 27 դիվիզիա եւ պատրաստվում է մտնել Կովկաս ու հասնել միջինասիական հանրապետություններ: Թե ինչ կլինի Հայաստանի վիճակը՝ դարզ է: Մենք չենք մոռացել 1915 թվականը, երբ մեկ ու կես միլիոն հայեր զոհ գնացին յաթաղանին: Մենք չդիտեմ է մոռանանք պատմական անցյալը: Հիշենք վերջին տասնամյակների դեպքերը, ռուս-թուրքական պայմանագրերը, երբ մեզանից աճառարարորեն անջատել են Արցախը, Նախիջեւանը, Արեւմտյան Հայաստանի հողային տարածությունները: - Մենք՝ հարյուրից ավելի հայ ռազմագերիներ մեկ մարդու պես ունկնդրեցինք նրանց: Ամենքս զգացինք, որ մեր դրությունը հիմնականում փոխվեց: Բոլորիս ֆանտասիական հին զինվորական հագուստ տվեցին, փայտե կոշիկների փոխարեն նոր կոշիկներ տացին: Մեզ սկսեցին այցելել Ֆրանսիայում, Իտալիայում բնակվող մեր հայրենակիցները, գրեր ու նյութական օգնություն տացին Մխիթարյան միաբանությունից:

Գերմանիայի մշակույթին, հաղարներին ու արդեւակերությանը ծանոթանալու նպատակով փարիզաբնակ հայեր Օնիկ Աբրահամյանի եւ Վահե Գալումջյանի ղեկավարությամբ էմկրատիայի մեկնեցին Բեռլին, Դրեզդեն, Համբուրգ եւ այլ հաղարներ: Փոխվեց նաեւ ճամբարի ղեկավարների վերաբերմունքը. լավացավ սնունդը: Այդ բոլորի համար երախտապարտ էինք Նժդեհին:

Այսպես անցավ մի քանի ամիս: Գերմանիա ժամանեց Թուրքիայի նախագահ Սարաջօղլին: Նա արժանացավ Հիտլերի ջերմ ընդունելությանը: Դրանից հետո թերթերը հեղեղվեցին թուրքական բանակը, արվեստը, պատմական անցյալը, հնությունները գովաբանող հոդվածներով ու լուսանկարներով: Գեբելսի «Դաս ռայխ» սենսացիոն թերթում տպագրվեց Անիի ճարտարապետական հնությունների լուսանկարները, Անին համարելով թուրքերի հանճարի մարմնացում: Տպագրվեցին հայ-թուրքական-գերմանական գրքերի բառարաններ, Կովկասի ու Հայաստանի ֆիզիկական քարտեզներ, ուղեցույցներ եւ այլն:

Մենք ահ ու սարսափով սպասում էինք: Բացարձակ ասվում էր, որ Թուրքիան շուտով կմտնի Հայաստան ու Կովկաս:

Բայց ահա 1943 թվականի փետրվարի 3-ին Գերմանիայում սուգ հայտարարվեց: Թերթերում տպագրվեց Հիտլերի լուսանկարը՝ թեւին սեւ ժապավեն կապած: Երեք հարյուր հազարանոց գերմանական զորքը Ստալինգրադում ջախջախվեց: Գերմանացիները նահանջեցին՝ պատճառաբանելով, թե այդ անում են ռազմաճակատը կարճացնելու նպատակով:

Թերթերում այլեւս Թուրքիային գովաբանող հոդվածներ ու լուսանկարներ չէին տպագրվում: Թուրքիան դադարեցրեց տնտեսական օգնություն ցույց տալ Գերմանիային: Մենք ուրախացանք:

Մի անգամ մեր դասընթացների ղեկավար Սարգիս Թորոսյանն ինձ առանձին ասաց.

- Բեռլինի ռադիոյում ելույթ համար ափսասանքի տեղ եմ արել: Կվարեմ շաբաթական մեկ ժամ տեղությամբ հայերեն հաղորդումները: Պարոն Նժդեհի առաջարկությունն է: Առայժմ ոչ ոքի չասես:

Ուրախացա:

Մի քանի օր հետո Թորոսյանը ինձ համար հագուստ ու կոշիկ բերեց: Փաստաթղթեր ձեւակերպեց ու միասին գնացինք Բեռլին: Ֆրիդրիխշտրասեի ու Ալեխանդր պլացի անկյունում մեծ մի շենք ու բարձրացանք հինգերորդ հարկ: Թորոսյանը բացեց կաղամբյաս դուռը, ու ներս մտանք: Լայն ճակատով մի մարդ նայեց մեզ: Բարեւեցինք ու նստեցինք նրա դեմ դիմաց դրված թիկնաթոռին: Հայ ազգային խորհրդի նախագահ, Բեռլինի Հումբոլդի համալսարանի պրոֆեսոր Արտաշես Աբեղյանն էր: Նա ինձ հետ հայերեն, ռուսերեն կուսակցության հաղկոմի բաժնի վարիչ Հայկազ Պողոսյանը: Մեկ շաբաթ հետո Թորոսյանն ինձ ասաց.

- Գերությունից ելք ազատելու ու Բեռլինի ռադիոյում ափսասելու հարցը լուծված է, վաղը միասին կմեկնենք Բեռլին: Հրաժարվեցի:

- Ինչո՞ւ,- զարմացած հարցրեց նա: Բեռլինում ելք համար լավ կլինի: Առանձին սենյակ, բարձր ափսասավարձ, ֆրանսիական զինվորներ, սիրուն աղջիկներ: Լավ մտածիր, պարոն Նժդեհի առաջարկությունն է:

Հաջորդ օրը նորից զուցեց ինձ հետ, տեսավ, որ իմ որոշման մեջ անդրդվելի եմ, այլեւս ոչինչ չասաց:

Շուտով Գարեգին Նժդեհի միջնորդությամբ ու Բեռլինի հայ ազգային խորհրդի հովանավորությամբ ու պատասխանատվությամբ մեզ բոլորիս ազատեցին գերությունից: Ստացանք օտարերկրացու անձնագիր ու մեկնեցինք գյուղատնտեսական ու գործարանային ափսասանքի: Վերջացավ պատերազմը: Ես անցա զինվորական ծառայության: Գերմանիայի Վիսբադեն քաղաքի զինվորական պատեսասան թարգմանիչն էի: 1946 թվականի նոյեմբերի 19-ին զորացրվեցի ու վերադարձա հայրենի գյուղ՝ Բուժական: Տեղեկացա, որ գերիներին դասում ու ամոռում են: Ոչնչացրի ինձ մոտ եղած ընկերներիս լուսանկարները, նամակները, հասցեները: Պահեցի միայն Նժդեհի հետ լուսանկարը, եռագույն դրոշի կրծքանշանը: Դրանք թաքցրի մարագում: Անցան երկարաձիգ տարիներ: Տասը տարի առաջ դրանք թափտոցից հանեցի: Նկարը արդեն նման փտվեց: Կրծքանշանը գրեթե գունաթափվել էր: Այժմ ես սրբությամբ դրանք պահում եմ, ինչպես նաեւ Նժդեհի նվիրած Նոր կտակարանը եւ լիլիպուտ բառարանները: Ինչ եղավ Նժդեհը: Մի գնաց նա: Մինչեւ այժմ չեմ մոռացել նրա բարի դեմքը, ինձ ու իմ ընկերներին ցույց տված օգնությունը, հայրենասիրական խորհուրդները: Նժդեհը երբ համոզվում է, որ Գերմանիան պարտվում է եւ Հայաստանին օգնություն չի կարող ցույց տալ, 1944 թվականի մայիսին վերադառնում է Բուլղարիա, որտեղ արդեն էր մինչեւ պատերազմը սկսվելը: Նույն թվականի սեպտեմբերին, երբ խորհրդային զորքերը գրավում են Բուլղարիան, նրան բանտարկում են ամոռում Վլադիմիր քաղաքը: Ճամբարային ընկերս՝ Գրիգա Ազարյանը նրան հանդիպում է Վլադիմիրի բանտում, Նժդեհին շատ ու հաց է առաջարկում: Նժդեհը մերժում է ու ընկերոջը ասում է.

- Դու հանձում ես ափսասում, թե կարող ես, թերթ բեր: Տեսնում ես, այստեղ չեն թույլատրում ուտիր լսել ու թերթ կարդալ:

Ընկերս զարմացողի թերթ է բերում ու հանձնում նրան: Մի անգամ նա թերթում կարդում է, որ արտասահմանից հայերը վերադառնում են Հայաստան: Ուրախացած ասում է. «Ինչ լավ է, մեր հոյերն ու եղբայրները վերադառնում են հայրենիք: Մեր ժողովուրդը կգոյատեւի, մեր ցեղը չի կորչի»:

Շուտով ընկերոջս տեղափոխում են: Նա այլեւս Նժդեհին չի հանդիպում: ■

«Ես մի մարդ եմ, ով հասկանում է սեփական ժողովրդի տարած ցավը եւ կրում է այդ բեռը»

2006 թ. հոկտեմբերի կեսերն էր: Հանցի հետ համաձայնության եկանք ու որոշեցինք հանդիպել «Ակօսի» գրասենյակում: Մոտավորապես 30 թուրք ակադեմիկոսների, լրագրողների, հաղարագետների եւ մտավորականների հետ «Թուրքիայում տիրող զգայական եւ գիտակցական մթնոլորտը Հայկական հարցի խնդրում» ծրագրի շրջանակներում հարցազրույցներ էի անցկացրել. նրանցից շատերի հետ ինձ Հրանտն էր ծանոթացրել: Հիմա էլ հարցերին պատասխան տալու հերթը նրանն էր:

Գրասենյակում մթնոլորտը ջերմ էր, անմիջապես սկսեցինք զրուցել: Ընկերական զրույցի ընթացքում մի քանի անգամ ծայնագրիչն անջատեցինք եւ նա իր անհանգստությունների մասին հայտնեց: Այն ժամանակ նրա ասածները ինձ այնքան էլ հավանական չթվացին. հիմար սցենարն իրականացավ ընդամենը երկու ամիս հետո: Երբ ավարտեցինք հարցազրույցը, մտածում էինք, թե ես իմ տված հարցերով, նա էլ իր պատասխաններով, լավ ներդրում ենք արել տիրող իրավիճակի համար. մի տեսակ ուրախացել էինք:

Հրանտի հետ ամենավերջին անգամ խոսեցի 2007 թ. հունվարի 16-ին, երբ Երեւանում էի: Ծրագիրը գրքի վերածելու համար կարծիքներ էի հարցնում: Զրույցը կարճ տեւեց: Ասաց. «Արի՛ այստեղ, երես առ երես կխոսենք»: Այն ժամանակվանից հետո շատ անգամներ գնացի Սամբուլ, սակայն ոչ մի անգամ երես առ երես չխոսեցինք այլեւս...

- Մեզ կպատմե՞ք, թե ինչպե՞ս, ինչու՞ եւ ո՞վ մտահղացմամբ հիմնադրվեց «Ակօսը»:

- Քանի որ «Ակօսը» որոշվեց հրատարակել Թուրքիայի հայկական համայնքի կարիքներից ելնելով, ուստի նրա հիմնադրումը դժվարին խնդիր էր: Բայց «Ակօսը», հակառակ մի շարք բացասական արձագանքների, լույս տեսավ: Մինչ այդ մի շարք խնդիրներ ու կարիքներ էին առաջ եկել. համայնքում միայն հայերենով հրատարակումն արդեն բավարար չէր, քանի որ մարդկանց մեծ մասը Անատոլիայից էին եկել, իսկ նրանք թրախոս էին: Տեղեկատվության լուրջ պակաս կար համայնքում, որովհետեւ մարդիկ հայատառ մամուլին չէին հետեւում: Եվ հետո նեղիակված ադրող հրատարակությունն ինքնին բերում էր դժվարություններ՝ նրանց հարկավոր էր բացել: Անհրաժեշտ էր պայքարել: Թուրքական հասարակությունը հայկական համայնքն այլ կերպ էր ընկալում. «հայ» բառը մի ժամանակ հայհոյանք էր համարվում, այն Քրդական բանվորական կուսակցության (PKK) հետ էին կապում, գտնում էին, որ նա առնչություններ ունի ԱՍԱԼԱ-ի հետ: Թուրքիայում Ղարաբաղի հարցը ինարկելիս համայնքի ներսում մեծ անհանգստություն եւ տագնապ էր տիրում:

Տան մեջ փակված որդի նման էինք ապրում. հեռուստատեսությամբ լսում էինք մեր մասին ասվածները եւ ոչ մի բան չէինք կարողանում անել: Ընկզում էինք, բղավում, ասում էինք, թե սուտ են այս բոլորը, բայց այդ մասին բարձրաձայն չէինք խոսում: Անհրաժեշտ էր ճեղել պատնեշը, դա կարիք կար:

Այդ ժամանակվա պատրիարք Գարեգին Գազանճյանը մի օր մեզ իր մոտ կանչեց եւ ասաց, որ «Սաբահ» թերթում տպագրվել է մի հայ կրոնավորի եւ Աբդուլլահ Օջալանի լուսանկարը, իսկ տակը գրված է եղել. «Ահա հայի եւ ՔԲԿ(PKK) համագործակցության վկայությունը»: Սրբազանն այն ժամանակ ինձ ասաց՝ սուտ է, որ այդ կրոնավորը հայ է, եւ ինձ ու այդ պահին այդտեղ գտնվող մի քանի ընկերներին հարցրեց, թե ինչ ենք կարծում այդ մասին: Ես իմ տեսակետները հայտնեցի, ասացի, որ այլեւս չլռենք եւ մամլո ասուլիս հրավիրենք: Համարձակ արարք էր, ամբողջ տեղական եւ արտասահմանյան մամուլն էր հավաքվել ու շատ հաջող անցավ: Տպավորությունն աննկարագրելի էր: Այդ հավաքույթից հետո ես կարծիք հայտնեցի, որ ամեն ապիթի ասուլիս կազմակերպելն անիմաստ է, պետք է ավելի հստակ քայլերի դիմել: Դրա փոխարեն այս թերթը հիմնելու գաղափարն առաջ քաշեցի:

Ես եւ իմ մի քանի ընկերներս էինք զբաղվում այդ գործով: Ավելի ուշ ընկերներս հեռացան, եւ գործն ինձ մնաց: Մի կողմից էլ ուզում էինք, որ սա երիտասարդների համար «ինքնեկեղեցական խոհանոց» լինի ու կարողանանք երիտասարդներից սոցիոլոգներ, գաղափարապես զարգացած մարդիկ պատրաստել:

- Հիմնադրման ընթացքում եւ հետագայում ինչպիսի՞ պրոբլեմների հանդիպեցիք:

- Առաջին խնդիրը համայնքի պահպանողականությունը ճնշելն էր: Հայաստան մամուլը մեր հանդեպ հակակրանք էր տածում: Եղան մարդիկ, որոնք կարծում էին, թե մենք վեց ամիս կամ, լավագույն դեպքում, մեկ տարի կգոյատեւենք, բայց արդեն 10 տարի է, ինչ գործում ենք:

Որոշ մարդկանց աչքում թուրքերենով տպագրվելը հեշտությամբ ֆալ էր: Այն դեպքում, երբ թուրքերենն օգտագործելով մենք ջանում էինք լավ բան անել հասարակության համար: Իմ կարծիքով նրանք արդեն համոզվել են:

- Երբ հիմնեցիք թերթը, կարծո՞ւմ էիք, որ լավ կլինի, որ թուրքերն էլ կարողանան հայ համայնքին եւ մամուլին հետեւել:

- Մեր հիմնական նպատակներից մեկն այս հասարակության համար մեծ հասարակության պատուհան, դուռ լինելն էր. կարծում եմ սա է մեր հաջողությունը, երկու հասարակություններն սկսեցին ներթափանցել իրար մեջ:

Կարողացանք մեր սեփական խնդիրները Թուրքիայի խնդիրների համատեքստում ներկայացնել: Մեր կարծիքով միայն այս ձեւով էր հնարավոր խնդիրները լուծել՝ Թուրքիայի ժողովրդավարացման ճանապարհով: Շուտով համայնքն էլ սկսեց հասարակության հիմնական խնդիրների հանդեպ հետաքրքրություն ցուցաբերել, հայ հասարակությունը «Ակօս»-ի հետ միասին սեփական ինքնության համար ավելի խիզախաբար պայքարեց, իրեն պատասխանատու զգաց, սկսեց չվախենալ:

- Կպատմե՞ք Թուրքիայում խմբագիր լինելու, թերթ հրատարակելու նաեւ փոխադարձության համար թերթ հրատարակելու առանձնահատկությունը: Թուրքիայում մամուլի ազատության վերաբերյալ Ձեր տեսակետները:

- Փոխադարձության համար թերթ հրատարակելը հատուկ դժվարություն չի ներկայացնում: Եթե Թուրքիայում սկզբունքային խմբագիր չլինես, եթե որոշակի հաղորդակցման ուղղվածություն չունենաս, ավելի շատ պատկերազարդ լուսանկարով հետաքրքրվես, մասնագիտական որեւէ դժվարության չես հանդիպի: Իսկ եթե որոշակի գաղափարներ ունեցող լրագրող ես, իհարկե, դժվարություն կունենաս:

Վերջին տարիներին մամուլի ազատության հետ կապված սովորական դժվարություններ ենք ունենում, Թուրքիայի քրեական նոր օրենսգրքով եւ մամուլի օրենքով առաջ եկավ որոշակի վերահսկողություն, մենք էլ մեր բաժինն ենք սանում՝ թերթը մի քանի անգամ հավաքվեց...

Ես կարծում եմ, որ նաեւ խաղում ենք մեզ բաժին ընկածից ավելին ու դրա միակ պատճառը նա հայկական հարցի շուրջ մեր ունեցած կեցվածքն է: Համոզված եմ, որ սա է պատճառը, սակայն դեռ չենք հրաժարվել, շարունակելու ենք:

- Խոսենք Եվրոմիության մասին՝ տեսականորեն ո՞րն է Եվրոմիության նշանակությունը Թուրքիայի համար: Թուրքիան անդամության պետք է անդամագրվի՞ Եվրոմիությանը:

- Սա Թուրքիայի համար անվերադարձ ընթացք է: Անհրաժեշտ է լավ հասկանալ Թուրքիայի՝ Եվրոմիություն մտնելու պատճառը, սա ցանկություն չէ: Սրա պատճառը վախն է: Ու քանի որ վախենում է, այս գործընթացում դանդաղ է առաջանում: Ինչու՞ է վախենում: Անորոշության վախ է, եւ այս վախը փոխադարձ է: Այս վախի պատճառով է, որ շարունակվում է այս գործընթացը եւ, հետեւաբար, ոչ մի դեմքում հետ դարձի ճանապարհ չունենք:

Եթե Թուրքիան ղեկավարող ռազմական կառույցները մինչեւ այսօր Եվրոմիությանը հստակ ոչ ասեին, այս գործընթացը, ըստ էության, այս վիճակին չէր հասնի: Եթե Եվրոմիությանը չանդամագրվենք, մի օր ՆԱՏՕ-ից էլ ստիպված կլինենք դուրս գալ: Բացի այդ, գործընթացը դանդաղ է ընթանում գուցե նաեւ այն պատճառով, որ չկա առանձնապես մեծ ցանկություն Եվրոմիությանն անդամագրվելու: Ես բնավ չեմ կարծում, որ ինչ-որ զարգացում կկարողանա այս գործընթացի առաջընթացը կանգնեցնել, գուցե կարող է դանդաղեցնել, սակայն չեզոքացնել այն հնարավոր չէ ...

Եթե նայենք հանրաքեւության պատմությանը, Թուրքիայի ներքին զարգացման վրա ազդող հիմնական երեք ժամանակաշրջան կար: Առաջինը սառը պատերազմի ժամանակաշրջանն էր. այն ժամանակ թեզությունը ճախակողմյան ուժերի հետ խնդիր ուներ եւ ոչնչացրեց նրանց: Երկրորդ շրջանը, երբ կոնկրետ ուժերն Իրանում իշխանության գլուխ եկան, Թուրքիայի կրոնավորները պահանջում էին իրենց մասնակցությունը երկրի քաղաքականությանը, իսկ այսօր եկան իշխանության: Երրորդ փուլը Եվրոմիության անդամակցության գործընթացն էր ու մինչ այդ Թուրքիայի վրա ոչ մի բան այնպես ներգործություն չէր ունեցել: Այս գործընթացը Թուրքիայում գտնվող ոչ մի խմբի միասնո չթողեց: Այսօր եւ զինվորականների, եւ բյուրոկրատների, եւ ակադեմիական շրջանների, եւ մամուլի մեջ Եվրոմիության դեմ հանդես եկող ուժեր կան:

- Ո՞րն է ամենից մեծ խնդիրը Թուրքիայի Եվրոպականացման եւ արդիականացման գործընթացում:

- Վերեւների կողմից ներքեւից եկող արձագանքներին հակազդելը եւ վերեւների օրենքները: Սրանք են առաջին խնդիրները: Երկրորդ մեծ խոչընդոտը վերեւների վախն է: Թուրքիան Օսմանյան կայսրությունից ավելի փոքր տարածք է զբաղեցնում, այս պատճառով էլ վախենում է, որ կարող է ավելի փոքրանալ: Սա կարելի է անվանել որոշս «Սեւրի սինդրոմ»: Թուրքիայում յուրաքանչյուր փոփոխության կասկածով, վախով են մոտենում: Այս պատճառով էլ փոփոխությունների ընթացքը Թուրքիայում դանդաղ է ընթանում:

Թուրքիան Արեւմուտքի եւ Արեւելքի միջեւ եւ անցաստեղի է, եւ երբեմն էլ պատնեշ կարող է լինել: Ես Թուրքիայում գտնվող պատնեշը համարում եմ Մալաքիան: Մալաքիայի արեւմուտքը եւ արեւելքը մեկը մյուսից տարբեր աշխարհներ են: Թուրքիան իրականում ռազմավարական նշանակություն ունեցող երկիր է, բայց միեւնույն ժամանակ կախում ունի եւ արեւմուտքից, եւ արեւելքից: Քանի որ իրադրությունն այդպիսին է, ուստի կարծում եմ, որ Թուրքիայից առաջ հարմարվողականություն սպասելն առդարձված չէ:

Փոփոխությունների հետ չիրագործվելու ամենից մեծ պատճառներից մեկն էլ Թուրքիայում կառուցված շենքն է՝ արհեստականորեն ստեղծված վերին ինքնությունը: Նոր պատմություն, նոր լեզու ստեղծվեց եւ պարտադրվեց հասարակությանը: Այս պատճառով էլ, վախենում են ծանոթանալ իրենց իսկական, սեփական պատմության հետ: Ամեն մի այլ պատմական մեկնաբանություն այս ինքնության համար երկրաշարժի ազդեցություն կարող է ունենալ: Սա նաեւ վախեցնում է եվրոպային, քանի որ երկրաշարժը նաեւ սպառնալիք է իր համար: Այս ինքնությունը կարող է նաեւ փլվել, բայց թե ում վրա, արդեն հարցական է...

- Եվրոմիության պահանջներին համապատասխանելու գործընթացում մարդու իրավունքների եւ ժողովրդավարության բնագավառում բարեփոխումներ կարող են իրականացվել: Ըստ Ձեզ, սա դական արդյունքներ կարո՞ղ է ունենալ:

- Այդ հարցում բոլորովին կասկած չունեմ, բայց դժվար գործընթաց է: Օրենքներ կիրառվեն հասարակությանը: Այս պատճառով էլ, վախենում են ծանոթանալ իրենց իսկական, սեփական պատմության հետ: Ամեն մի այլ պատմական մեկնաբանություն այս ինքնության համար երկրաշարժի ազդեցություն կարող է ունենալ: Սա նաեւ վախեցնում է եվրոպային, քանի որ երկրաշարժը նաեւ սպառնալիք է իր համար: Այս ինքնությունը կարող է նաեւ փլվել, բայց թե ում վրա, արդեն հարցական է...

- Եվրոմիության պահանջներին համապատասխանելու գործընթացում մարդու իրավունքների եւ ժողովրդավարության բնագավառում բարեփոխումներ կարող են իրականացվել: Ըստ Ձեզ, սա դական արդյունքներ կարո՞ղ է ունենալ:

- Այդ հարցում բոլորովին կասկած չունեմ, բայց դժվար գործընթաց է: Օրենքներ կիրառվեն, դրանք կլանի կոչելը դժվար կլինի՝ ընդդիմացողներ կլինեն...

Բայց մտածողության փոփոխությունն անհրաժեշտ է, ժողովրդավարացումը բավականաչափ կփոխի մտածողությունը, ինչքան փոփոխվի մտածողությունը, այնքան ժողովրդավարացումը կարագանա:

- Սակայն որոշ իրավիճակներում նկատվում է ժողովրդի անհանգստությունը: Օրինակ, խոսքի ազատությունը հայրենիքի դավաճանություն է դիտվում (Թուրքիայի քրեական օրենսգիրք, 301-րդ հոդված), հավատի ազատությունը, խղճի ազատությունը (գլխաշորը) կարող է հետադիմություն ընկալվել: Սրա պատճառը ո՞րն է, իրականում ժողովուրդը այս բարեփոխումներին պատրաստ չէ՞:

- Այսօր Թուրքիայում խոսվում է ազգայնական ուժերի բարձրացման մասին, բայց ես չեմ հավատում, որ աճում է ազգայնականությունը. այն աճեցվում է որոշ մարդկանց օգնությամբ: Վերջին երկու տարիներին սա ավելի ակնհայտ դարձավ: Այս մարդիկ աշխատում են Թուրքիայում տեղի ունենալիք ընտրությունները մոդելավորել:

«Արդարություն եւ բարգավաճում» կուսակցությանը տարալելու հաշվարկներ են անում: Բայց ոչ մի պատճառաբանություն չունեն ոչ սնտեսական, ոչ էլ ժողովրդավարական իրավունքների առումով, մնում է ազգայնականներին ոգեւորելը ... եւ դա արվում է ամենուր, նահապետների հուշարկավորության ժամանակ, Հոռոմի պարի այցի ժամանակ, ԵՄ դեմ ...

Իմ կարծիքով այս արձագանքների ամբողջ ցավը մեր առաջիկա ընտրություններն են: Այս մարդիկ չեն ուզում տեղ տալ կրոնավորներին կառավարության մեջ, տեսնենք՝ ինչ է լինելու:

- Դուք կարծում եք, թե Թուրքիայում էքսիկական հիմքի վրա հենվող պարբերություններ կա՞ն: Սա հրահրող պատճառների եւ դրանից բխող հետեւանքների մասին կկարողանաք խոսե՞լ:

- Ինչ վերաբերում է էքսիկ արձանագրություններին, անկասկած տարբեր վերաբերմունքներ կան: Սրա ամենից պարզ օրինակը. եթե նման բան չլիներ, այսօր գլխավոր շաբաթ, ռազմական ուժերում, ոստիկանությունում, տարբեր պետական պատասխանատուներում, նախարարություններում կլինեին ոչ մահմեդականներ, նաեւ հայեր: Սա հրահրող գլխավոր պատճառը անվստահությունն է: Թուրքիան փոքրամասնություններին անվստահության համատեքստում է արժեւորել եւ որոշս անվստահության հարց է նայում:

Ես չեմ հորինում, կան թվաբանական արձանագրություններ: Լոզանի արձանագրությունների նշվող 300 հազար հայ բնակչությունից այսօր 60 հազարն է մնացել, 13 միլիոն թուրք բնակչությունն էլ 70 միլիոնի է հասել: Երբ մեկը աճում է, մյուսն ինչպե՞ս է պակասում. որոշներ փոքրամասնություններին պետք էր պակասեցնել: Կարեւոր բեկումնային կետեր ի հայտ եկան՝ ունեցվածի հարկը, 1955 թ. սեպտեմբերի 6, ի դեմ այս շրջանում ինչ եղել եղել է: Բացի դրանից, հայերն էլ մտածելով առաջնության մասին, ելնելով սնտեսական եւ բարոյական խնդիրներից, լքեցին Թուրքիան:

Մեկ այլ փաստ էլ կա. Թուրքիայում ցանկացած դպրոցական դասագրքում փոքրամասնությունների, հայերի հետ կապված տվյալներ չեն գտնի, միայն Ազգային անվտանգության դասագրքում փոքրամասնություններին վերաբերող տվյալներ կան: Նախակրթարանում անգամ չկա, օրինակ՝ «Ալի՛, գնդակը Հակոբին գցիր», այսպիսի նախադասություն չեն գտնի, Ալին գնդակը միշտ կգցի Վեղինին, երբ նայում ենք սրանց, մենք չկանք...

Շարունակությունը՝ էջ 6

Գաղափարական կեղծարարության վտանգը

ԷԴՈՒԱՐԴ Լ. ԴԱՆԻԵԼՅԱՆ
Պատմ. գիտ. դոկտոր

Կեղծիքը որեւէ բնագավառում (հասարակական, քաղաքական, գիտական, մշակութային եւ այլն) անհետեւանք չի մնում, հանգի, աղճատելով մարդկային մտածողությունը, խլացնում է հասարակությունը: Կեղծարարությունը հակոտնյա է ճշմարտությունը լուսաբանող գիտության էությանը: Հայագիտության կարեւորագույն բնագավառը Հայոց պատմությունն է, որի ճշմարիտ լուսաբանումը ազգային արժեքների պահպանման եռաչիսկ է: Հայոց պատմության խեղաթյուրման ակունքներում է օտար ասյաններում աշխարհաքաղաքական նպատակներով վերջին երկու դարերի ընթացքում խմորված «գերնենդատությունը», որով նենգափոխվում է Հայկական լեռնաշխարհի՝ որպես հայ ազգի (էթնոսի) եւ համաշխարհային քաղաքակրթության բնօրրանի մասին պատմագիտական հայեցակարգը, այն «փոխարինում» են հայերի «եկվորության» ու Հայոց քաղաքական եւ մշակութային ամբողջական՝ ավելի քան հինգհազարամյա պատմությունը աղճատող արհեստականորեն «երիտասարդացնող» «տեսություններով»: Հայտնի է, որ թուրք, «ադրբեջանցի» եւ տանց համախոհ «պատմաբաններն» ու հովանավորները Հայոց պատմության կեղծարարության եւ մշակութային հուշարձանների ոչնչացման միջոցով ծրագրել են ջնջել իրենց զավթած հայկական հողերի (Արեւմտյան Հայաստան, Արեւելյան Հայաստանի որոշ երկամասեր) մասին պատմական հիշողությունը:

Ի հակադրություն հայ պատմագիտության բնագավառում կատարվող զգալի աշխատանքների, որոնք պատմաբաններ գրչակված են Հայոց էթնո-մշակութային եւ քաղաքական պատմության «սեղմամբ» եւ օտարոտ ներկայացմամբ՝ նսեմացնելով հազարամյակների պատմություն ունեցող ազգային արժեքները: Իսկ նրանց չդատապարտված համախոհները այդ «գաղափարները» հրատարակում են որոշ լրատվամիջոցներում, ձգտելով գաղափարական առկայությունացմամբ հասնել իրենց ազգային քաղաքական նպատակներին: Հայ պատմագիտության դեմ ուղղված գրոհողությունները վնասում են մասաղ սերնդի հայրենասիրական ոգով դաստիարակությանը, հոգեւոր արժեքների պահպանմամբ՝ բանակի ոգեղեն ամրապնդմանը եւ թեական համապատասխան խնդիրների լուծմանը: Հայ ազգի առջեւ ծառացած խնդիրներից են ազգային շահի գերակայությամբ՝ առաջ ճանապարհով թեության ամրապնդումը, ազատագրված տարածքների պաշտպանությունը, անկախության սկզբունքով քաղաքական եւ տնտեսական հարաբերությունների ծավալումը, ազգային սեփականության ու եկամտի թեսիրավական առաջի վերահսկումը, արժանավայել կենսապայմանների ապահովումը, գիտակրթական եւ մշակութային ոլորտները, հայրենիքում եւ սփյուռքում հայության բոլոր խավերի՝ ազգապահպան ուժերի համախմբումը:

Նման խնդիրների լուծմանը գաղափարապես դեմ է քաղաքագետ Ալեքսանդր Իսկանդարյանի եւ պատմական գիտ. դոկտոր Բաբկեն Հարությունյանի հոդվածը, որտեղ, խեղաթյուրելով համաշխարհային մշակույթի զանձարանում հայ մշակույթի ներդրման նույնիսկ օտարների կողմից ընդունված փաստը, գրել են. « ... Հայկական պատմական առասպելին բնորոշ է հայ մշակույթի պակասերի եւ տեղի չափազանցությունը, ինչպես նաեւ նրա մեկուսացումը հարեւանների մշակույթից» (**«Հայաստան. ազգային պատմության «դարաբաղացում». հոդվածների ժողովածու՝ «Ազգային պատմությունները խորհրդային եւ հետխորհրդային պետություններում», Մոսկվա, 1999 թ., էջ 149, ռուս.)**: Սակայն հիշենք, օրինակ՝ որ ընտրելով 5-րդ դարի հայ թարգմանիչների պահպանվել են մեծարժեք աշխատություններ, որոնց անհետացած բնագրերն այժմ վերականգնվում են ըստ հայերեն թարգմանությունների:

Հետագայում Բ. Հարությունյանը գրել է, որ Մոսկվայում լույս տեսած հոդվածը «կատարելապես տարբեր էր Ա. Իսկանդարյանին իմ ներկայացրած տեսքից: Ա. Իսկանդարյանը այն էապես փոփոխել է, ավելացրել եւ հրատարակել առանց ինձ հետ համաձայնեցնելու... Դատելով մամուլի որոշ հրապարակումներից՝ ժողովածուն 2003 թ. վերահրատարակվել է... Իրերի իսկական դրությունը գիտական հասարակայնությանը ներկայացնելու համար ստիպված հրատարակում եմ իմ կողմից Ա. Իսկանդարյանին հանձնված տեքստը՝ առանց որեւէ փոփոխության...» **(Բ. Հարությունյան. «Պատմական գիտությունը Հայաստանում 1988-1998 թթ.», «Լրաբեր», 2004, N 2, էջ 55)**: Եթե իրոք տեքստը աղավաղված էր, նա պետք է անմիջապես ահազանգեր այդ մասին, այլ ոչ թե հինգ տարի լռելուց հետո ամբողջ մեղքը բարդեր հեղինակների վրա: Եթե չդատարկենք Լեւոն Մելիք-Շահնազարյանի («Անցումային ժամանակաշրջանի տարուն ու տոնը», «Շրջադարձ» 2004, N 2), Գեւորգ Յազըճյանի («Ազգային պատմության դարաբաղցման, թե՞ թրացում...», «Շրջադարձ» 2004, N 2) եւ Ալեքսանդր Գրիգորյանի (Чего изволите-изация национальной истории, «Գոլոս Արմենիի» 06. 04. 2004) ինքնատական քննադատությունները, Բ. Հարությունյանը շարունակելու էր լռել, հայ ազգի արժանապատվությունը կեղծարարությամբ ոտնահարող հոդվածի մասին: Երկրորդ՝ այդ ժամանակվանից ի վեր Ա. Իսկանդարյանը, որ հաճախ է հաղորդական ելույթներ անում, լռում է իր հեղինակակցի ներկայացրած մեղադրանքի կատակցությամբ:

Ժողովածուի խմբագիրներ՝ Կ. Այվազյանը եւ Գ. Բորոյուգովան ջանք են գործադրել Բ. Հարությունյանի եւ Ա. Իսկանդարյանի «հայեցակարգը», «Պատմությունների ներկայիս «վերաշարադրմանը» բնորոշ են, նույնիսկ պատմաբանների շրջանում սեփական թեության հնացումը, էթնոսների հաղորդական եւ հասարակական զարգացման

Շարունակությունը՝ էջ 9

«Ես մի մարդ եմ, ով ...»

Դ էջից

Միայն Ազգային անվտանգության դասագրքում կարելի է գտնել հայերի, այն էլ Թուրքիայի հետ չար խաղեր խաղացող բաժնում:

- Ինչպե՞ս եք գնահատում Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ գոյություն ունեցող հարաբերությունները:

- Կարելի է խոսել գոյություն չունեցող հարաբերություններից. Հայաստանի անկախությունից հետո ոչ մի հարաբերություն չեմ տեսնում: Նախ՝ ԱՄՆ-ը փորձեց հայեր անել, հետո ԵՄ-ն, բայց ապարդյուն: Կա ցանկություն, սակայն օգուտ չի տալիս:

Թուրքիան դեռ չի ընտելացել այն մտքին հետ, որ Հայաստանը Կովկասում անկախ պետություն է: Բայց այնտեղ մի պետություն կա, հարեւան կա, անհրաժեշտ է սա ըմբռնել եւ հարաբերություններ սկսել:

Երբ ձախողվում է պետական հաղորդակցությունը, տեղը զիջում է ժողովրդավարական հաղորդակցությանը: Քաղաքացիության բնագավառում հարաբերություններ հաստատելու փորձեր կան, բայց շատ հիշ, թույլ:

- Ձեր կարծիքով 1915 թ. դեպքերը ինչպե՞ս պետք է բնութագրել:

- Ինձ համար ցեղասպանություն է, կասկած իսկ չունեմ:

- Որո՞նք են Ձեր տեսակետները Հայաստանի կողմից առաջարկվող առանց նախապայմանների դիվանագիտական հարաբերությունների եւ Թուրքիայի կողմից առաջարկվող պատմաբանների հանձնաժողովի վերաբերյալ:

- Թուրքիայի կեցվածքը ընդհանրապես անկեղծ չեմ համարում: Գտնում եմ, որ հայկական կողմինը շատ ավելի անկեղծ է:

- Ինչու՞, կարծում եք պատմաբանների հանձնաժողովը որեւիցե արդյունք չի՞ տա:

- Այո՛, բոլորն էլ գտնում են, որ պատմաբանների հանձնաժողովը որեւէ արդյունք չի տա: Արդյունքի չհասնելով՝ առանց հարաբերությունների հաղորդակցությունը շարունակվելու է: Թուրքիայի ընտրած ճանապարհը սա է՝ ոչ մի հարաբերություն: Կարծում եմ՝ Ադրբեջանը եւս նման հաղորդակցություն է պարտադրում Թուրքիային: Հայկական կողմն ավելի անկեղծ է եւ ավելի շատ ցանկություն ունի:

- Ինչպե՞ս եք վերաբերվում երրորդ երկրների՝ այս թեմային միջամտելուն եւ խորհրդարաններում ընդունվող ցեղասպանության մասին օրինագծերին:

- Իմ տեսակետն այս օրինագծերում շատ ոմանչիկ կարելի է համարել, բայց տեսակետիցս չեմ հրաժարվում: Ես կարծում եմ, որ մինչեւ այսօր Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացում աշխարհն էլ Թուրքիայի նման երկրներնահրեն է վարվում: Աշխարհն այս իրականության մասին վաղուց գիտի, այն ժամանակ նրանք իրենց դերակատարումը, ազդեցությունն ունեցան: Այժմ՝ տասնամյակներ անց, Ֆրանսիան ճանաչում է, իմ կարծիքով այստեղ բարոյական որեւէ դիրքորոշում չկա: Բարոյական կեցվածքի նման չէ, որովհետեւ այս գործը Թուրքիայի հետ հարաբերություններում որոշ հաղթաթուղթ, անցաթուղթ են օգտագործում:

Որոշ հայ, ինձ համար ցավալի է, երբ իմ ողբերգությունը միջազգային քաղաքականում քաղաքական հաղթաթուղթ են օգտագործում: Ես սրան չեմ դիմանում, ես ընդվզում եմ, այս տեսանկյունից ես երրորդ երկրներին նշանակություն չեմ տալիս: Գտնում եմ, որ այս խնդիրն անհրաժեշտ է լուծել Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ: Ոչ թե պատժիչ օրինագծերով, այլ բարոյականությամբ է անհրաժեշտ լուծել: Բարոյականությունում պատժիչ օրինագծերի կարիք չունեմ, մեր խիղճն էլ բավարար է: Ես հավատում եմ, որ այս երկու երկրները կարող են հաղթահարել, բայց չեմ ուզում դեռ ինչ-որ բան ասել ...

- Դուք եւ հայերին խմբավորում եք որպես հայաստանցիներ, սփյուռքահայեր եւ թուրքահայեր, երբ խոսքը գնում է հայկական հարցի մասին:

- Ոչ միայն այս խնդրում, ընդհանուր առմամբ եմ ես այդպես գտնում: Սփյուռքի համար Թուրքիան հեռու եւ անդիմադրելի երկիր է, Հայաստանի համար մոտ, հարեւան եւ կախվածության մեջ գտնվող երկիր է:

Իսկ Թուրքիայի հայերի համար Թուրքիան իրականում իրենն են: Ցնցված՝ նման բան ասելով՝ ես չեմ ուզում հայերին առանձնացնել մնացածից ու պաշտպանել թուրքական տեսակետը: Թուրքիան բոլորի հետ պետք է լավ հարաբերություններ հաստատի, բայց այս երկու պետություններն, իհարկե, պետք է երկխոսության մեջ մտնեն, այս հարցը նրանց միջեւ պետք է լուծվի: Թուրքիայի հայերին, ըստ էության, երկխոսության մեջ ներգրավելը խոսակցության թեմա չէ, հանի որ նրանք այս երկրի հաղորդակիցներ են:

- Որպես Թուրքիայի հաղորդակցի, Ձեզ անհանգստացնո՞ւմ է հայ-թուրքական սահմանի փակ լինելը: Ինչպե՞ս եք գնահատում Թուրքիայի հաղորդակցությունը Հայաստանի նկատմամբ, որն Ադրբեջանի հետ հարցերն ընդունում է որպես սեփական խնդիր եւ Հայաստանի հետ հարաբերություններում նախապայմաններ է դնում:

- Թուրքիայի եւ Ադրբեջանի միջեւ լավ հարաբերություններ հաստատվեցին Դեմիրելի կառավարության շրջանում: Եվ Թուրքիան մինչ օրս փորձում էր Հայաստանի հետ հարաբերությունները ձեւավորել հայ-ադրբեջանական հարաբերություններից ելնելով:

Ճիշտն ասած՝ Թուրքիան Ադրբեջանին բարկացնել չի ցանկանում՝ Հայաստանի հետ հարաբերություններ հաստատելով: Ղարաբաղի հիմնահարցի առիթն օգտագործելով՝ Ադրբեջանը Թուրքիային թույլ չի տալիս Հայաստանի հետ հարաբերություն հաստատել:

Թուրքիայում հայտնի ոչ մի ազգայնական իշխանություն հակառադրբեջանական լուծման չի գնա: Այս հաղորդակցության կողմնակիցն է նաեւ Թուրքիան, որը չի ողջունում Հայաստանի՝ որպես հարեւան երկրի գոյությունը:

Սկզբում Թուրքիան Հայկական հարցը ոչնչացրեց, բայց Հայաստանի անկախության նկատմամբ հարցը կրկին հարություն առավ: Թուրքիան հանկարծակի ուղղական տեսավ, ու առաջացավ նորից նույն հարցը՝ ինչ անել Հայաստանի հետ: Թուրքիան փնտրտուքի մեջ էր, երբ Ղարաբաղի հարցը օրակարգ եկավ եւ Թուրքիան չորս ձեռքով կառչեց դրանից, չարախնդաց, վազեց օգնության: Ասաց. «Սա ինձ երկար ժամանակ կբավարարի»: Ահա սա էլ այս հաղորդակցության շարունակությունն է...

- Ըստ Ձեզ, Թուրքիայի հանրապետությունը Օսմանյան կայսրության շարունակո՞ղն է եւ պատմության մեջ.....

- Ես ոչ ոքից պատասխանատվություն, ներողություն չեմ սպասում: Ես մի մարդ եմ, ով հասկանում է սեփական ժողովրդի արած ցավը եւ կրում է այս բեռը:

Իմ գլխում ոչ հող, ոչ դրամական փոխհատուցում, նման բաներ չկան: Ինձ համար կարեւոր է վերականգնել անցյալում խզված հարաբերությունները, իմանալ, թե ովքեր եւ ինչ հանգամանքներ դեր խաղացին: Եվրոպական երկրներն էլ կարող են դրական դեր խաղալ եւ փոխհատուցել իրենց մեղքերի համար ու փորձեն մեղմացնել այս տարաձայնությունը՝ գտնելով տնտեսական եւ մշակութային փոխշահավետ հենահարակներ երկու երկրները մոտեցնելու համար:

- Կարելի՞ է ասել, որ այս հարցում «Միության եւ Առաջադիմության» դերը շատ մեծ էր:

- Սա միայն մեկ խմբի մեղքը չէ, նրանց աջակցող, թիկունքից օգնող եւ առաջնորդների հանդեպ այլ փակողներ կային, այսօր էլ դեռ կան մարդիկ, որ չեն ցանկանում, որ իրականությունը ջրի երես դուրս գա: Եթե պատասխանատվություն եք փնտրում, պատասխանատուներ շատ կան, յուրաքանչյուրն իր բաժինն ունի, բայց սա հիշեցնելն իմ պարականությունը չէ: Շատ ոմանչիկ է գուցե, բայց յուրաքանչյուրն ինքը պետք է ընդունի իր մեղքը...

- Եթե փորձենք վերլուծել, որո՞նք են երկու կողմի հիմնական խնդիրները:

- Վերքեր կան, վախեր, չկամեցողություն, կան նաեւ թշնամություններ ...

Այսօր նոր երեւույթներ կան, հայաստանցիների մեջ էլ կան այս երեւույթները եւ անհրաժեշտ է դրանց ուշադրություն դարձնել: Հայաստանցիներն իրենց Ադրբեջանի եւ Թուրքիայի միջեւ ճնշված են զգում՝ աջից եւ ձախից խեղդող

երկու պետություն կա: Այս վախը, այս ոչ անվտանգությունը կարեւոր հանդիպակաց է, անհրաժեշտ է սա պատկասել:

Պետք է անկեղծ ձեւով բացատրել, որ Թուրքիան կարող է Հայաստանի ընկերը լինել:

Հայկական կողմն էլ պետք է խելացի վարվի. ներկա իրավիճակից պետք է դասեր քաղել:

Անկախ Հայաստան կա, բայց տարբեր սնտանական շրջափակում իրականացնող երկու պետություն կա, իսկ հյուսիսում՝ շարունակաբար ադրբեջանական վարվող Վրաստան, եւ Հայաստանը միայն հարավում կարող է շունչ քաշել, բայց այնտեղ էլ մոլլայական վարչակարգ է, որը դարձ չէ՝ ինչպես կարող է շարունակվել:

Անհրաժեշտ է, որ սփյուռքը սրա մասին նստի ու մտածի: Հարկավոր է, որ Հայաստանն իր հարեւանների հետ լավ հարաբերություններ հաստատի եւ, իհարկե, Եվրոմիությանն անդամակցի: Եթե այսօր Հայաստանը Եվրոմիության անդամ լիներ, Թուրքիան ոչ թե նրան, այլ Եվրոպային էմբարգոյի կենթարկեր:

Սփյուռքը տարբեր երկրների խորհրդարաններում այսպիսի օրինագծեր անցկացնելու փոխարեն թող սեփական երկրներին համոզի, որ Հայաստանին Եվրոմիություն ընդունեն: Նրանց պետք է պատմությունը, իրենց պատասխանատվությունները հիշեցնել, որովհետեւ այսօրվա իրավիճակում նրանք իրենց բաժին մեղքն ունեն: Սփյուռքը պետք է կարողանա ասել՝ գոնե մա արեմ: Սա առաջ գնալու իմ բանաձեւն է եւ մենք անցյալի հայերի համար սա եվրոպացիներից կարող ենք պահանջել:

Հարցազրույցը վարեց
ԱԼԵՆ ՕՀԱՆՅԱՆԸ
2006 թ. հոկտեմբերի, Սամբոյ,
«Ակոս» խմբագրատան

Գաղափարական կեղծարարության վտանգը

ե էջից

մակարդակի չափազանցումը, ընդհանուր առմամբ, ի հաշիվ հարեւանների՝ ինքնահաստատումը: Իսկ հայաստանցի (նկատի ունեմ հիշյալ երկուսին - է. Դ.) հեղազոտողները ընդհանրապես խոսում են իրենց ազգային պատմության «դարաբաղացման» մասին» («Ազգային պատմությունները խորհրդային եւ հետխորհրդային ոճերում», Ներածություն, էջ 13):

Խեղաթյուրելով Հայոց էթնիկական պատմության եւ մշակույթի փաստերը՝ Ա. Իսկանդարյանը եւ Բ. Հարությունյանը գրել են. «Հանրային գիտակցության մեջ ամուր տեղ է գտնվել վայրենիներով շրջապատված հայերի՝ որոնես միակ խաղաղասեր ժողովրդի մասին հայեցակարգը: Գեղուռեցված էթնոկենսոնացման արդյունքը եղավ զուտ ազգային մշակույթի շատ մեկուսի պատկերը» («Ազգային պատմության «դարաբաղացում», էջ 149): Իսկ իր հերթ թե բնագրային հոդվածում Բ. Հարությունյանը, շարունակելով այդ «միտը» գրել է. «Վերջին տասնամյակում չնայած հետխանության գլուխն անցած ՀՀՇ-ի մշտած որոշակի սահմանափակումներին, հասարակական մտքի զարգացման մեջ ավելի եր գերակայում ինքնահաստատման ազատությունը , ինչը նշանակում եր պատմական գիտության բավական առաջ զարգացնելը: Վերջինս, սակայն, առաջացրեց նաեւ բազում անճշտություններ եւ սխալ դրույթներ, որոնք մի շարք դեպքերում ազգային սահմանափակության արտահայտություններ էին...»: Ավելին՝ Բ. Հարությունյանը, խմբահրմով արտահայտվելով որոշ հեղազոտողների տեսակետների մասին, գրել է. «Փորձեր են կատարվել ամեն գնով առաջացնել Ուտատրի նույնությունը Հայաստանի հետ...», «1988 թ. հետո... Հայաստանի առաջին հանրապետության իդեալականացման որոշակի միտում սկսեց դիտարկվել...», «1988 թ. լույս տեսած «Լեռնային Ղարաբաղ» պատմական տեղեկագիրը իր վրա կրում եր կայսրությունից վախենալու եւ շատ բանականության հետքեր...», կամ՝ «հայ պատմաբանները բացարձակապես անպատասխան էին, երբ իրենց առջեւ բռնկվեց թափի առնող Ղարաբաղյան շարժումը» («Պատմական գիտությունը Հայաստանում», էջ 56, 59, 63, 66): Սակայն ինչպես կարելի է մոռանալ Արցախի պատմության, ավանդապատմության եւ ճարտարապետության բնագավառներում տարիներ շարունակ բազում հայ գիտնականների (Սուրեն Երեմյան, Սեդրակ Բարխուդարյան, Բագրատ Ուլուբաբյան, Մուրադ Հասրաթյան, Շահեն Մկրտչյան եւ ուրիշներ) կատարած աշխատանքները: Հայաստանի պատմական աշխարհագրությունը ենթագրվող Բախչում հրատարակված ռանթուրիսական «խրեցքների» դեմ (արտատպվել են 1944 թ. Թուրքիայում հրատարակված «Իսլամ» հանդեսի հարանվանից) Ալբերտ Մուսեղյանը Մոսկվա՝ ԽՍՀՄ ԳԱ պատմության ինստիտուտ ուղարկեց մի նամակ՝ բացահայտելով պատմական ճշմարտությունը: Կեղծարարներին դատապարտող պատասխանը հրատարակվեց «Գրական թերթ»-ում (14. 8.1987), որը հիսներեկ վայնասուն առաջացրեց Բաքվում:

Ա. Իսկանդարյանը եւ Բ. Հարությունյանը գրում են. «Մինչեւ 1988 թ. պատմության երեք տարբերակ գոյություն ուներ. «պատշաճական», «սխրանքի» եւ «ժողովրդական» ... երեքն էլ կենտրոնանում էին հայերի «հնամենիության», «խաղաղասիրվածության» եւ «տառապալության» վրա»: Երեքն էլ տառապում էին էթնոկենտրոնացումով եւ «եղեռնի կոմպլեքսով»... Պատմությունը եւ պատմաբանները «կոչված» էին օրինականացնել ազգային պայքարը: Առաջին հերթին դա արտահայտվեց հայոց պատմության «դարաբաղացմամբ» («Ազգային պատմության «դարաբաղացում», էջ 152-153): Բ. Հարությունյանը նման ոգով է «գնահատել» Մովսես Խորենացու (V դ.) երկը՝ համարելով «Սահակ Բագրատունու ուղեղում ծնված խորհրդային ծրագիր»: Միաժամանակ, նսեմացնելով սկզբնաղբյուրը, գրել է. «Պետք է խոստովանել, որ ժամանակակից պատմաբանի համար ավելի հաճելի է գործ ունենալ Փավստոս Բուզանդի երկի, քան Պատմահոր երկասիրության հետ, որում անեն մի փաստը կամ իրադարձությունը կորցրել է սկզբնական իր անաղարտությունը, անցնելով հեղինակի վերլուծության եւ իմաստավորման խոհանոցով» (Բ. Հարությունյան, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման հարակարգը ըստ «Աշխարհացույցի», Երեւան, 2001, էջ 39): Ավելին, Բ. Հարությունյանը, հետեւելով նախկինում պատմագիտության մեջ հայոց թագավոր Պարսկին սկզբնական ծագում վերագրող սխալ վարկածին, մի «հայտնություն» է արել՝ իբր Նյոտար Մաղեսը Պարսկի որդին եր, իսկ «Արամի պատերազմը Մաղեսի դեմ տեղի է ունեցել ըստ Պատմահոր տեղեկության Հայոց աշխարհը Մաղեսի կողմից գրավելուց երկու տարի անց» եւ դրանով իսկ Արամին տեղափոխել է մ.թ.ա. VII դար (տե՛ս Բ. Հարությունյան, «Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների եւ Առաջավոր Ասիայի պատմության մի քանի խնդիրների շուրջ (մ.թ.ա. VII-VI դդ.), Երեւան, 1998, էջ 57-73, 80): «Սեղմելով» եւ «սկզբագնելով» հին Հայոց պատմությունը, նա գտնվայր շրջել է Պատմահոր պահպանած՝ տարբեր դարաշրջաններից ավանդվող տեղեկությունների իմաստը, իրար հակադրելով Հայկազունի Արամ եւ Պարսկր թագավորների մասին հաղորդումները:

Հայոց հին պատմությունը աղավաղված է նեղությամբ նաեւ պատմ. գիտ. դոկտոր Կարեն Յուզբաշյանը՝ նախ որոնելն (Ս.-Պետերբուրգ, 2003), ապա հայերեն հրատարակված իր գրքույկում գրելով. «Հայկական հաղարկրթությունը ձեւաորվել է մշակույթային մի ոլորտում, որը պայմանականորեն անուանում ենք իրանական: Դարեր անընդհատ այստեղ տիրում էր զրադաշտության ձեւերից մեկը: Հայաստան մուտք գործած հելլենիստական մշակույթը որոշ կերպով ազդեց նաեւ հաստատիների վրա, եւ ահա այդ լեռնախորի վրա ձեւաորվեց հայկական հրիստոնեությունը» (Կ. Յուզբաշյան, Հայագիտության նեռաթիվ: Ուսումնական ձեռնարկ, Ե., 2006, էջ 11-12): Այնինչ, դեռեւս XVIII դարում Դավիթ Կայծեն, XIX դարում Ցորջ Բայրոնը, Սերգեյ Գլինկան, Վիլյամ Գլադստոնը, XX դարում Առնոլդ Թոյնբին, Դավիդ Լանգը ընդունում էին, որ Հայաստանը հաղարկրթության բնօրանն է, իսկ հայկական հրիստոնեության մասին խոսելիս նա պետք է հիշեր Աստվածաշնչի եւ Երիտեի «Արարածոց մեկնության» տպագրները լուսաբաշության ակունքների Հայկական լեռնաշխարհում գտնվելու մասին:

Հայոց պատմության դեմ պարբերաբար հոդվածներ են տպագրվում «Հայկական ժամանակ» թերթում՝ պատմական հիշողությունը ջնջելու նպատակով: Փոխանակ դատապարտելու XXI դարի սկզբին թուրք-ադրբեջանցիների կողմից Յուտայի խաչքարերի ոչնչացումը, այդ թերթում տպագրվել է. «Ինչ դաս հաղեմ մեզ մեր պատմությունից: Եկեք մոռանանք այն, եկեք ամեն ինչ հակառակ սկսենք զրոյից» (Նիկոլ Փաշինյան, «Մոռանալ «հեռուական անցյալը», 09.12.05): Այդ գրելիս, հեղինակը չգիտեր է մոռանար, որ հայերի եւ նրանց մասին հիշողության վերացումով էին զբաղված աղունաբրու Արդրդ Համիդը, Թալեաթ, Էնվեր եւ Զեմալ փաշաները, իսկ սանց հանցագործություններով ոգեշնչված մարդասյաց Ադոլֆ Հիտլերը ասել եր. «Մեկ է այսօր դեռ խոսում հայերի ոչնչացման մասին»: Իսկ միգուցե «հեռուսրատուի փառի» «դահինների» հավակնողների՝ «պատմությունը մոռանալու» վայրենի «կոչը» Շուշիում տարված (1992 թ.) թշնամու հոգեվարքի արձագանքն է...

Հաջորդ՝ «Մտքի դեֆիցիտի մասին» (19-20. 04. 07) հոդվածի հեղինակը («Գագիկ Սարգսյան» կեղծ անունով Արայոմ Խաչատրյանը, այսուհետեւ՝ Ա. Խ.), սադրանքի թիրախ դարձնելով դեռեւս լույս չտեսած «Հայ ժողովրդի պատմության» ակադեմիական խառատրի առաջին գիրքը, իր «հոդվածը» «հարստացրել» է հայագիտությանն անհարիր սպային-բերիական ժամանակների մեռելաբուխ պիտակներով («ազգայնամոլություն», «նացիզմ», «Ադոլֆ Հիտլեր», «գանգրենային դաշնակցություն» եւ այլն): Հիշողության փոխարեն սառաբողները մոռանում են, որ միլիոնավոր անմեղ մարդկանց, որոնց թվում՝ հազարավոր հայ մտավորականների, ԳՈՒԼԱԳ-ի ճամբարներ էին նետել քաղաքական «պիտակներով»: Ա. Խ.-ն գրել է. «Մեծ ուշադրություն է հատկացվում դիցաբանությանը: Այստեղ նույնպես զուգահեռ է առաջանում անցյալ դարի 30-ականների Գերմանիայի եւ նացիզմի գաղափարախոսների հետ...», այնուհետեւ հիացել է զրադաշտականության «միասվածային (երկրամասական - է.Դ.) էությամբ»: Հակառակ դրան՝ հայոց մեջ հնուց կարետրվել է դիցաբանությունը: Մովսես Խորենացին նկատել է. «Մի՞թե տանմ (պարսից առասպելները - է. Դ.) հույների պերճ ու ողորկ, պատճառաբանված առասպելներն են, որոնց տակ այլաբանորեն թաքնված են ճշմարիտ իրողությունները» (Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երեւան, 1961, էջ 141):

Ա. Խ.-ն թքկտահում է, թե «Ուրարտուն» Հայաստան եւ հայերին «ուրարտացիներ» համարողները «պատմությունը կեղծում են»: Պատմագրության մեջ նոր չէ Ուրարտուն Հայաստանի հետ նույնացման հայեցակարգը, որը հաստատվում է նորագույն հետազոտություններով, չնայած «գերճնաղատության» «տերերի» ու «ծառաների» համառ դիմադրության: Հնագիտական նյութերի շարունակականությունը, սեղագիր արձանագրություններում հիշատակվող տեղանունները, դիցանունները, հայերեն բառապաշարը աղացուցում են, որ հազարամյակների խորից եկող Հայոց պատմության մեջ Վանի թագավորությունը (Արարատյան թագավորություն-Ուրարտու) քաղաքականության, մշակույթի, հաղարհիանության եւ տնտեսության զարգացման կարետրագույն փուլերից էր:

«Թասիբի դեֆիցիտի մասին» (27. 04. 07) հոդվածում Ա. Խ.-ն ծանոթ է ՀՅ ԳԱԱ պատմության ինստիտուտի՝ աորդի 23-ին նույն թերթի խմբագրությանն ուղարկած, սակայն չհրապարակված պատասխան նամակում իր նախորդ հոդվածի սխալներին վերաբերող դիտողություններին, մասնավորապես «զրահապատանություն» բառի մասին գրել է. «Հավանաբար, սա թարգմանչի վրիպում էր... Մեղադրում են ինձ անգրագիտության մեջ իբրեւ այդ հոդվածում կոպիտ սխալներ եմ թույլ տվել...»: Հայ դիցաբանության եւ հրիստոնեության մեջ երկակիություն (երկրամասականություն) չկա: Իսկ Ա. Խ.-ն «Մտքի դեֆիցիտի մասին» հոդվածում «եզրակացրել» է, թե զրահապատականության» միջոցով հեթանոսությունը անցում է կատարել դեպի հրիստոնեությունը...»: Իսկ Զրադաշտի ազդեցության հիրույթների մասին Մովսես Խորենացին գրել է. «Զրադաշտ մոգը՝ բակտրիացիների, այսինքն մեդացիների թագավորը...» (էջ 92): Կ. Յուզբաշյանի եւ Ա. Խ.-ի համանման «եզրակացություններ» մերժելի են: Զրադաշտականության երկակիությունը V դարում ենթադատել է եզնիկ Կողբացին. «Ոմն Զրադաշտ (արեգակի եւ լուսնի «ստեղծումը» - է. Դ.) մի դեպքում անառակությամբ է բացատրում, իսկ մյուս դեպքում, ամոթը ծածկելու նպատակով...» («Եղծ աղանդոց», Ե., 1970, էջ 98-99): Ա. Խ.-ն, գրել է, որ «պետք է առանձնացնել Բյուզանդիայից եկած հրիստոնեությունը...», դրանով իսկ Հայաստանում հրիստոնեության տարածման ժամանակը համարել է IV դ. ոչ ըստ, հանգի Արեւելա-Հռոմեական կայսրության «բյուզանդականության» սկիզբը համարվում է: Այնինչ, ըստ ավանդության, Հայաստանում եկեղեցին հաստատվել է Ս. Թադեոս եւ Ս. Բարդուղիմեոս առաքյալների քարոզությամբ՝ I դարում, Հայոց Աբգար թագավորի օրոք՝ իշխանության ղեկին գտնվող հանդարտասկանների, որոնց կրկին տարբեր պիտակներ տալով, այդ կուսակցության գաղափարախոսության՝ «նացիզմի տաղերի ոգեղերների» համար «ամենահարմար դաշտը» «ժողովական Հայաստանում» «համարել» է պատմագիտությունը: Սոցիալական անարդարությունները «ենթադատելու» պատրվակով, Ա. Խ.-ն «Թասիբի դեֆիցիտի մասին» հոդվածում, հոդարկվելով «ցանկացած ռեժիմ դատապարտելու» համար «Մահաթմա Գանդիին ուսումնասիրելու» «կարգախոսով», իրականում լծվել է եւ ազգային, եւ հակամարդկային գաղափարախոսության «մարտակառքին» ու, ենթագրելով Հայոց պատմությունը, գրել է. «Այսպիսով, սա է հայի ձեռքով հայ ազգի նկատացումը՝ հայոց իսկական ջարդը, եւ ոչ թե 1915 թվականը, որն ընդամենը ֆիզիկական բնաջնջում եր եւ որը, գաղտնիք չէ, մեծ խթան դարձավ ազգի համախմբման ու հզորացման գործում, ի տարբերություն ներկայիս հաղարկրթական աղեսի: Ժամանակն է վերջապես գիտակցելու, որ ազգի թշնամին Անկարայում կամ Բաքվում չէ, եւ պետք է դադարեցնել նրա որոնումներն ու ձեռնարկել կոնկրետ քայլեր այս աղեսի հաղթահարման գործում: Սկզբի համար անհրաժեշտ է վերականգնել գոնե հայերին բնորոշ թասիբը...»: Ակնհայտ է՝ ինչպես է օտար լեզվամտածողություն որդեգրած, «թասիբ» բառը հեռաթ Ա. Խ.-ն խեղանդամացնում հայ ժողովրդի պատմական անցյալը: Օսմանյան կայսրության եւ երիտթուրքերի ցեղասպանական (գենոցիդալ) «հաղարական» բաղադրիչ իրագործվեց ավելի հան մեկ ու կես միլիոն հայերի եղեռնը Արեւմտյան Հայաստանում եւ կայսրության մյուս շրջաններում: Ինչպես կարող էր եղեռնը «խթան» դառնալ «ազգի համախմբման ու հզորացման գործում». կոտորածներից մի կերպ փրկված արեւմտահայության բեկորների ընդամենը մի մասը աղատասնեց Հայաստանի առաջին Հանրապետությունում, իսկ մյուսը՝ աշխարհի տարբեր երկրներում: Խեղաթյուրմամբ՝ պատմության մոռացության «խոռոչ» եւ օտար գաղափարներին ծառայելով՝ սեփական ազգի եւ հայրենիքի պատվի նսեմացումը «հաղարական աղեսի» բաղադրատարրերն են: Գարեգին Նժդեհի հիշատակի եւ բարի համբավի վարկաբեկումով նրա հայրենանվեր կերպարը մոռացության տալու «հերոսատատասիկներ» ձիգերը հոդվածրիվ են լինում՝ բախվելով մեծ Մտածողի եւ Զորավարի իմաստության ամակոտ գաղափարական ամոթին, որի ճակատին գրված է. «Վա՜յ այն ժողովրդին, որի անցեալն իր համար լոկ մի գերեզման է անխոս: Ցավ՝ աւելի մեծ ճառայութիւն՝ իր ժողովրդին, քան պատմագրումը նրա անցեալ կեանքի... Գերերջանիկ է մարդը, որ կարող է ասել՝ «Իմ հայրենիքում արեւը ծագում է բոլորի եւ ամէն մեկի համար. այնտեղ երկիրը մշակելու եւ հոգեպէս մշակելու ազատութիւն ունեմ ես», «Հայրենիքը - այդ երկիրը մշակող ժողովրդի ոգին է, նրա մշակոյթը... եկող ու անցնող սերունդների անմահութիւնն է, որն իբրեւ գաղափար եւ գործ ժողովուրդը դրոշմում է նիւթի վրա, խօսքի մէջ, եւ այն արթնցնում իբրեւ անմեռ յուշ, իբրեւ պատմութիւն» (Գարեգին Նժդեհ, Բանտային գրառումներ, Երեւան, 1993, էջ 24, 31-32): Հայոց պատմության եւ դրանով իսկ ազգային գաղափարախոսության դեմ ուղղված կեղծիքի բացահայտումը եւ հանրությանն իրազեկումը ազգային անվտանգության խնդիր է: ■

ԱԶԳ-ՆԵՐԴԻՐ

Գրախոսություն

Լույս է տեսել ՀՀ կրթության եւ գիտության նախկին նախարար (1999-2001), խորհրդային Հայաստանի վերջին տարիներին ժողովրդական կրթության նախարարի առաջին տեղակալ, կրթության եւ գիտության կազմակերմիչ, ՀՀ գիտություններ ի ազգային ակադեմիայի ակադեմիկոս Էդուարդ Ղազարյանի **«Արավինել ազգային դպրոցի ամուր հիմքերին»** հոդվածների, ելույթների եւ հարցազրույցների ժողովածուն («Էդիթ Պրինտ» հրատարակչություն, 2008, չափսը՝ 17 x 24 սմ, 328 էջ)՝ ճանաչված լրագրող **Հասմիկ Գուլակյանի** խմբագրությամբ:

Ինչպես նշում է ժողովածուի ծանոթագրությունը, այս հրատարակումներում, մոտ երեսուն տարվա ընդգրկումով (1976-2006 թթ.), «ներկայացվում են հեղինակի մտքերը, պատկերացումները, ինչպես նաեւ մտահոգությունները հանրակրթության, բարձրագույն կրթության եւ գիտության ոլորտներում շատ-նակաբար տեղի ունեցող գործընթացների վերաբերյալ»: Այս տեսակետից ժողովածուն չափազանց օգտակար մի հրատարակություն է կրթության եւ գիտության գործի կազմակերմիչների համար: Ավելին՝ գիրքն օգտակար է յուրաքանչյուր հայ անհատի համար, մասնավորաբար ՀՀ-ում:

Ժողովածուն բացվում է հեղինակի «Երկու խոսքով» (էջ 3-4): Հաջորդում է Ժանն Մխիթարյանի «Վիրտական հյուսվածք կամ հավատի մեխանիկա» նախաբանը (էջ 5-11), որն արժանի խոսք է հեղինակի հիրավի մեծ վաստակի մասին:

51 հրատարակումների մեծագույն մասը նախատես լույս է տեսել հանրապետական մամուլում, առավելաբար հայերեն, փոքր մասը՝ ռուսերեն, որոնք ներկայացվել են բնագրով: Տեղ են գտել նաեւ մի քանի անտիտղեր, ինչպես եւ հեղինակի՝ որպես ՀՀ ԳԱԱ փոխնախագահի ակադեմիկոս-քարտուղարի տարեկան հաշվետու զեկուցումները 2004 եւ 2005 թվականներից: Այդ հրատարակումները դասակարգվել են թեմատիկ չորս գլուխներում, թեեւ, հասկանալի է, անհնար է զուտ մեխանիկորեն բաժանել ըստ էության օրգանապես միացած թեմաները՝ «Կրթություն. ազգային դասընթացակարգեր», «Հանրակրթություն. հիմնախնդիրները եւ զարգացման հեռանկարները», «Բարձրագույն կրթություն. բարեփոխումների գումարելիները» եւ «Հիմնարար գիտությունը՝ ճակատագրի բաղադրիչ»:

Էդուարդ Ղազարյանը միանգամայն հաստատված է, որ ամեն ինչի հիմքը ազգային դպրոցն է, որի ուղղությամբ նա պայքարել է նույնիսկ խորհրդային տարիներին, երբ ամեն ազգայինը, առնվազն, չէր խրախուսվում, իսկ հանրապետությունում տարվում էր ռուսացման եռաստիճան քաղաքականություն՝ վերնախավ կոչված խումբ թե բացահայտ մեղսակցությամբ: Բավական է մեջբերել հեղինակի հայտնած ամոթալի այն տվյալը, թե ազգային վերազարթոնքի առաջին տարում՝ 1988 թվականին, «Երեւանի հանրակրթական դպրոցների սովորողների 25 տոկոսի ուսուցումն իրականացվում էր ռուսաց լեզվով» (էջ 36): Հասկանալի է, որ այդ դպրոցներում սովորում էին գերազանցապես հայազգի երեխաներ... «Այնպիսի մենագ հանրապետությունում, ինչպիսին Հայաստանն է, չթեմ է տարալեզու ուսուցման դպրոցներ լինեն» հայազգիների համար (էջ 37), հայտարարում է հեղինակը, որի կրթության ոլորտը ղեկավարելու տարիներին, դրանցից առաջ եւ հետո եւ նույնիսկ առայսօր մեծաթիվ հայազգի երեխաներ, այդուամենայնիվ, սովորում էին եւ սովորում են այդպիսի տարալեզու դպրոցներում կամ հայկական դպրոցների օտարալեզու դասարաններում՝ ՀՀ կրթության եւ գիտության նախարարության ու նրա Լեզվի պետական տեսչության կոչված կառույցի չինովնիկների հանցավոր մեղսակցությամբ...

Ըստ հեղինակի՝ «Հայ մարդն իր ազգային պատկանելությամբ հպարտանալու հիմքեր պետք է ունենա» (էջ 17), որի «ձեւավորման գործում առանձնահատուկ դեր ունի հայոց պատմությունը» (էջ 18): «Երեխաների մեջ ուսումնասիրության արթնացման ամենահզոր ազդակն ազգային գրականն է»,- հայտարարում է Ղազարյանը (էջ 196):

Հեղինակը մասնահատուկ կերպով կարեւորում է մայրենի լեզվի դերը անհատի՝ որպես ազգի մասնիկի ձեւավորման մեջ: Նա հաստատված է, որ «Լեզվի ուսուցումը պետք է հիմնվի գեղարվեստական գրականության վրա» (էջ 18) եւ ոչ թե երեխան լեզուն սովորի առանց հայ գրականության առաջադեմ ընթերցանության, առավել եւս փողոցից կամ հեռատեսությունից, որի լեզուն, ըստ մեզ, կարելի է ամեն ինչ անվանել, բայց ոչ՝ հայերեն: Գեղարվեստական գրականության ընթերցումն ուրիշ առավելություններ եւս ունի. նրա դերն «անփոխարինելի» է «աշակերտների պատմամշակութային գիտակցությունը, հոգեբն ու սիրտը, ստեղծագործելու կարողությունը մշակելու գործում» (էջ 159, 242, 251):

Ակադ. Էդուարդ Ղազարյանը կարեւոր է, որ «հայեցի կրթությունը պետք է կողմնորոշված լինի «դեպի երկու կարգի արժեքներ՝ ազգայինն ու համամարդկայինը», այսինքն՝ Դերենիկ Դեմիրճյանի բնորոշմամբ՝ դեպի «հայկական համամարդկայնությունը» (էջ 19): Ըստ հեղինակի՝ ազգային դպրոցի «նպատակն է՝ ձեւավորել բազմակողմանիորեն զարգացած անձ՝ դասընթացված հայրենասիրության, պետականակամության եւ հումանիզմի ոգով» (թարգմ. ռուսերենից, էջ 143): Հեղինակը դիտույթ նկատել է տալիս, թե «որքան դպրոցը սակավ ազգային է, այնքան միշ է ընդունակ լուծելու անհատի կրթության եւ զարգացման խնդիրները» (էջ 28): Սակայն հայազգի երեխայից հայ անհատ կերտելու համար «ուսուցիչն ինքը պետք է հայ ոգու կրողը լինի» (էջ 30, 34, 196): «Ստեղծագործ անձ, գիտակից, հայրենասեր, բարոյական անհատ դաստիարակելու համար ուսուցիչն ինքն այսպիսին պետք է լինի» (էջ 211),- հաստատում է ակադեմիկոսը: «Կրթությունը, ինչպես եւ մշակույթը, ազգային երեւույթ են,- պնդում է նա եւ անմիջապես ավելացնում,- հեռեւապես խորապես ազգային, առանձնահատուկ են նաեւ այդ ճգնաժամից դուրս գալու ուղիները» (էջ 65), մի դեղատոմս, որից հաստատորեն չեն ուզում օգտվել մեր հանրապետության ղեկավարները՝ կրթության եւ գիտության ոլորտներում անընդհատ փորձարարություններով զբաղելով՝ առանց հենվելու ազգային առանձնահատկությունների վրա: Հավանաբար դա նկատի ունի հեղինակը, երբ արձանագրում է. «Ամենագլխավորն այն է, որ բոլոր այս վերափոխումները կատարվեն կրթության ազգային փիլիսոփայության, ազգային մտածողության ոգով: Իսկ դրա համար ամենից առաջ անհրաժեշտ է հենց ազգային փիլիսոփայությունն ազատել օտարամուտ «իզմերից»...» (էջ 65), մինչդեռ ամեն ազգայինը «իզմ» խեղդում է ՀՀ ոչ միայն կրթությունն ու գիտությունը, այլեւ կենսագործունեության բոլոր բնագավառներն առանց բացառության՝ այն էլ՝ վերջին տասնամյակին իշխանության դեկի մոտ գտնվող իբրեւ թե «ազգայնական» դաշնակցա-հանրապետականների օրերին: Հեղինակն ու շատ շատեր գիտակցում են, որ «Կրթության, մշակույթի եւ գիտության կորուստները հաճախ անվերականգնելի են...» (էջ 67), մինչդեռ ղեկավարների մեծ մասն ամեն ինչ անում է այդ կորուստներն անվերականգնելի դարձնելու համար՝ այդպիսով հեշտացնելով մեր բնանվիների նոպատակի իրականացումը՝ անկախ պետականության եւ Հայրենիքից հայկական մնացած այս մի բուռ տարածի կորուստը:

Հեղինակի մտորումների եւ տեսակետների մեծագույն մասն այժմեական է: «Հայասատանի անկախության մասին» հոդվածի (որի 10-րդ կետը սահմանում էր. «Հայաստանի Հանրապետությունը ապահովում է հայերենի՝ որպես պետական լեզվի գործառությունը հանրապետության կյանքի բոլոր ոլորտներում») հրապարակումից ընդամենը հաշված օրեր անց՝ 1990 թ. սեպտեմբերի 1-ին «Հայաստան» թերթում լույս տեսած մի հարցազրույցում, պատասխանելով լրագրողի՝ «Ազգային դպրոցի մասին որոշման 6-րդ կետով չեղյալ է համարվել ռուսական առաջին դասարաններում կատարված հայազգի երեխաների ընդունելությունը: Ինչպե՞ս է ընթանում այդ գործընթացը» հարցին (էջ 111), հանրապետության ժողկրթության նախարարի առաջին տեղակալ է. Ղազարյանը պատասխանում է. «Բավական հիվանդագին: Որոշ ծնողներ, հատկապես մեր հայրենադարձ փախստականներից, այն կարծիքին են, որ այս որոշումն անընդունելի է» (էջ 112):

Կարելի է ցավով հաստատել, որ մեկ սերունդ անց էլ վիճակը նույնն է. հայերենը դուրս մղող ռուսերենին միացել է նաեւ ամենակուլ անգլերեն-«ամերիկերենը»: Բավարար է հիանցիկ հայացք նետել հատկապես երեւանյան ցուցանակներին եւ տախտակներին, հանդզվելու համար, թե գտնվում ես ... ԱՄՆ-ի մի նահանգում կամ, լավագույն դեպքում, Ռուսաստանի մի գավառում:

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի հոչակած «Գրագիտության տարուն» (1990 թ.) լույս տեսած մի հարցազրույցում, Էդուարդ Ղազարյանը հայտարարում է. «Անգրագիտությունը մարդկային ցեղի գլխավոր սոցառնչին է, նրա լինել-չլինելու ահավոր պայմանը» (էջ 103) եւ ավելացնում. «Այսօր ունենք անգրագիտության ոլորտ ոչ ոչ ոչ միայն ուղղակի իմաստով: Եվ դա լուրջ ոլորտ է: Խոսքը հարյուր հազարավոր փախստականներին ու նրանց ապրուստի մեր հայրենակիցներին մայրենի լեզու սովորեցնելու մասին է» (էջ 104): Լավ կլիներ եթե ՀՀ-ում հաջորդ՝ 2009 թվականը եւս հայտարարվեր «Գրագիտության տարի» եւ մայրենի լեզու սովորել պարտադրվեր բոլորին, մասնավորաբար ՀՀ ղեկավար առաջին դեմքերին, նախարարներին, Ազգային ժողովի մեծ մասամբ անգրագետ-տգետ «ընտրազանգվածին», հեռուստատեսությունների «աստղերին», «գերաստղերին» եւ այլն, եւ այլն, եւ այլն... Չէ՞ որ հեղինակի դիտույթ դիտարկումով՝ մարդու խոսքը «միաժամանակ բնութագրում է անձի հոգեւոր ախարհը, կրթվածության աստիճանն ու խորագիտությունը» (էջ 211): Եթե այս չափորոշիչով առաջնորդվենք, պարզորեն պիտի հաստատենք, թե վերոհիշյալների հոգեւոր ախարհը ծայր աստիճան աղքատ է, կրթվածության աստիճանը՝ չափազանց ցածր, իսկ նրանց խորագիտության մասին երեւակայելն առեղծծելի է...

Առանձին հարց է ՀՀ հանրակրթական դպրոցներում դասագրքերի խնդիրը: «ԿԳՆ-ն նախեւառաջ պատասխանատու է դպրոցական դասագրքերի բովանդակության համար», հայտարարում է նախարար է. Ղազարյանը՝ խոստովանելով, թե «դասագրքերի հանձնաժողովի ախատանքի վրա բացասաբար է ազդում նաեւ սուբյեկտիվ գործոնը: Շատ դժվար է անկողմնակալ լինել, քանի որ կան ճշմարտություններ» (էջ 126): «Ամենեւին, միջնորդություններ» (էջ 126): «Ամենեւին հրատարակ է հումանիտար առարկաների (պատմություն, հասարակագիտություն, գրականություն եւ այլն) դասագրքերի բովանդակության համապատասխանեցումն այդ գիտությունների մակարդակին եւ սովորողների բարոյագեղագիտական ու հաղորդակցական-հայրենասիրական դաստիարակության խնդիրների իրագործման ավանդույթին» (էջ 159, 241-242, 250), մի էական պահանջ, որը ՀՀ-ում սկզբից ենթադրվում էր եւ մնաց հիմնականում ցանկության մակարդակի: Արդյունքն, իհարկե, խայտառակ բովանդակությամբ դասագրքերն են, որոնց մեծ մասը «փայլում» է իր ազգային ոգով, դժվարհասկանալի շարադրանքով եւ այլն: Դեռ չենք խոսում տարբեր միջազգային կազմակերպությունների պարտադրած փորձարարական փորձանմ-բոգրերի ու դրանց դասագրքերի մասին (երեխաներին կոսմոպոլիտ դաստիարակություն ջամբող «Բարեւ, ես եմ» գրքույկը, «Սեռական դաստիարակություն» շարքը եւ այլն, որոնք «դասագիրք» անվանելն արդեն իսկ սրբապղծություն է...): Սակայն որն Ղազարյանին կարծես այնքան էլ չեն հուզում օտար ներթափանցումները հայկական կրթահամակարգ: Դրա ապացույցներից է նրա առաջարկը՝ «Արտաքին ոլորտային միջոցների դրամաշնորհների, տեխնիկական ու մարդասիրական օգնության եւ անհատ բարեգործների նվիրատվության կենտրոնացված հիմնադրամի ստեղծումը՝ դպրոցների հոգատար հարցերը լուծելու նպատակով» (էջ 121): Նա չի հասկեցնում, թե ո՞վ է տնօրինելու այդ հիմնադրամը՝ ՀՀ պետությո՞ւնը, թե՞ այլք, մինչդեռ, մեր համոզմամբ, գոնե հանրակրթության տնօրինումն ու հսկողությունը պետք է լինեն ՀՀ-ի՝ որպես պետության, բացառիկ պարտավորությունը: Հեղինակը կարծես գոհ է նույնիսկ, որ օտարներն «օգնում» են ՀՀ կրթահամակարգին: Նա հայտնում է. «Համաշխարհային բանկի՝ Հայաստանում իրագործվող հանրակրթության զարգացման վարկային ծրագրի ուղղություններից մեկն էլ ուսուցման համակարգչայնացումն է: Անցյալ տարվանից (1999 թ. - Գ. Յ.) հանրապետության դպրոցներում իրականացվում է նաեւ ինտերնետային կենտրոնների հիմնադրման ԱՄՆ կառավարության ծրագիրը՝ մի քանի միլիոն դոլար արժողությամբ» (էջ 133, 149, 166, 253): Այս առթիվ հարց ուղղենք որն Ղազարյանին եւ ՀՀ կրթության ու լեզվի ոլորտի նախկին ու ներկա բոլոր պատասխանատուներին. «Իսկ այդ համակարգիչների ծրագրերը հայերեն են»: Եթե ոչ, ո՞վ է ձեզ իրավունք տվել խախտելու ՀՀ սահմանադրության եւ օրենքների՝ լեզվական պահանջների վերաբերյալ դրույթները կամ այլ փակել այդ խախտումների առաջ: Կարելի՞ է ազգային դպրոց պատկերացնել առանց հայոց լեզվով համակարգչային ծրագրերի.... Համաշխարհային բանկի վարկով ՀՀ-ում իրականացվող կրթական ծրագրից են նաեւ 1997 թ. սեպտեմբերից «Կրթության ֆինանսավորման եւ կառավարման բարեփոխումները», որոնց բաղադրիչներից են «Դասագիրք» (էջ 144), ինչպես նաեւ «հանրակրթության կառավարման պակենտրոնացմանը եւ ֆինանսավորման նոր եղանակի ներդրմանն» ուղղված (էջ 161) ծրագրերը:

Ուսուցիչ կադրերի պատրաստման եւ երեխաների վերապատրաստման, նրանց սոցիալական վիճակի հարցերը է. Ղազարյանի մտահոգությունների կիզակետում են: Ըստ նրա՝ 2000 թվականին հանրապետության դպրոցներում ախատում էր «ոչ 60 հազար ուսուցիչ, որից 12 հազարը չունի մասկավարժական, ավելի՞ բարձրագույն կրթություն» (էջ 131, 164, 244, 252), իսկ «գյուղական դպրոցների մեծ թվով ուսուցիչներ չունեն բարձրագույն կրթություն» (էջ 160, 251): Ոնթ տարի անց, կարծում եմ, այս տխուր պատկերը գրեթե նույնն է եւ հոի է ոչ հեռավոր ապագայում լուրջ խնդիրներով, մասնավորաբար եթե նկատի ունենանք նաեւ մանկավարժների համատարած իգականացման (ֆեմինիզացիա) երեւույթը: «Ուսուցիչ պատրաստելը ոչ միայն կրթական, այլեւ ազգային ու պետական գործ է» (էջ 193), այո՛, եւ «յուրաքանչյուր հասարակության, յուրաքանչյուր ազգի բոլոր հաջողություններն սկսվում են ուսուցչից» (էջ 195): «Հայաստանի կրթական համակարգի զարգացումը կասեցնող հիմնական գործոնը թերֆինանսավորումն է»,- համոզված է հեղինակը (էջ 161), որի պատճառով էլ «...բազմավորվում է 2005 թվականին պետբյուջեից ծախսերի ծավալն ավելացնել մինչեւ ՀՆԱ-ի 3 %-ը (գոյություն ունեցող 1 %-ի փոխարեն)» (թարգմ. ռուսերենից, էջ 151):

Ակադեմիկոսին չափազանց հուզող հարցերից է կրթության եւ մշակույթի, կրթության եւ կյանքի, նույնիսկ կրթության եւ գիտության խզումը, որն անհրաժեշտ է վերացնել (էջ 63), այլապես լճացումն ու հետընթացն անխուսափելի կլինեն:

Շարունակությունը՝ էջ 5

ԳԵՎՈՐԳ ՅԱՔԸՃՅԱՆ
Պատմ. գիտ. թեկնածու

Ակադեմիկոս Էդուարդ Ղազարյանի խոհերը ՀՀ հանրակրթության, բարձրագույն կրթության եւ գիտության տարբեր հարցերի մասին

Գրախոսություն

Ակադեմիկոս Էդուարդ Ղազարյանի խոհերը ...

է էջից

է. Ղազարյանը 11-ամյա դպրոցի անցումը հիմնավորում է երեք գործոններով՝ հանրակրթության ոլորտի անկումով, երեխաների ֆիզիկական եւ նյութական զերբեռնվածությամբ եւ Սովետի երկրների մեծ մասում 12-ամյա, որոնք երկրներում՝ նույնիսկ 13-ամյա դպրոցի առկայությամբ: «... երբ ուսուցման ժամկետը 2-3 տարով պակաս է, մեր երգանավարտների կրթության փասաթուղթը չի ճանաչվի որեւէ երկրում»,- 11-12-ամյա ուսուցման օգտին փորձում է եւս մեկ փաստարկ բերել հեղինակը (էջ 134): Ամենն դեռեւում 10-ամյա դպրոցի 11-12-ամյակի վերածման նոա հիմնավորումներն այնքան էլ համոզիչ չեն:

«Անհնար է խոսել երեխաների լիարժեք զարգացման համար անհրաժեշտ միջավայր ստեղծելու մասին, եթե երկիրն անցումային երգանում է,- հայտնում է հեղինակը եւ ավելացնում,- ահա թե ինչու ուսուցիչը պահանջվում է լինել նաեւ հոգեբան, սոցիոլոգ, բախումնաբան» (էջ 139, 164, 171): Եթե մինչեւ 2002 թ. մայիսը ՀՀ-ում «իրականացվում են յոթ տիպի կրթական ծրագրեր» (էջ 144), ապա, այնուամենայնիվ, աշակերտն անհաղորդ է մնում թե սեփական, թե հասարակական պատմությանն ու մշակույթին: «Սա սոսկ գիտելիի պակաս չէ. այս չարիքի հետեւանքը շատ ավելի լուրջ կարող է լինել՝ ՀՀ-ում մարդկային եւ ազգային զարգացման տեսանկյունից»,- զգուշացնում է հեղինակը (էջ 159, 242): Նա միանշանակ նկատել է տալիս, թե «տեղեկատվական հեղեղի պայմաններում հնարավոր չէ անվերջ ավելացնել տվյալ գիտելիքների ծավալը, անձի հետագա զարգացումը պետք է հիմնվի դպրոցում ստացած ընդհանուր, հիմնարար կրթության վրա» (էջ 158): Հետեւաբար շեշտը դնելու է դպրոցում հիմնարար գիտելիքեր ջամբելու վրա: «Խորհրդային կրթական համակարգում կար երկու մեծ, անժխտելի առավելություն՝ կրթության հիմնարարությունը եւ կրթության հանրագիտայնությունը»,- նշում է հեղինակն իր բազմաթիվ ելույթներում:

է. Ղազարյանը «կրթություն» հասկացությունը սահմանում է իբրեւ ուսուցման եւ դաստիարակության հանրագումար (էջ 239): Նա ափսոսում է, որ եթե առաջինը ինչ-որ չափով արդիականացվում է ՀՀ դպրոցներում, ապա երկրորդը հաճախ կարում է կամ բացակայում, որով երեխան լիարժեք կրթություն չի ստանում դպրոցում:

Բարձրագույն կրթության ոլորտում եւս նա շատ է կարեւորում ազգային գործոնի դերը: Նա գրում է, թե «իբրեւ կրթությունը, գիտությունը եւ մշակույթը հաճախող միակ կաթույթ՝ հանձնարարը պետք է զարգանա ազգային մշակութաբանական հիմքի վրա» (էջ 226):

Խորհրդային մասնագիտ են ավելի քան 40-ամյա գիտական աշխատանքի փորձ ու շուրջ երեսնամյա գիտական կազմակերպչի վաստակ ունեցող ակադեմիկոս էդուարդ Ղազարյանի դիտարկումներն ու մտորումները ՀՀ-ում գիտության վիճակի մասին, որոնք հոդեստությամբ են հանձնում ընթերցողին՝ ի տես այս կարեւորագույն բնագավառի նկատմամբ իշխանությունների վարած հաղթականության, որը կարելի է անվանել «հակագիտական» («գիտության դեմ» իմաստով) գնահատել: «Բուհերի պրոֆեսորադասախոսական կազմն ունի անկնիայ ծերացման միտում, միջին տարիքը 56-58 է» (էջ 165), գիտության ոլորտում տարիքային ցուցանիշն ավելի վատթար է: ՀՀ ԳԱԱ 2004 թ. հանձնաց տարեկան հաշվետվության մեջ նա հայտնում է, որ «այսօր ակադեմիկոսների միջին տարիքը 74 տարի է, թղթակից անդամներինը՝ 68, գիտությունների դոկտորներինը՝ 65» (էջ 296): Հավելելով, որ հետագա տարիներին ակադեմիկոսների տարիքը նվազելու՝ արժանավորների շարում իսկական եւ թղթակից անդամ «ընտրելով» գիտության մեջ համեստ վաստակ ունեցողների, նույնիսկ՝ գիտությունների թեկնածուների, մի բան, որ անհասկանալի է: Նմանապես, ակադեմիայի հանձնարարականների ինստիտուտների տնօրենների նկատմամբ գիտությունների թեկնածուներ՝ հաճախ առանձնահատուկ դոկտորների մանկավարժական ու գիտական վաստակը: Մի՞թե նման անընդունելի երեւույթներով պետք է իջեցվեր ակադեմիկոսների տարիքային միջին նշանակը... Սակայն արժեչափերը հիմնովին խախտված մեր ժամանակներում ամեն ինչ է հնարավոր դարձել, ուստի չպետք է զարմանալ, առավել եւս՝ զայրանալ:

է. Ղազարյանը «խիստ վտանգավոր» է հայտարարում «գիտության նկատմամբ հասարակական վերաբերմունքի վատթարացումը»: Հետաքրքրական երեւույթ նկատի ունենալով, նա գրում է. «Վերջին տասնհինգ տարում կտրուկ ընկավ գիտության վարկանիշը: Հասարակական գիտակցության մեջ համառորեն արձանագրվում է այն միտքը, թե «Հայաստանում գիտությունը չափազանց շատ է», եւ թե պետությունն ի վիճակի չէ նոան պահպանել ու զարգացնել այդ ծավալով» (թարգմ. ռուսերենից, էջ 287): Գիտության եւ գիտնականների նկատմամբ անտարբեր, նույնիսկ անարգական վերաբերմունքի դրսեւորումներ են ՀՀ ԳԱԱ-ն վերացնելու, նրա ինստիտուտները բուհերին կցելու կամ ակադեմիան հասարակական կազմակերպության վերածելու՝ հայաստանյան զանգվածային լրատվամիջոցներում պարբերաբար հայտնվող տեղեկությունները, որոնց անդադարոնում է է. Ղազարյանը ժողովածուի վերջին գլխի հրատարակումներում:

Նման հանգավոր մոտեցման մեկ այլ ապացույց է անտարբերությունը կադրերի հոսունության նկատմամբ. «Մեծ թվով երիտասարդներ, պատրաստելով ատենախոսությունը, թողնում են գիտությունը եւ տեղափոխվում բարձր վարձատրվող այլ ոլորտներ կամ մասնագիտական աշխատանքի գնում արտասահմանյան գիտական կենտրոններում: Այս երեւույթի հիմնական պատճառը աշխատանքային եւ սոցիալական անբարենպաստ պայմաններն են»,- իր մի քանի ելույթներում ցավով հայտնում է ակադեմիկոս հեղինակը: Նա «նվաստացուցիչ» է հայտարարում այսօր «գիտական աշխատանքի համար տվող վարձատրության» չափը եւ պահանջում դա վերանայել (էջ 305): «Հայաստանում փաստորեն ոչ ոք չի մտածում, թե ո՞վ է պաղն աշխատելու գիտության մեջ, ո՞վ է գալու փոխարինելու ծերացող եւ կյանքից հեռացող գիտնականներին»,- արձանագրում է նա (թարգմ. ռուսերենից, էջ 310):

Ըստ հեղինակի՝ «Գիտության եւ գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի մի շարք դրույթներ «ըստ էության, չեն կատարվում»: Օրինակ՝ «սկսած 2002թ. պետությունը գիտությանը միջոցներ է հատկացնում պետական բյուջեի տարեկան ծախսային մասի՝ երեք տոկոսի փոխարեն մեկ տոկոսի չափ: Անհրաժեշտ է հարգել օրենքը եւ գիտնականներին օրենքների նկատմամբ թերահավատորեն չտրամադրել» (էջ 296): Եթե պետական մարմիններն են օրենքներն արհամարհում, հասարակ խաղաղին ինչո՞ւ այդպես չվերաբերվի առհասարակ բոլոր օրենքներին: «Միայն ձեւականորեն մեր պետությունն իբր օժանդակում է կրթությանն ու գիտությանը, պատրաստ է գործի մեջ դնելու առկա իմացական ներուժը: Սակայն, դժբախտաբար, դրանք պարզապես բառեր են: Իրական նեցուկը բացակայում է»,- մասը վերին է դնում է. Ղազարյանը (թարգմ. ռուսերենից, էջ 309):

Հեղինակը կոչ է անում վերացնել այսօր գոյություն ունեցող խզումը գիտություն տեխնոլոգիա - արտադրություն - տուկա շղթայում (էջ 288) եւ պահանջում. «Պետությունը պետք է դիտորդի գիտության նկատմամբ իր կեցվածքի հարցում եւ հասկորեն պատկերացնի նրա արդյունքների օգտագործման հնարավորությունը երկրի տնտեսական զարգացման մեջ» (թարգմ. ռուսերենից, էջ 310):

Մեր կարծիքով ակադ. էդուարդ Ղազարյանի մի շարք մտքեր վիճելի են, ոմանք՝ հակասական, ուրիշներ՝ հասկեցման կարոտ, իսկ որոշները՝ պարզապես անընդունելի: Այսպես՝ (մեջբերումներում բոլոր ընդգծումներն իմն են - Գ. Ց.)՝

- Հեղինակը մի քանի ելույթներում առաջ է քաշում «...հանրակրթական ոլորտի առաջնահերթ խնդիրը կրթության որակի արդիականացումն է» դրույթը (օրինակ՝ էջ 128, 148): Այս մտքերը համահունչ են «Հանրակրթության պետական կրթակարգ» կոչված արդագային փաստաթղթի տարին եւ ոգուն, մի փաստաթուղթ, որի մասին բացատական կարծիք էր ներկայացրել ՀՀ կառավարության առընթեր «Նորավանք» գիտակրթական հիմնադրամը, բայց դա հաշվի չառնվեց, որովհետեւ ուժերն անհավասար էին (հակառակ կողմում Համաշխարհային բանկն էր): Սույն «Կրթակարգի» «Նախաբանում», փաստաթղթի հենց առաջին էջում գրված է. «Կրթակարգը մշակվել է **միջազգային ժամանակակից փորձի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության** սոցիալական, տնտեսական, հաղաղական, գիտակրթական, մշակութային **գործոնների հաշվառմամբ**»: Մինչդեռ ճիշտ հակառակը պիտի լիներ՝ ՀՀ-ում կրթական ավանդույթների հիմքի վրա՝ հաշվի առնելով համաշխարհային փորձը: Ի դեմ, այս վերջին մտքին համահունչ են որոշ Ղազարյանի հետեւյալ դատողությունները. «Միջազգային չափանիշները եւ, առհասարակ, միջազգային կրթափորձը նկատի առնելը չի՞ վտանգի արդյոք կրթական համակարգի ազգամետ բարեփոխումը: Ներհակ թվացող խնդիրը պետք է լուծել համընդհանուր միտումների եւ ազգային յուրահատկությունների ճիշտ հարաբերակցության սահմանումով՝ ուղղված ի վերջո հայ անհատի զարգացմանը եւ նեոազգային ինքնդրմանը» (էջ 45) , «...որոնք հիմնական նյութ, հիմնական ատաղձ եւ ելակետ ունենալով ազգայինը՝ պետք է համարձակորեն գնալ դեպի համամարդկայինը» (էջ 66): Այսպիսով՝ հեղինակը հակասում է ինքն իրեն, երբ մի տեղ առաջնային է ընդունում ազգային, այլ տեղեր՝ միջազգային կրթական փորձը:

- Հեղինակը գրում է. «Ազգային լեզվի նկատմամբ հոգատար վերաբերմունքը պետք է զուգորդվի ռուսաց լեզվի իմացության համակողմանի ամրապնդմամբ: Այդ ուղղությամբ հիմնական ճանապարհներից մեկը հայկական դպրոցում առանձին առարկաներ միաժամանակ երկու լեզվով՝ հայերեն ու ռուսերեն զուգահեռաբար դասավանդումն է» (էջ 29), «Մասնավոր ուսումնական հաստատությունները պետք է լիովին ինքնուրույն լինեն ուսումնադաստիարակչական գործունեության կազմակերպման, ուսուցման միջոցների, ձեւերի ու մեթոդների, ինչպես նաեւ սովորողների համակազմի ու համադասական կրթությամբ ճանկավարժական կադրերի ընտրության հարցում» (էջ 115): Ինչ է սա նշանակում. այն, որ որեւէ դպրոց իրավունք ունի ինքնուրույն անցնել «երկլեզու» (բազմալեզու) ուսուցման մեթոդի: Այսպիսով՝ որն Ղազարյանը բացահայտում է, որ ընդունելի է պրոֆ. Բելա Եսաջանյանի՝ ՀՀ կրթական համակարգում «գիտափորձի կարգով» ներդրած «երկլեզու» (բազմալեզու) ուսուցման մեթոդափորձանքը, որն այնքան հետեւողականորեն պատասխանում էր ԿԳ նախկին փոխնախարարներից Միհրա Թոփուզյանը (ի դեմ, այդ շրջանում ՀՀ ԿԳ նախարարը որն է. Ղազարյանն էր): Հակառակ լեզվաբանների եւ նույնիսկ ակադեմիկոսների (օրինակ՝ հանգուցյալ Սերգեյ Աբրահամյանը) բողոքների, այս փորձանքը շարունակում է իր հարթաշավիղը ՀՀ դպրոցներում՝ խեղելով հայազգի երեխաների լեզվամտածողությունը եւ, ի վերջո, նրանց անձի էթնոհոգեբանական լիարժեքությունը:

- «Քանի որ հենց դպրոցն է դաստիարակում ազգի նոր հերթափոխը, իսկ ազգը գոյատեւում է առաջին հերթին լեզվի շնորհիվ, ապա հանրաթեռությունը պետք է ունենա հայերենով ուսուցման միասնական կրթական համակարգ, որը **հենվի մաշտոցյան հայեցի սկզբունքներին**», հայտարարում է հեղինակը (էջ 32): Սակայն չէ՞ որ մեր դարասկզբի այդ «հայեցի սկզբունքներից» է «ուսուցչակենտրոն կրթահամակարգը», որը «Կրթակարգը» փոխարինել է «աշակերտակենտրոն կրթահամակարգով»: Ուսուցչակենտրոն կրթահամակարգը հոգեհարազատ է հայկական ավանդական ընտանիքի հիերարխիային, որտեղ ընտանիքի գլուխը հայրն է եւ ոչ թե զավակը: Ի դեմ, մտորելու տեղիք է տալիս այն փաստը, թե ինչո՞ւ 2004 թվականին ՀՀ կառավարության հաստատած «Կրթակարգի» մասին կրթության ոլորտում բազմահնուս հեղինակի առնելը չի՞ վտանգի արդյոք կրթական համակարգի ազգամետ բարեփոխումը: Ներհակ թվացող խնդիրը պետք է լուծել համընդհանուր միտումների եւ ազգային յուրահատկությունների ճիշտ հարաբերակցության սահմանումով՝ ուղղված ի վերջո հայ անհատի զարգացմանը եւ նեոազգային ինքնդրմանը» (էջ 45) , «...որոնք հիմնական նյութ, հիմնական ատաղձ եւ ելակետ ունենալով ազգայինը՝ պետք է համարձակորեն գնալ դեպի համամարդկայինը» (էջ 66): Այսպիսով՝ հեղինակը հակասում է ինքն իրեն, երբ մի տեղ առաջնային է ընդունում ազգային, այլ տեղեր՝ միջազգային կրթական փորձը:

- Հեղինակը գրում է. «Ազգային լեզվի նկատմամբ հոգատար վերաբերմունքը պետք է զուգորդվի ռուսաց լեզվի իմացության համակողմանի ամրապնդմամբ: Այդ ուղղությամբ հիմնական ճանապարհներից մեկը հայկական դպրոցում առանձին առարկաներ միաժամանակ երկու լեզվով՝ հայերեն ու ռուսերեն զուգահեռաբար դասավանդումն է» (էջ 29), «Մասնավոր ուսումնական հաստատությունները պետք է լիովին ինքնուրույն լինեն ուսումնադաստիարակչական գործունեության կազմակերպման, ուսուցման միջոցների, ձեւերի ու մեթոդների, ինչպես նաեւ սովորողների համակազմի ու համադասական կրթությամբ ճանկավարժական կադրերի ընտրության հարցում» (էջ 115): Ինչ է սա նշանակում. այն, որ որեւէ դպրոց իրավունք ունի ինքնուրույն անցնել «երկլեզու» (բազմալեզու) ուսուցման մեթոդի: Այսպիսով՝ որն Ղազարյանը բացահայտում է, որ ընդունելի է պրոֆ. Բելա Եսաջանյանի՝ ՀՀ կրթական համակարգում «գիտափորձի կարգով» ներդրած «երկլեզու» (բազմալեզու) ուսուցման մեթոդափորձանքը, որն այնքան հետեւողականորեն պատասխանում էր ԿԳ նախկին փոխնախարարներից Միհրա Թոփուզյանը (ի դեմ, այդ շրջանում ՀՀ ԿԳ նախարարը որն է. Ղազարյանն էր): Հակառակ լեզվաբանների եւ նույնիսկ ակադեմիկոսների (օրինակ՝ հանգուցյալ Սերգեյ Աբրահամյանը) բողոքների, այս փորձանքը շարունակում է իր հարթաշավիղը ՀՀ դպրոցներում՝ խեղելով հայազգի երեխաների լեզվամտածողությունը եւ, ի վերջո, նրանց անձի էթնոհոգեբանական լիարժեքությունը:

- «Առաջին փուլում նորացող կրթական համակարգը, անշուշտ, որոշ ձեռքբերումներ ունեցավ. այլընտրանքային կրթության համակարգի ձեւավորում, կրթության ազատականացում եւ հումանացում, միջազգային հաղորդակցության ընդլայնում եւ այլն»,- գրում է ակադ. է. Ղազարյանը (էջ 155): Զարմանալի է, որ հեղինակը ձեռքբերումների շարքում չի նշում ՀՀ-ում դպրոցի հայացումը (թեկուզ հարաբերական իմաստով), որը, մեր կարծիքով, անկախության վերականգնման հիշարժան եւ կարեւոր ձեռքբերումներից է հանրակրթության բնագավառում:

- է. Ղազարյանը գործածում է «Հարավային Կովկաս» (էջ 142, 146, 147, 286, 288, 289) եւ «Անդրկովկաս» (էջ 147, 152) սխալ եզրույթները՝ Հայաստանի Հանրապետությունն էլ այդ տարածաշրջանում ընդգրկելով: Պատմաաշխարհագրական տեսակետից Հայաստանը եւ նրա մեկ մասը՝ ՀՀ-ն երբեմն մաս չեն կազմել օտարաստեղծ «Անդրկովկաս» եւ «Հարավային Կովկաս» քաղաքական եզրույթով բնորոշվող տարածաշրջանի:

- Այս ժողովածուի մեջ եւս ՀՀ ԳԱԱ-ի ղեկավարի համար գործածվել է «տրեզիդենտ» բառը՝ «նախագահի» փոխարեն: Մեր ակադեմական համակարգը ե՞րբ է վերջապես ... նախագահ ունենալու:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնում 2005 թվականին կազմակերպված մի սեմինար խորհրդակցության ժամանակ ակադեմիկոս էդուարդ Ղազարյանը հայտարարել է. «Ցանկանում եմ, որ այդ վերափոխումներն առաջնորդում իսկապես դառնան բարեփոխումներ» (էջ 168): Հեղինակն առհասարակ նկատի է ունեցել ՀՀ-ում «վերափոխում» եւ «բարեփոխում» հասկացությունները՝ անկախ դրանց ներդրման ոլորտներից: Մենք եւս ցանկություն հայտնենք, որ իրականանա հարգարժան գիտնականի ցանկությունը, այլապես տեղում դոփելու ենք, որ արդի պայմաններում հեշտությամբ, նույնիսկ կործանում կարող է նշանակել:

Կրթության եւ գիտության բնագավառների մութ բավիղներում չխոտորելու եւ անվտանգ ելքին հասնելու ուղղությամբ ընթերցողին, մասնավորապես կրթության եւ գիտության կազմակերպիչներին, մանկավարժներին, դասախոսներին մեծ օժանդակություն է գրախոսվող ժողովածուն, որի տրամանակը (300 օրինակ) պարզապես ծիծաղելի է: Առաջարկում ենք ժողովածուն հազարավոր տրամանակներով վերատպել պետական պատվերի շրջանակում եւ առնվազն մեկական օրինակ անվճար տրամադրել ՀՀ կրթօջախներին եւ գիտական հաստատություններին: Իհարկե, լավ կլինի, որ կրթությունից եւ գիտությունից փարատվելու

Դրոշ այրելը քաղաքական ակցիա է, եթե դա կատարվում է տվյալ երկրի ներկայացուցչի կամ ներկայացուցչության առջև

Այլապես ակցիան վերածվում է սովորական անմիտաս սանձարձակության

1-ին էջից

Որքան էլ այդ դեպքերը տեղի ունենան ապրիլի 23-ին ջահերի երթի ժամանակ, իսկ նախագահ Սերժ Սարգսյանը Եղեռնի հուշարձան այցելի ապրիլի 24-ին, դրանց ցուցաբերվող հակազդեցությունը մանուլով չի սահմանափակվում: Դեպքերին նույն հակազդեցությամբ արձագանքել է նաեւ Անկարայում գործող Եվրասիական ռազմավարական հետազոտությունների կենտրոնի հայկական ուսումնասիրությունների ինստիտուտը, հրապարակելով ամենօրյա տեղեկագրի ապրիլի 28-ի եւ 29-ի համարներում փորձագետ Օյա Էրենի եւ տնօրեն Օ-մեր Էնգին Լյութեմի հոդվածները:

Տվյալ դեպքում խնդիրը թուրքական մամուլի կամ հայկական ուսումնասիրությունների ինստիտուտի հակազդեցությունը չէ, այլ այդ հակազդեցությանը Թուրքիայի ղեկավարներին եւս մասնակից դարձնելու փորձերն են, ինչպես նաեւ այդ հարցի բարձրացումը Թուրքիայի ազգային մեծ ժողովում: Թուրք լրագրողները «ինչո՞ւ եք գնահատում Երեւանում Թուրքիայի դրոշը ոտնատակ տալու դեպքերը» հարցով նախ դիմեցին նախագահ Գյուլին, ընդ որում երկու անգամ՝ ապրիլի 25-ին եւ 27-ին: Երկու դեպքում էլ նա առանց Հայաստանի անունը տալու, ասաց. «Մենք նման բաներ չէինք անի: Դա նրանց ամոթն է: Ամոթ է այդ բանն անողների, ինչպես նաեւ տվյալ երկրի համար: Մինչդեռ մենք այդ երկրին հրավիրել ենք Սեւծովյան սնտեսական համագործակցության կազմակերպություն: Ընտրություններից հետո, շնորհավորելով հաջողություն ենք մաղթել Իրենց (Սերժ Սարգսյանին): Թուրքիան անուղղակի նույասել է տարածաշրջանի կայունությանը: Եթե ոմանք բոլորի աչքի առջեւ տրում են որեւէ երկրի դրոշը եւ դա նկատվում է, ապա դրա համար պետք է ամաչի տվյալ երկիրը: Համաշխարհային հասարակական կարծիքը անտարբեր չի մնա»:

Ապրիլի 25-ին թուրքական դրոշը ոտնատակ անելու, ապա այրելու դեպքերը պատճառեցին հայտարարությամբ, ի դեմս խոսնակի, դատապարտեց Թուրքիայի արտգործնախարարությունը, ընդ որում տուրք տալով տրորումը Հայաստանի պատշաճական շրջանակներում վերադարձնելու մասուլի նկրտումներին: Հայտարարության մեջ ասվում է. «Թուրքիայի դրոշը խորհրդանշում է վեհ թուրքազգի գլխավոր արժեքները, հավատն ու ազատությունը: Դրա պատճառով էլ դա նույնացվում է մեր ազգի գոյության հետ: Բոլորին է հայտնի ազգային արժեքներին եւ այդ արժեքներն արտահայտող դրոշին թուրքազգի տված նշանակությունը: Այդ իսկ պատճառով դրոշի տրման մասին մամուլի հրապարակումները վշտացրել, ցավ են պատճառել մեր հասարակությանը, առաջ բերելով բուռն հակազդեցություն»:

Դրան հետեւեց «գրոշ գալիքի» քաղաքական կազմակերպության՝ Ազգայնական շարժում կուսակցության պատգամավոր Հասան Ջալըքի նույն օրվա հայտումը վարչապետին, որը նա գրավոր ներկայացրել է Թուրքիայի ազգային մեծ ժողովի նախագահությանը: CNN-Turk-ի տվյալներով, պատգամավորը վարչապետ էրդողանին հարցրել է, թե կառավարությունը ինչ միջոցներ է ձեռնարկել Հայաստանի դեմ թուրքական դրոշի տրման առնչությամբ եւ ինչո՞ւ է գնահատում Հայաստանի հետ հարաբերությունները այդ ոտնձգության ֆոնին:

Ապրիլի 26-ի համարում «Ազգը» անդրադարձել էր Երեւանում Թուրքիայի դրոշը ոտնատակ անելու դեպքերին, ընդգծելով, որ դրանք ոչ թե նպաստում են Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը, այլ խոխոտում են ճանաչման հայկական ջանքերը Թուրքիայի եւ թուրքերի նկատմամբ Հայաստանում տիրող թշնամանքով պայմանավորող թուրք ազգայնամոլներին, միաժամանակ վերջիններիս հակահայկական դրսեւորումների արդարացման նախապայմաններ են ստեղծում երկում:

Արդարացման պայմաններում, ինչ խոսք, ընդլայնվում են դրոշի տրման փաստերը նաեւ թուրքական իրականության մեջ «հայերի ցեղասպանության» մասին հրապարակավ արտահայտվող թուրք մտավորականների դեմ շահարկելու ազգայնամոլների հնարավորությունները: Այս հանգամանքը, անկասկած, կկաշկանդի մտավորականներին եւ նրանք Ցեղասպանության թեմայով գիրք հրատարակելիս կամ միջոցառում կազմակերպելիս կբախվեն ավելի քան բուռն հակազդեցության: Չի բացառվում, որ «թուրք հայամետի» այն պիտակը, որը մտավորականներին կպցրել են ազգայնամոլները, ավելի ընդունելի կդառնա թուրքական հասարակության համար:

Քանի որ Ազգայնական շարժում կուսակցության պատգամավորը դեպքերի առնչությամբ հարցադրում է արել վարչապետ էրդողանին, ուստի շահարկումներում կներգրավվի Թուրքիայի ազգային մեծ ժողովը, այնտեղ կինչեն հակահայասանյան ելույթներ, իսկ կառավարությունը ստիպված կլինի բացատրություն տալ ընդդիմությանը, թե ինչ հանգամանքներում են երկրի նախագահը, վարչապետն ու արտգործնախարարը շնորհավորական ուղերձ հղել Հայաստանի ղեկավարներին:

Դրոշ այրելը բողոքի քաղաքական ակցիա է, եթե դա կատարվում է տվյալ երկրի ներկայացուցչի կամ ներկայացուցչության առջեւ: Հակառակ պարագայում, ակցիան վերածվում է սովորական սանձարձակության եւ հանգեցնում ավելորդ շահարկումների: Ապրիլի 23-ին Երեւանում ոչ միայն այրել են Թուրքիայի դրոշը, այլեւ ոտնատակ են արել, ընդ որում նաեւ Մեծ եղեռնի հուշարձանի ներսում: Մինչդեռ այդ հուշարձանը խորհրդանշում է Ցեղասպանության 1,5 մլն անմեղ զոհերին: Այնտեղ են այցելում զոհերի հիշատակը հարգելու, այլ ոչ թե Թուրքիայի դրոշը տրելու միջոցով Մեծ եղեռնի հուշարձանը սանձարձակության վայր դարձնելու համար:

Թուրքիան կառուցում է հեռահար հրթիռների պատշգամբային գանգ

«Ազգ»-ը գրել էր արդեն, որ Թուրքիան պատրաստվում է մինչեւ 2010 թվականը կառուցել իր սեփական հեռահար հրթիռների պատշգամբային գանգը, օգտագործելով ռուսական S-300 օդային պատշգամբության համակարգերը որպես գլխավոր բաղադրամաս, տեղեկացնում է, RIA Novosti-ն Անկարայից:

Ծրագիրը նախատեսում է 4 մարտկոցների ձեռքբերումը տենդերային մրցույթի ընթացքում, որի ժամանակ, հաղթանակ ANKA լրատու գործակալության տվյալների, ներկայացված են լինելու, ռուսական S-300-ից բացի, ամերիկյան «Պատրիոտ PAC-3», չինական «FT-2000» եւ իսրայելական «Arrow» տիպի օդային պատշգամբության համակարգերը, որոնք բոլորն էլ ի վիճակի են խորտակելու մարտավարական բալիստիկ հրթիռները:

Թուրքիան արդեն իսկ նախնական բանակցություններ է վարել բոլոր չորս երկրների հետ: Ընդհանուր գումարը 1 միլիարդ դոլարից ավելի է նախատեսված:

«Թրիոմֆ դեյլի նյուս» թերթը հավանական է համարում ամերիկյան համակարգի ձեռքբերումը, հաշվի առնելով երկու երկրների սերտ կապերը: Սակայն այլ աղբյուրներ առավելությունը տալիս են ռուսական պատշգամբային միջոցներին, նշելով դրանց առավել հզորությունը ամերիկյանի համեմատ: Նրանք, ըստ այդ աղբյուրների, կարող են որոշակի նշանակետեր խորտակել մինչեւ 400 կմ տարածի վրա, որը երկու անգամ ավելի է, քան ամերիկյանի կարողությունը: Հ.Ծ.

Պուտինը «Թայմի» 100 ամենաազդեցիկ անձանց ցանկում

Ռուսաստանի 2-րդ նախագահ Վլադիմիր Պուտինը, որի պատշգամավարությունն ավարտվում է մայիսի 7-ին, հայտնվել է ամերիկյան «Թայմ» հանդեսի կազմած աշխարհի 100 ամենաազդեցիկ մարդկանց ցանկում: Ավելի վաղ նույն հանդեսը նրան ճանաչել էր 2007-ի «Տարվա մարդ»:

ՌԴ նախագահին վերաբերող հոդվածը գրել է ԱՄՆ նախկին պետքարտուղար Մադլեն Օլբրայթը: «Ռուսաստանի ղեկավարը երկաթյա կամքով վերածնեց իր երկիրը որպես մեծ տերություն», ազդարարում է տեքստի ենթավերնագիրը: Օլբրայթը նաեւ նշում է, որ Պուտինի օրոք Ռուսաստանում վերականգնվել են ազգային ավանդույթները եւ ժողովրդի պատմական հիշողությունը, բայց՝ ոչ անձնական ազատությունները:

Օլբրայթը գտնում է, որ դեռի արեւելք ՆԱՏՕ-ի ընդլայնումը եւ ռուսական նավթի մատակարարումներից Արեւմուտքի կախվածությունը փոխադարձ կմնան Արեւմուտք-Ռուսաստան հարաբերություններում:

Համաշխարհային կրթա ունեցող քաղաքական գործիչների ցանկում ընդգրկված են նաեւ ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշը, ՉԺՀ ղեկավար Հու Ցզինտաոն, Հնդկական ազգային կոնգրես կուսակցության առաջնորդ Սոնիա Գանդին, Բոլիվիայի եւ Չիլիի նախագահներ Էվո Մորալեսը եւ Միշել Բաչելետը, ինչպես նաեւ ԱՄՆ նախագահության թեկնածուներ Հիլարի Քլինթոնը, Բարաք Օբաման եւ Ջոն Մակքինը:

«Թայմի» անվանացանկում չկան ուրիշ ռուսաստանցի գործիչներ: Միայն ԽՀՄ նախագահ Միխայիլ Գորբաչովն է հայտնվել հանդեսի համարում, այն էլ Louis Vuitton ֆիրմայի պայուսակի գովազդում:

Բուշի վարկանիշն իջել է 28 տոկոսի

ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշի վարկանիշը հասել է աննախադեպ ցածր մակարդակի, հաղորդում է CNN հեռուստաընկերությունը: Երեկ հրապարակված հանրային հարցման արդյունքները վկայում են, որ Բուշի գործունեությունից դժգոհ է ամերիկացիների 71 տոկոսը:

«Նման հարցումների անցկացման ամբողջ պատմության ընթացքում ԱՄՆ նախագահներից ոչ մեկը աշխատանքի նման ցածր գնահատական չի ստացել: Դժգոհության վարկանիշն անցյալում երբեմն 70 տոկոսը չի գերազանցել», նշում է CNN-ի սոցիոլոգիական հարցումների վարչության ղեկավար Քրիսթինա Հոլլանդը: Միայն Ռիչարդ Նիքսոնը պատշգամբում լինելուց առաջ ունեցել է 66 տոկոս դժգոհության վարկանիշ:

Ջորջ Բուշ կրտսերը այդուհանդերձ ժողովրդի դժգոհության գծով բացարձակ ռեկորդակիր չէ: Ամրիկի վերջերին անցկացված հարցման տվյալները վկայում են, որ ամերիկացիների 28 տոկոսը այնուամենայնիվ գոհ է նախագահի պատշգամբում Բուշի ծավալած գործունեությունից: Ըստ այս ցուցանիշի, վաստակաշատ արդյունքներն ունեցել են Հարրի Թրումենը (հավանության տոկոսը՝ 22) եւ Ռիչարդ Նիքսոնը (24):

Սոցիոլոգները Բուշի գործունեությունից ամերիկացիների դժգոհությունը բացատրում են Իրաքում շարունակվող պատերազմով եւ ԱՄՆ-ի տնտեսական անբարենպաստ վիճակով:

Ադրբեջանը մշակում է պարենային աղահովման ծրագիր

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը կարգադրել է մշակել երկրի բնակչության պարենային աղահովման ծրագիր: Հրամանագրում նշվում է, որ հանրապետությանը «դեռեւս չի հաջողվել հասնել տեղական արտադրության հաշվին հիմնական պարենամթերքների պահանջարկի լիակատար բավարարման»:

Ալիեւը կառավարությանը հանձնարարել է 3 ամսում մշակել պարենային աղահովման պետական ծրագիր, այդ աշխատանքում ներգրավելով գիտնականներին, անկախ փորձագետներին, գիտատարածական միավորումների եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին: Վերջին ամիսներին Ադրբեջանում պարենամթերքների գներն աճել են միջին հաշվով 40-50 տոկոսով, հաղորդում է ՌԻԱ գործակալությունը:

Վիճակի բարելավման նպատակով որոշված է ներմուծվող ցորենը եւ բրինձը ժամանակավորապես ազատել մաքսատուրքից եւ ավելացված արժեքի հարկից: Ներկայումս Ադրբեջանը հացահատիկի մի մասը ներմուծում է Ղազախստանից, Ռուսաստանից եւ Ուկրաինայից:

Շոկոլադն օգտակար է նաեւ հղի կանանց համար

Սեւ շոկոլադի օգուտների մասին շատ է խոսվել, բայց պարզվում է, որ այն օգտակար է նաեւ հղի կանանց համար: Կոնեկտիկուտի նահանգում գործող Ելի համալսարանում անցկացված հետազոտությունները վկայում են, որ հղիության ընթացքում շոկոլադի օգտագործումը թույլ է տալիս խուսափել անչափ լուրջ մի բարդությունից՝ վերջին ամիսներին հաճախ դիտվող պրեեկլամպսիա կոչվող թունավորումից:

Շոկոլադը, հատկապես սեւը, պարունակում է թեոբրոմին կոչվող նյութի զգալի քանակություն: Այդ նյութը խթանում է սրտի աշխատանքը, թուլացնում հարթ մկանները եւ լայնացնում արյունատար անոթները:

Ելի համալսարանի դոկտոր Էլիզաբեթ Թրիշի եւ նրա գործընկերների կարծիքով, պրեեկլամպսիան իր ախտանիշերով շատ նման է սրտի հիվանդություններին: Այս հիվանդության առաջին նշաններն են արյան ճնշման բարձրացումը, դեմքի եւ ձեռքերի այտուցվածությունը եւ այլն:

Ուսիքներ գործակալությունը հաղորդում է, որ հետազոտողները գտնել են 1 երեխա ծնած 2291 կանանց եւ հարցուփորձ արել, թե նրանք որքան շոկոլադ են կերել իրենց հղիության առաջին եւ երրորդ եռամսյակներում: Ովքեր շատ էին կերել, նրանց արյան մեջ մեծ էր թեոբրոմինի պարունակությունը: Այդ կանանց մեջ հղիության ուշ շրջանի թունավորումներից տառապողների թիվը 69 տոկոսով պակաս է:

Բոլիվիան ազգայնացրեց նավթային եւ հեռահաղորդակցական ընկերություններ

Բոլիվիայի իշխանությունները հայտարարել են երեք նավթային եւ մեկ հեռահաղորդակցական ընկերությունների ազգայնացման մասին: Մայիսմեկյան հանրահավաքում ելույթ ունենալով երկրի նախագահ էվո Մորալեսը հայտնել է, որ ազգայնացվում են «Չակո» (նախկին տերը «Բրիթիշ փեթրոլիումն» է), «Տրանսբեդես» (պատկանում էր «Էտմոր էներջիին») եւ CLHB (բաժնետերերն էին գերմանական եւ պերուական ընկերությունները) նավթային ընկերությունները:

Բոլիվիայի նախագահը նաեւ հրամանագիր է սորագրել «էնտել» հեռախոսային ընկերությունը պետականացնելու մասին: Անցյալում ընկերությունը պատկանում էր Euro Telecom International վերազգային կորպորացիային:

Ֆրանսպրեսը հիշեցնում է, որ երկու տարի առաջ, դարձյալ մայիսի 1-ին, Մորալեսը հայտարարել էր երկրի նավթի ու գազի արդյունաբերության ազգայնացման մասին: Այն ժամանակ նախագահն ասել էր, որ ազգայնացումը չի նշանակում երկրում գործող նավթային ու գազային ընկերությունների բոլոր ակտիվների բռնագրավում:

մշակույթ

Փորձարարություն՝ դասականի վերաարժեքավորման իմաստով

Երկայիս մեր թատրոնը ապրելի ու ավելի խիզախ փորձարարության կարիք ունի: Թեեւ փորձարարությունն այս բնագավառում շատ անգամներ է եղել արել ու շատ անգամներ սայթաքել...

Դավիթ Հակոբյանի ղեկավարած Պետական երաժշտական կատերային թատրոնի ներկայացրած «Անուշը» փորձարարություն էր մի քանի իմաստներով, նաեւ՝ նորարարության... Սա փորձ էր ստուգելու, թե կարելի՞ է արդյոք այս ծղրիդավոր շրուների առաստության մեջ հնչեցնել Թումանյանի մաքուր, հստակ, ցինջ խոսքը... Ոչ միայն հնչեցնել, այլեւ զուտ մեղրոտաձայի օրենքներով արդյունք հանել հանդիսականի շատ բան տեսած աչերից: Ստուգումն ու վերաարժեքավորումն էր Թումանյանի խոսքի անմահ զորության, քանի որ բեմադրիչը փորձել էր առավելագույնս հարազատ մնալ գրածի տեքստին: Փորձ էր արել դիտարկելու թե այսօրվա հանդիսականին կարելի՞ է արդյոք «Անուշ» հասցնել առանց Արմեն Տիգրանյանի՝ տասնամյակներով ընդունված եւ անգիր առված երաժշտության... Եվ ի վերջո՝ դասական գրածն ընկալելու ինչ հնարավորություններ են մնացել մեզանում...

Արդյունքում՝ զուտ թատերային բաղադրիչներով՝ դերասան, նկարիչ, պարային ու երաժշտական ձեւավորում, տեսանելի էր ներկայացում:

Քանի որ Դավիթ Հակոբյանը Հ. Մալյանի, Մ. Մարինոսյանի դրողներով անցած այն բեմադրիչն ու դերասանն է, որ չէր կարող միանգամ էլ ձեռնարկել, ուրեմն՝ նախ հանդիսականին թատրոն է բերում վստահությունը նոր աղեսի նկատմամբ: «Ուշացածները», «Ցալլաքը ասֆալտի վրա» առիթն վառ վկայությունն են թատրոնի այս տեսակի կարեւորության: Իսկ տեսակը՝ բեմադրիչի մտահղացմանը հաջորդող փուլում մեծամասն դայմանավորվում է դերասանների ընտրությամբ ու նրանց խաղով: Մեր ժամանակներում շատ հայտնի հայ բեմադրիչների հաճախ չի հաջողվում «բացել» նույնիսկ տաղանդավորի աչուն հանած դերասանների, իսկ Դ. Հակոբյանը էմիզոդիկ դերերում անգամ առաջին պլան է բերում դերասանի ներուս մասնակցությունը բեմի իրադարձություններին, նույնիսկ խմբային տեսարանների մասնակիցը դեպ է հանակված լինի էքսաֆիկ հոգեվիճակով:

Գլխավոր դերակատարների խաղը թեեւ հաճախ չէր, բայց նրանցից յուրաքանչյուրը ներկայացման ընթացքում կարողացավ գոնե մեկ անգամ հասնել գագաթնակետին... Սարոյի մոր ոգի հաչվածը (ընդունվեց բռավոնոնով), Անուշի խելագարության, Մուսիի՝ ոճիրին հաջորդած դղրդաը...(Անուշ-Անահիտ Կիրակոսյան, Սարո-Վարդան Գեւորգյան, Մուսի-Զոհրաբ Բեկ-Գասպարյանց, Սարոյի մայր-Անթեմ Հարությունյան):

Հեքսարհռական գլուխ էր Անուշի մոր կերպարը... Սա կարելի է դիտել մեր ներկա հոգեբանական գիտելիքների դիրքից... Կարելի է որոշ եզրակացության գալ եւ Թումանյանի գրածում փնտրելով առկա հասիկները՝ ստեղծել կանացի մի նոր կերպար, որ այնուամենայնիվ ծնունդ է մինչեւ այժմ... շատ ավելի կանացի ու բնական լինելով, նոյասում է ողբերգությունն ավելի ուժգնորեն ընկալելուն: Գեւորգ Հովակիմյանի Բիձիկը՝ գալով մայրական դդրոցի այն ավանդույթից, որի հաճաձայն կերպարը գեսք է «խոսի» եւ տրավորվի ընդգծված, էական մանրամասներով, միաժամանակ սանձնում է տեսքից խոսափողի եւ ժամանակի մեջ գործողությունն առաջ տանողի դերը: Սա էլ հոգեբանական գլուխերի այն շարքից է, որի հասիկը նույնքես գտնել էր գեսք եւ գտնվել է Թումանյանի տեքստում... Նա չի կարող դեպքերի ողբերգականության կրողը չլինել, բայց եւ չի կարող չգգալ սուրհանդակի իր առավելության հաճույքը:

Ներկայիս թատրոնի սուղ միջոցներով լավագույնս լուծված էր նաեւ բեմահարդարման խնդիրը (նկարիչ՝ Մեսրոպ Մարգարյան): Յափնջիներ հագած ու մորթե փափախավոր հսկա ֆիգուրները բեմի վրա (ժամանակավորապես ներկայացումը խաղացվում է Թումանյանի անվ. գեղ. տիկնիկային թատրոնի բեմում) անմիջապես հիշեցնում են Թումանյանական տողերը. «Դեղ էն սարերը, որ վես, վիթխարի/Հարբած շարքերով բռնած շուրջպարի/ Հսկա՞ շուրջպարի բռնած երկնքում/Հրձվում են ասես էն մեծ հարսանքում.../ Պերճ Արագածի նազելի դաստր/Որ Դեւ-Ալ, Դեւ-Բեդ եւ այլ հսկաներ/Խոլ-խոլ հսկաներ հնոց աշխարհի/Փախցրին բերին անառիկ Լոռի»: Թեթեւությամբ տեղաշարժվող այս ֆիգուրները, հաճախ միջնորմի դեր կատարելով, միաժամանակ թե հովիվներ, թե ժայռեր, թե վանքեր են հիշեցնում:

Ներկայացման տեսարաններին յուրահատուկ տոնայնություն էր հաղորդում Սեդրակ Երկանյանի երաժշտությունը:

Քանի որ ներկայացումն իր արտաքին նախնական փուլում է, հարկ եմ համարում նշել իմ զուտ անձնական ցանկությունները: Ըստ իս, ներկայացումը շատ ավելի կշահեր, եթե փերիների դարը փոքր-ինչ անկանոն, բայց ավելի բազմիմաստ տարողություն ունենար, Սարոյի կերպարը ավելի տոլորիչ դարձնելու հնար գտնվեր, գուցեեւ լիներ փոխարինող դերասան, ծակվեին Մուսիի եւ Անուշի գրկախառնությունների գեղագիտական տեսարանները:

ԱԼԻՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Գիդեթ Կարբոնել (1910-2008)

Կյանքի 98-րդ տարում վախճանվեց հայազգի ֆրանսիացի խեցեգործ-ճենապակագործուհի Գիդեթ Կարբոնելը: Նա սերում էր արվեստագետ մի գերդասանից, թոռն էր բժիշկ, հայ հանրային գործիչ Ավետիք Բաբայանի (1839-1913) եւ հայ իրականության մեջ մանկապարտեզային գործի հիմնադիր Սոֆյա Բաբայանի (1855-1940) եւ դուստր ֆրանսահայ նկարչուհի Արմենուհի (Արմինիա) Բաբայան-Կարբոնելի (1876-1971), որի հայրը՝ Մարգարիտ եւ Շուշանիկ Բաբայանները հայտնի են եղել կոմիտաս վարդապետի հետ ունեցած ջերմ բարեկամությամբ եւ ֆրանսիական երաժշտության պատմության մեջ իրենց հետքն են թողել որպես երգչուհի եւ դաշնակահարուհի:

Գիդեթ Կարբոնելն Արմենուհի Բաբայանի եւ կապալոնական ծագումով բժիշկ Շառլ Կարբոնելի երեք զավակներից էր: Ծնվել է 1910-ի հունվարի 23-ին, Մեդոն քաղաքում (Սեն-է-Ուազ գավառ): Ուսանել է Սեւրի լիցեյում: Խեցեգործությամբ զբաղվել է մանկուց: 1930-ին մասնակցել է Փարիզի հայ արվեստագետների «Սկի» խմբակցության ցուցահանդեսին: Նա պատրաստել է խմբակարներ, խեցեղեն իրեր, ճարտարապետական շինվածքներ: Գիդեթ Կարբոնելը դասավանդել է Գրենոբլի, Բուկոնի, Հավրի լիցեյներում, ցուցադրվել Ֆրանսիայի, Բելգիայի, ԱՄՆ-ի, Անգլիայի, Եգիպտոսի քաղաքներում: 1958-ին Բրյուսելի ցուցահանդեսում արժանացել է ոսկե պատվանշանի, արվեստի եւ գրականության ասպետի կոչման: Հրատարակվել են նրա աշխատանքները պատկերող մի քանի ալբոմ: 1988-ին Կարբոնելի մասին փարիզահայ «Աշխարհ» թերթը գրել է. «Որքան օտարացած նկատեմ զինվ, այնքան մոտ է հայությանն իր առուեստով: Հայու տառապանքը մեծ պատերազմն ի վեր դրոշմուած կը մնայ իր հոգիին, իր մարմնին անջնջելի մասը կը կազմեն»:

Գիդեթ Կարբոնելն ամուսնացած է եղել ֆանդակագործ եմանուել Օրիկոսի հետ, ունեցել երկու դուստր՝ Իզաբել եւ Մարիան: Իզաբել Օրիկոս-Տոնկան նկարչուհի է, բնանկարիչ, իսկ Մարիան Օրիկոսը՝ թատրոնի դերասանուհի եւ ասմունքող: 2007 թվականին նա Փարիզում ներկայացրել է «Հայաստանի խորունկ երգերը» ներկայացումը, որտեղ արտասանել է հայ բոեզիայի նմուշների ֆրանսերեն թարգմանություններ՝ Մեսրոպ Մաշտոցից մինչեւ ժամանակակից բանաստեղծները: Այս ներկայացումում նա հանդես է եկել Մարիան Օրիկոս-Բաբայան անունով: 2007-ի ամռանը Մարիանն առաջին անգամ այցելեց Հայաստան:

Գիդեթ Կարբոնելը Բաբայան ընտանիքի զավակներից վերջին ողջ մնացածն էր: Նրա հուղարկավորությունը կատարվեց աորիլի 24-ին, Բիուսակ գերեզմանատանը:

Ա. Բ.

Կառուցման ու քանդման, հնի ու նորի համարժեքվող փիլիսոփայությամբ

Ճապոնացի լուսանկարչի հայաստանյան նոր հետաքրքրությունները

Մարսելի Սահակ-Մեսրոպ մշակութային կենտրոնի եւ ՀԲԸՄիության աջակցությամբ կենտրոնի սրահում այս տարվա մարտի 8-ին տեղի ունեցավ ճապոնացի լուսանկարիչ Թակուջի Շիմուրայի՝ Հայաստանի Ֆիլեհովը գյուղի մալական բնակչության մասին պատմող լուսանկարչական 40 ափսեաանոցների ցուցադրությունը, որին ուղեկցող կոնֆերանսին մասնակցել են 200 հայեր: Շիմուրան նրանց մեջ առանձնացնում է Որբերս Տեր-Մերկերյանի եւ Ժոզե Զրբաբյանի անունները: Թակուջի Շիմուրան ծնվել է ճապոնական Օսակա քաղաքում, սկզբնական մասնագիտություն ընտրել է վարսահարդարությունը, ապա որոշել է զբաղվել լուսանկարչական արվեստով: Սովորել է դեկորատիվ արվեստների ազգային բարձրագույն, դիտողական հաղորդակցության դպրոցներում: Ինքը կարծում է, որ եվրոպան է լուսանկարչության կենտրոնը, որովհետեւ այստեղ հայոց ցեղասպանության հետ, ասելով, որ Թուրքիայում մշակույթի ու կրոնի տարբերության պատճառով հայերի հանդեպ ցեղասպանություն կատարվեց:

Մալականների մասին պատմող լուսանկարչական ցուցահանդեսը կցուցադրվի նաեւ Լիոնում եւ Ֆրանսիայի այլ քաղաքներում:

Թակուջին մեկշաբաթյա հայաստանյան այս այցելության ընթացքում իր նոր ցուցադրությունների համար որոնում է նոր օբյեկտներ, նոր տեղանք: Նրա թեմայի շարժառիթը ֆրանսիացի մտածող, գրող, էսսեիստ Պոլ Վալերիի «Կառուցումն ու քանդումը նույն արժեքն ունեն» խոսքերն են: «Երբ մարդը մի բան է կառուցում, չի կարող մի բան չքանդել: Նույնիսկ արդեւոր համար, ինչ-որ բան պիտի քանդել: Ես չեմ կարծում, որ քանդելը վատ է, եթե ինչ-որ բան քանդվում է, դրա տեղակալ արդեն կա», երբ արժեքներ են քանդվում, փլուզվում, Թակուջին դա համարում է վանգավոր: «Ճապոնիայում էլ կան բաներ, որ կորչում, քանդվում, մոռացվում են»:

Երեւանում նրա լուսանկարչական օբյեկտիվը փնտրում է ավելի անշուշտ, առաջին հայացքից կարեւորություն չունեցող տեղանքներ. «90-ականներին, երբ լույս չկար, ծառեր էին կտրում, հիմա այդ նույն ծառերի տեղում բենզեր են կառուցում»: Թակուջիի Երեւանյան լուսանկարչական շարքը ներառում է ծայրամասային թաղամասեր, քանդվող ու կառուցվող տեղանքներ, բնական ռելիեֆային եւ մարդու կողմից փոփոխություն կրած տարածքներ: Լուսանկարչությունը, քանի որ նաեւ փաստաթղթային նշանակություն ունի, ինքը մտածում է, որ մի 50-100 տարի անց գուցե այս նկարները դառնան այս վայրերի պատմության միակ վկայությունը: Թակուջին մոռացված հնի ու կառուցվող նորի մեջ օրգանական կապ, շարունակություն է տեսնում, ժամանակի հարափոփոխ ու կրկնվող փիլիսոփայություն: Նրա Երեւանյան շարքը հնարավոր է ցուցադրվի կամ Տոկիոյում, կամ Փարիզում: Իսկ առհասարակ Թակուջի Շիմուրան ունեցել է բազմաթիվ անհատական ու խմբակային ցուցահանդեսներ Օսակայում, Տոկիոյում, Սանկտ Պետերբուրգում, Մարսելում, Երեւանում՝ 2 անգամ, ՆՓԱԿ-ում եւ Ազգային պատկերասրահում:

Հայաստանն ու հայերին ճանաչել փորձող ճապոնացի լուսանկարիչը ունի նաեւ մեր օրերի հանդեպ իր վերաբերմունքը: Ֆրանսիայի իր հայ ընկերներից ծանոթ է մարտի 1-ի դեպքերի մասին պատմող տեսանյութերին: «Շատ տխուր ու ցավալի է, որ մարդիկ են զոհվել, բայց մի ուրախալի բան կա, որ հայերը կարողանում են իրենց շահերի, իրավունքների համար պայքարել»:

ՄԵԼԻՆԱ ԲԱԲԱՅԱՆ

Մովսիսյանը մոտ է հաջողությանը

Սլովակիայում բնակվող Սերգեյ Մովսիսյանը Պլովդիվում ընթացող շախմատի եվրոդիայի առաջնությունում մոտ է վերջնական հաջողությանը: Մրցումների ավարտից մեկ տուր առաջ Սերգեյը 7,5 միավորով 3ուրի Կրիվորուչկոյի, Վլադիմիր Բակալանի, Պավել Տրեգուբովի, Սերգեյ Տիվյակովի, Էմիլ Սուսովսկու, Սերգեյ Վոլկովի եւ Էդվին Լ՝ Ամիի հետ գլխավորում է աղյուսակը: 10-րդ տուրում Մովսիսյանը ոչ-ոքի խաղաց Վոլկովի հետ: Ավարտական տուրում Մովսիսյանը ուժերը կչափի առաջատարներից մեկի՝ 3ուրի Կրիվորուչկոյի հետ:

Վերջին տուրերում մրցաբարային վիճակը զգալիորեն բարելավել է Վլադիմիր Հակոբյանը, որն ինչպես եւ Մովսիսյանը, դեռեւս պարտություն չի կրել: 10-րդ տուրում Հակոբյանը հաղթություն կնվաճեց Եվգենի Նայդերի հետ եւ վաստակեց 7 միավոր: Նրանից կես միավոր պակաս ունի Գաբրիել Սարգսյանը: Նա եւս իր պարտիան ավարտեց ոչ-ոքի Անդրեյ Սոկոլովի հետ մրցաձեռում:

6-ական միավոր են վաստակել Կարեն Ասրյանն ու Սամվել Տեր-Մահակյանը: Ասրյանը միավորը կիսեց Զաբա Բալոգի հետ, իսկ Սամվելը հաղթեց Հովոջ Սբեդինին: 5,5-ական միավոր ունեն Տիգրան Պետրոսյանը, Տիգրան Քոթանջյանը եւ Ատոս Անասասյանը: Պետրոսյանը հաղթություն կնվաճեց Զոն Գավայնի հետ, իսկ Քոթանջյանն ու Անասասյանը հաղթեցին համապատասխանաբար Սկոբելևին ու Ֆիլիպսին: Վեսելբայնին հաղթելուց հետո 5 միավոր վաստակեց Արտաշես Մինասյանը: Իսկ Ղմիտի Հարությունյանը չներկայացավ Նիտելեյի հետ հանդիպմանը եւ նրան պարտություն գրանցվեց:

Կանանց մրցաբարում մրցանակակիր դառնալու լավ հնարավորություն են պահպանում Էլինա Դանիելյանն ու Լիլիթ Մկրտչյանը, որոնք վաստակել են 7-ական միավոր: Երկուսն էլ հաղթեցին համապատասխանաբար Տատյանա Ստեփանովային եւ Մարգարիտա Վոիսկային: 5,5-ական միավոր են վաստակել Լիլիթ Գալոյանը, Նելլի Ադինյանը եւ Սիրանուշ Անդրեասյանը: Լիլիթը պարտվեց Իվետա Ռայլիխին, Նելլին ոչ-ոքի խաղաց Տատյանա Վասիլեւիչի հետ, իսկ Սիրանուշը հաղթեց Եվգենիա Օլոդին: 4 միավոր ունեցող Աննա Հայրապետյանը պարտվեց Աննա Ուրբնիցին:

Կանանց մրցաբարում ավարտական տուրից առաջ առաջատարը 8 միավորով Կատերինա Լահնոն է: Նա վերջին տուրում մրցելու է 7,5 միավոր ունեցող Աննա Ուշենինայի հետ: Նատալյա Ժուկովան, Էլմիրա Սկրիպչենկոն եւ Պիա Կրամլինգը եւս ունեն 7,5-ական միավոր: Դանիելյանը կմրցի Սոչկոյի, Մկրտչյանը՝ Հոուսկայի հետ:

Արման Փաշիկյանը՝ Գյումրու միջազգային մրցաբարի միանձնյա առաջատար

Գյումրիում անցկացվող շախմատի միջազգային մրցաբարում խաղացված վեց տուրերից հետո աղյուսակը 5,5 միավորով վստահորեն գլխավորում է երեւանցի միջազգային գրոսմայստեր Արման Փաշիկյանը: Սակայն միայն մեկ պարտիա ավարտելով ոչ-ոքի եւ մյուսներում հաղթելով, նա 1,5 միավորով գերազանցում է երկրորդ տեղում ընթացող վրաց գրոսմայստեր Թամազ Գելաշվիլու ձեռք բերած արդյունքը:

Գրոսմայստերներ Եվգենի Վորոբյովը (Ռուսաստան), Գիորգի Բագասուրովը (Վրաստան) եւ միջազգային վարպետ Լեւոն Բաբուջյանն ունեն 3,5-ական, ուկրաինացի Ալեքսանդր Զուբարեւը՝ 3 միավոր: Առայժմ հաշվեսի է Գյումրին ներկայացնող Դավիթ Քալաշյանի արդյունքը՝ 2 միավոր:

Շրջանաձեւ մրցակարգով ընթացող մրցաբարը հասել է հասարակածը, առջեւում կա եւս հինգ տուր: Մայիսմեկյան ընդմիջումից հետո մարզիկները երեկ շարունակում էին պայքարը: Առանձնակի հետաքրքրություն էր ներկայացնում առաջատարների՝ Փաշիկյանի եւ Գելաշվիլու պարտիան, որտեղ մեր գրոսմայստերը խաղում էր սեւ ֆիգուրներով: Մյուս խաղատախտակներին ուժերն էին չափում Վորոբյովը եւ Բաբուջյանը, Արման Հայրապետյանն ու Արթուր Ղիբուխյանը, Զուբարեւն ու Քալաշյանը, Հրանտ Մելքումյանն ու Հայր Սիմոնյանը, Արթուր Գաբրիելյանը (Ռուսաստան) եւ Բագասուրովը:

Գ. Մ.

Ռուսական շոգեքաղնիք «Բավարիայի» համար

Ռուսաստանի չեմպիոն Սանկտ Պետերբուրգի «Զենիթը» շարունակում է մրցակիցների ջախջախումը ՌԵՖԱ-ի գավաթի մրցաբարում: «Վիլյառեալի», «Մարսելի» եւ «Բայերի» նկատմամբ հաջողահաղթ տեսնելուց հետո «Զենիթը» սեփական հարկի տակ պարզապես ջախջախեց Մյունխենի «Բավարիային», որի եզրափակիչ մտնելու հնարավորությունները մասնագետները բարձր էին գնահատում նույնիսկ առաջին խաղում գրանցված ոչ-ոքի (1-1) արդյունքից հետո: Իրենց վերջնական հաջողությունում վստահ էին նաեւ «Բավարիայի» գլխավոր մարզիչ Օսմար Հիցֆելդը եւ թիմի շատ խաղացողներ: Սակայն «Զենիթն» այլ կարծիքի էր եւ դա հաստատեց իր խաղով:

Առդեն 4-րդ րոպեին Պոգրեբնյակը տուգանային հարվածով բացեց հաշիվը: Մինչեւ ընդմիջում Զիրյանովը կրկնապատկեց հաշիվը, իսկ ընդմիջումից միայն անց Ֆայզոնը խփեց 3-րդ գոլը՝ վերջնականապես ամրապնդելով թիմի հաղթանակը: «Բավարիայի» ջախջախումն ավարտեց Պոգրեբնյակը, որը 11 գոլով շրջանցեց Լուկա Տոնիին ՌԵՖԱ-ի գավաթի խաղարկության ռմբարկուների ցուցակում: Ցավոք Պոգրեբնյակը դեղին քարտի արժանացավ եւ չի մասնակցի գավաթի եզրափակիչ հանդիպմանը:

Թիմերի մարզիչները հետեւյալ կարծիքն են արտահայտել:

Դիկ Ադվոկատ («Զենիթ»)- Մեզ հարկ եղավ մեծ ջանքեր գործադրել: Գոհ եմ այս տղաներից, որոնք հիանալի խաղացին եւ հաղթեցին եվրոդիայի ուժեղագույն թիմերից մեկին: Մենք շատ սուր էինք գործում հարձակման գծում՝ «Բավարիային» զրկելով ազատ խաղալու հնարավորությունից: Այսօր մենք իրոք ուժեղ էինք «Բավարիայից», թեեւ թիմը մնում է մեծ ներուժ ունեցող կոլեկտիվներից մեկը: Այս պահին մեզ իհարկե չի կարելի համեմատել եվրոպական առաջատար ակումբների՝ ասենք «Չելսիի» հետ: Սակայն մենք ճիշտ ուղով ենք առաջ ընթանում: Թիմը մեծ ներուժ եւ լավ ապագա ունի: Կարծում եմ, որ մենք արժանի ենք նաեւ եզրափակիչում հաղթելու:

Օսմար Հիցֆելդ («Բավարիա»)- Շնորհակալ եմ «Զենիթին», որը գերազանց ֆուտբոլ ցուցադրեց եւ արժանիորեն եզրափակիչ մտավ: Ճիշտ է, մենք էլ վատ հնարավորություն չունեինք ուղեգիր նվաճելու: Գոլային պահերը չիրացրին Կլոզեն, Տոնին: Դարձյալ մեզ թանկ արժեցան: Մենք չկարողացանք մեզ դրսեւորել, իսկ մրցակցի շատ ֆուտբոլիստներ իրենց կարիերայում լավագույն խաղը ցուցադրեցին: Տարբերություն չկա, թե ինչպիսի հաշվով պարտվեցինք: Դարկավոր է սովորել ընդունել պարտությունը: «Զենիթին» հաջողություն եմ մաղթում Մանչեսթրում: Եզրափակիչում հաղթողի հիմնական հավակնորդը «Զենիթն» է:

Մայիսի 14-ին կայանալիք եզրափակիչում «Զենիթի» մրցակիցը «Գլազգո Ռեյնջերսն» է: Շոտլանդական ակումբը Իտալիայում էլ խաղն ավարտեց ոչ-ոքի (0-0): Եզրափակիչի ուղեգիր բախտը վճռվեց 11 մ հարվածաբարով: Հաղթելով 4-2 հաշվով, «Գլազգո Ռեյնջերսը» մտավ եզրափակիչ: Նշենք, որ վերջին 36 տարիների ընթացքում «Գլազգո Ռեյնջերսն» առաջին անգամ մտավ եվրոգավաթների եզրափակիչ:

ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Հայ սամբիստների հարուստ ավարը

Թբիլիսիում ավարտված սամբոյի եվրոդիայի առաջնությունից մեդալների հարուստ ավարով տուն կվերադառնան հայ սամբիստները: Նախ առաջնության պարգեւները վիճարկեցին դասական սամբոյի մասնակիցները, այդպես սամբիստներն ուժերը չափեցին մարտական սամբոյում: Երկու մրցաձեւում էլ հայ սամբիստները բավական հաջող ելույթներ ունեցան:

Դասական սամբոյում մեր մարզիկներից առավել հաջող հանդես եկավ Ատոս Դանիելյանը (74 կգ): Մեր սամբիստը հաղթելով մրցակիցներին, մտավ եզրափակիչ, որտեղ նրա մրցակիցը ռուսաստանցի Լեբեդեւն էր: Ցավոք, վճռորոշ գոտեմարտը բախել չհաջողվեց եւ Դանիելյանը ստիպված էր բավարարվել արծաթե մեդալով: Մեր սամբիստներից երեքը՝ Ռուզան Սարգսյանը (48 կգ), Արեն Մեհրաբյանը (68 կգ) եւ Հակոբ Առաքելյանը (90 կգ) դարձան բրոնզե մրցանակակիրներ:

Մարտական սամբոյում եւս հայ մարզիկները մեդալներ նվաճեցին: Առավել հաջողը մինչեւ 100 կգ քաշային Բոյուկյանի ելույթն էր, որը միայն եզրափակիչում պարտվեց ռուսաստանցի Սիդելնիկովին եւ արժանացավ արծաթե մեդալի: Գերծանր քաշային սամբիստների մրցավեճում բրոնզե մեդալ նվաճեց Արեն Խալաթյանը: Նույնիսկ պարգեւի արժանացան նաեւ Օթարյանը (56 կգ) եւ Արգարյանը (57 կգ):

Ռոյ Զոնսը ցանկանում է մենամարտել Կալզագեի հետ

Կիսածանր քաշային կարգում աշխարհի նախկին բացարձակ չեմպիոն Ռոյ Զոնս-կրտսերը լրջորեն մտադրվել է մենամարտել բրիտանացի Զո Կալզագեի հետ: Նա հայտարարել է, որ արդեն սկսվել են բանակցությունները նոյեմբերի 15-ին Կարդիֆում մենամարտ անցկացնելու շուրջը:

«Մեծ հաճույքով կմենամարտեմ Զոյի հետ Ուելսում, նրա երկրպագուների առջեւ: Հուսով եմ, որ արդեն հաջորդ շաբաթ մենք վերջնականապես կպայմանավորվենք նոյեմբերի 15-ին մենամարտ անցկացնելու հարցի շուրջը: Հնարավոր է, որ այդ մենամարտը դառնա իմ մարզական կարիերայի գլխավոր իրադարձությունը: Վստահ եմ, որ չնայած իմ բոլոր նվաճումներին, բոնցֆամարտում գլխավոր մենամարտերս դեռ առջեւում են: Ներկայում Կալզագեն կիսածանր քաշային կարգում լավագույնն է, իսկ անկախ քաշային կարգից բոնցֆամարտիկների վարկանիշում զիջում է միայն Ֆլոյդ Մեյվեզերին: Ինձ դրա համար էլ պատրաստ եմ ժամանել Ուելս ու մենամարտել նրա հետ», հայտարարել է Ռոյ Զոնսը:

Զոնսը ներկա էր Հոլիկինսի հետ Կալզագեի մենամարտին: Կալզագեի հաղթանակը նրա մոտ կասկած չի հարուցում, իսկ նրա ելույթը մեծ տպավորություն էր թողել Ռոյի վրա:

Ի դեմ, պրոմոուտեր Ֆրենկ Ուորենը ոչ մի կերպ չի մեկնաբանել Զոնսի հայտարարությունը: Նա պարզապես նշել է, որ Զոնսը եւ WBC-ի ու WBO-ի վարկածներով աշխարհի չեմպիոն Կելի Պավլիկը Կալզագեի հնարավոր մրցակիցների շարքում են: Թե ով կլինի Կալզագեի հաջորդ մրցակիցը, հայտնի կդառնա մեկ ամիս անց:

«Մենք 6-7 տարի մարտահրավեր էինք նետում Ռոյ Զոնսին, սակայն նա չէր ցանկանում նույնիսկ լսել հնարավոր մենամարտի անցկացման մասին: Իսկ այսօր նա հիշել է Կալզագեին, ինչի որ այլ տարբերակ չունի: Մենք որոշում կկայացնենք միայն մեկ ամիս հետո: Զոն Նախկինի պես ուժեղագույնն է երկրորդ միջին քաշում, իսկ այժմ նաեւ աշխարհի չեմպիոնի տիտղոսն է կրում կիսածանր քաշում: Այնպես որ, մենք ընտրելու տարբերակներ ունենք: Զո Կալզագեն ինքը կընտրի մրցակցին», հայտարարել է Ֆրենկ Ուորենը:

Առոյանը կմասնակցի Սոֆիայի մրցաբարին

Հայաստանի շախմատիստների առաջատար Լեւոն Արոյանը տուրով նորից կնստի խաղատեղանի շուրջը: Նա կմասնակցի մայիսի 7-18-ը Բուլգարիայի մայրաքաղաք Սոֆիայում կայանալիք շախմատի ավանդական մրցաբարին: Արոյանի մրցակիցները կլինեն բուլգարացի գրոսմայստեր Վեսելին Թոփալովը, ուկրաինացի Վասիլի Իվանչուկը, ադրբեջանցի Թեյմուր Ռաջաբովը, չինի շախմատիստ Բու Քյանցին եւ բուլգարացի Իվան Չեոլարինովը: Մրցաբարը կանցկացվի երկու շրջանով:

Ռոնալդինյոյի տրանսֆերային գինը 40 մլն եվրո է

«Բարսելոնը» պատրաստ է բաժանվել իր «աստղերից» մեկից՝ բրազիլացի կիսապաշտպան Ռոնալդինյոյից: Ճիշտ է, վերջինիս իրենց թիմում ընդգրկելու համար ակումբի ղեկավարները ստիպված կլինեն 40 մլն եվրո վճարել: Այդքան է գնահատել իր թիմի խաղացողին ակումբի նախագահ Ժոան Լապորտան:

«Բարսելոնի» գլխավոր մարզիչ Ֆրանկ Ռայկարդն էլ հաստատել է, որ Ռոնալդինյոն մրցաշրջանի ավարտից հետո կհեռանա թիմից: «Ընդունեմ դա որոշ եղելություն: Իհարկե ափսոս, որ այդպես սաստվեց, սակայն ես նրա կողմն եմ: Բրազիլացին մեր թիմի համար շատ բան է արել: Հուսով եմ, որ նա ամբողջ աշխարհին կաղաչացուցի, որ դեռեւս կարող է բարձր մակարդակի խաղ ցուցադրել», հայտարարել է Ռայկարդը:

Հեմիլտոնն այլեւս կոռմ չէ

«Ֆորմուլա-1» դասի ավտոմրցավազքի մասնակից Լյուիս Հեմիլտոնի հեղինակությունը բրիտանական երիտասարդության շրջանում անկում է ապրում: Մինչեւ 25 տարեկան 2000 բրիտանացի երիտասարդների շրջանում անցկացրած հարցման արդյունքներով ամենահեղինակավոր տղամարդը «Լիվերպուլի» կիսապաշտպան Սթիվեն Ջերարդն է: Նրան հաջորդում են երաժիշտներ Պիթ Դոհերտին, Ալեխ Տերները եւ Քենյե Ուեսը: Անցած տարի Հեմիլտոնը վստահորեն գրաղեցնում էր առաջին տեղը:

Ուիմբլդոնն ավելացնում է պարգեւավճարները

Ուիմբլդոնի թենիսի մրցաբարի ընդհանուր մրցանակային հիմնադրամը նախորդ տարվա համեմատ կկազմի 23,46 մլն դոլար: Դա 4,7 տոկոսով գերազանցում է 2007-ի ցուցանիշը (22,4 մլն դոլար): Կանանց եւ տղամարդկանց մրցաբարերի հաղթողները կստանան հավասար՝ 1,49 մլն դոլար: Այն 7,1 տոկոսով գերազանցում է 2007-ի պարգեւավճարի չափը:

Էջը պատրաստեց ԱՏՈՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Մրցույթին մասնակցելու հրավեր

Սիրելի դպրոցականներ եւ ուսանողներ

Համաբխարհային Հայկական Կոնգրեսը եւ Ռուսաստանի Հայերի Միությունը *հայտարարում են «Մենք եղել ենք, մենք կանք, մենք կլինենք» խորագրով հայկական սփյուռքի, Հայաստանի եւ Արցախի ուսանողների եւ աշակերտների համար անցկացվող* ***«Մենք ուժեղ ենք, երբ միասին ենք»*** *թեմայով լավագույն գրական ստեղծագործության ամենամյա միջազգային մրցույթ:*

Մրցույթն անցկացվում է 2008 թվականի մարտի 1-ից մինչեւ հունիսի 1-ը:

Մրցույթի անցկացման կարգը ներկայացվում է Ձեզ:

Մենք ուրախ կլինենք Ձեզ տեսնել մրցույթի մասնակիցների թվում:

ԿԱՐԳ

«Մենք եղել ենք, մենք կանք, մենք կլինենք» խորագրով ուսանողների եւ աշակերտների համար անցկացվող «Մենք ուժեղ ենք, երբ միասին ենք» թեմայով լավագույն գրական ստեղծագործության ամենամյա միջազգային մրցույթի

1. Ընդհանուր դրույթներ.

1.1 Ներկա դրույթները որոշում են «Մենք եղել ենք, մենք կանք, մենք կլինենք» խորագրով **«Մենք ուժեղ ենք, երբ միասին ենք»** թեմայով անցկացվող ամենամյա միջազգային գրական մրցույթի կարգավիճակը, նպատակները, խնդիրները ու անցկացման կարգը:

1.2 Մրցույթի հիմնական նպատակն է Հայաստանի, Արցախի եւ հայկական սփյուռքի ուսանողներին ու աշակերտներին հաղորդակից դարձնել հայ ժողովրդի ոգեւորական անցյալին, հավաս սերմանել նրա ապագայի հանդեպ: Մրցույթը կնպաստի Հայաստան-սփյուռք հարաբերությունների զարգացմանը, ազգային միասնության ամրապնդմանը, խթան կհանդիսանա հայապահպանման գործին, կօժանդակի հայ մշակույթի, հայոց լեզվի եւ հայ գրականության ճանաչմանն ու տարածմանը:

1.3 Մրցույթն անցկացվում է Համաբխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության կողմից՝ ՀՀ կրթության եւ գիտության նախարարության աջակցությամբ:

1.4 Մրցույթն անցկացվում է 2008 թվականի մարտի 1-ից մինչեւ հունիսի 1-ը:

2. Մրցույթի պայմանները.

2.1 Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության, Արցախի եւ հայկական սփյուռքի դասընթացողներ ու 8-րդ եւ բարձր դասարանների աշակերտները: Մրցույթում կարող են մասնակցել այլազգի ներկայացուցիչներ:

2.2 Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի մրցույթին մասնակցել մեկ ստեղծագործությամբ՝ շարադրությամբ, բանաստեղծությամբ, պատմվածքով, ակնարկով, հրապարակախոսությամբ եւ այլն:

2.3 Մրցույթին մասնակցելու իրավունք են ստանում միայն նշված ժանրերում ուղարկված, թեմային ներկայացվող պահանջներին համապատասխանող, հանձնարարությամբ հավակնված աշխատանքները:

2.4. Մրցույթին ներկայացված աշխատանքները պետք է բացահայտեն առաջարկվող թեմայի՝ **«Մենք ուժեղ ենք, երբ միասին ենք»** կարեւորությունը հայրենիքի համար, այն, որ այս գաղափարի շուրջ էլ պետք է միավորվեն աշխարհով մեկ սփռված հայերը:

Տանկալի է, որ մրցույթի մասնակիցները ներկայացված աշխատանքներում փորձեն տեսնել իրենց տեղն ու դերը հայ պետականության վերելքին, բարգավաճմանը նպաստելու, ազգային վերազարթոնքին իրենց մասնակցությունը բերելու գործում:

3. Մրցույթի կազմակերպման եւ անցկացման կարգը.

3.1 Մրցույթն անցկացնելու նպատակով ձեւավորվում է կազմկոմիտե:

3.2Կազմկոմիտեն ձեւավորում է աշխատանքային հանձնախումբ, հաստատում կազմը, ամփոփում մրցույթի արդյունքները:

3.3 Աշխատանքային հանձնախումբը.

- մշակում է աշխատանքների գնահատման չափանիշները,
- սահմանում է մրցանակային տեղերը եւ անվանակարգերը,
- ստուգում եւ գնահատում է աշխատանքները,
- որոշում է հաղթողներին եւ ներկայացնում կազմկոմիտեի հաստատմանը:

3.4 Ուղարկված աշխատանքները չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում:

3.5 Մրցույթի կազմակերպիչներն իրենց իրավունք են վերապահում անհրաժեշտության դեպքում համապատասխան փոփոխություններ կատարել մրցույթի անցկացման կարգում:

3.6 Մրցույթի արդյունքները ուսանողների եւ աշակերտների համար կամփոփվեն առանձին-առանձին՝ տարիքային եւ կրթական առանձնահատկությունների հաշվառմամբ:

4. Հաղթողների պարգեւատրումը.

4.1 Մրցույթում առաջին երեք տեղերը շահած ուսանողները եւ աշակերտները կպարգեւատրվեն համակարգիչներով եւ դիպլոմներով, իսկ առանձին անվանակարգերում հաղթողները՝ արժեքավոր նվերներով, պատվոգրերով:

4.2 Մրցույթի արդյունքների ամփոփման եւ հաղթողների պարգեւատրման արարողությունը տեղի կունենա Երեւանում, 2008 թվականի հոկտեմբերին՝ «Համաբխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության օրերը Հայաստանում եւ Արցախում» ծրագրի շրջանակներում:

5. Մրցութային աշխատանքին ներկայացվող պահանջները.

5.1 Ներկայացվող աշխատանքները պետք է լինեն գրագետ, հստակ, տրված թեմային համապատասխան:

5.2 Մրցութային աշխատանքները կարելի է ներկայացնել հայերեն, ռուսերեն եւ անգլերեն, մինչեւ **2008 թվականի հունիսի 1-ը** /Հայաստանից, Արցախից եւ ԱՊՀ երկրներից ներկայացված աշխատանքներն ընդունվում են միայն հայերեն եւ ռուսերեն, իսկ անգլերեն աշխատանքներ ընդունվում են միայն հեռավոր արտերկրից/:

5.3 Ներկայացված աշխատանքների ծավալը չպետք է գերազանցի 4 համակարգչային էջը:

5.4 Աշխատանքները կարող են ներկայացվել նաեւ էլեկտրոնային տարբերակով (Word ֆորմատով (*.doc, *.rtf) Windows-ի համար), վերին եւ ստորին լուսանցքները՝ 2սմ, աջ եւ ձախ լուսանցքները՝ 2.5սմ, տպատի չափը՝ 14 pt, ինտերվալը՝ 1: Աշխատանքները կարող են ներկայացվել նաեւ անձամբ կամ ուղարկվել փոստով:

5.5 Պարտադիր է ունենալ տիտղոսաթերթ, որտեղ պետք է նշված լինի.

Ազգանուն
Անուն
Հայրանուն
Ծննդյան թիվը
Հասցեն
Հեռախոսը
Էլեկտրոնային փոստի հասցեն
Ուսումնական հաստատության անվանումը եւ վայրը

6. Աշխատանքները կարող են ուղարկվել հետեւյալ հասցեներով.

Հայաստանի Հանրապետություն, Երեւան, Տերյանի 69, 4 հարկ
Հեռ. **(37410) 510442**
Ֆաքս **(37410) 510441**
E-mail: **vladis@netsys.am**

Հայաստանի Հանրապետություն, Երեւան, Գլխավոր պողոտա, Կառավարության III տեղ, ՀՀ ԿԳ Նախարարություն, հանրակրթության վարչություն, 611 սենյակ:

Մրցույթի կազմկոմիտե

«Էկոնոմիկա եւ Իրավունք» ամսագիր

Ինչպես անթերի վարել հաշվապահությունը եւ խուսափել հաշվապահական, հարկային եւ իրավաբանական սխալներից

• Օրենսդրական նորություններ • Պարզաբանումներ • Խորհրդատվություն

«Էկոնոմիկա եւ Իրավունք» - ամսագիր ղեկավարների եւ մասնագետների համար
Բաժանորդագրվելու համար զանգահարեք 54-24-81, 54-74-81

ՎՏԱՆԳԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Անցած տարի աշխարհում սպանվել է 171 լրագրող

Մամուլի ազատության համաշխարհային օրվա կապակցությամբ ուղերձ է հղել ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պան Կի-մունը: Ուղերձում մասնավորապես ասված է. «Ազատ, վստահելի եւ անկախ լրատվությունը խաղաղության եւ ժողովրդավարության հիմքերից է: Մամուլի ազատությանն ուղղված գրոհները հարձակում են միջազգային իրավունքի, մարդկության ու հենց ազատության դեմ: Հետեւաբար, ես ավելի եմ անհանգստանում, որ ամբողջ աշխարհում լրագրողներն ասիմանաբար թիրախ են դառնում, եւ վիրավորվում եմ, երբ նման հանցագործությունները մանրազնին չեն ուսումնասիրվում եւ դասական կարգով հետապնդվում: Մամուլի ազատության այս օրը եւ այս տարի, երբ նշում ենք Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 60-րդ տարեդարձը, կոչ եմ անում բոլոր խավերին ջանք չխնայել լրագրողների վրա հարձակվողներին արդարադատության առաջ կանգնեցնելու համար»: Օրվա առիթով ԵԱՀԿ-ի մամուլի ազատության հարցով ներկայացուցիչ Միկլոս Հարաշտին կազմակերպության անդամ երկրների կառավարություններին կոչ է արել մամուլի ազատությունն ապահովելու համար լրագրողներին պաշտպանել հարձակումներից եւ վերացնել ազատ խոսքի սահմանափակումները: «Որպես վրեժխնդրություն ինքնադատական լուսաբանման համար Հայաստանում, Ադրբեջանում, Բելառուսում, Բուլղարիայում, Խորվաթիայում, Վրաստանում, Հունգարիայում, Ղազախստանում, Չեռնոգորիայում, Ռուսաստանում, Սերբիայում եւ Մակեդոնիայում լրագրողների նկատմամբ կիրառվել է ֆիզիկական բռնություն՝ թեթի ենթարկելուց ընդհուպ սպանություն», ասել է Հարաշտին եւ հավելել. «Լրագրողների հանդեպ բռնությունը «սովորական հանցագործություն» չէ, քանի որ նպատակ ունի խարխլել ժողովրդավարության հիմնական հասատությունը՝ ազատ մամուլը»:

Մամուլի ազատության պահանջարկը Հայաստանում

1-ին էջից

Հայաստանյան ներկա լրատվական դաշտում «կենդանի» մնալու համար պիտի աշխատես իշխանությունների կամ ընդդիմության հետ: Իսկ այն թերթերը, որոնք փորձում են ինքնուրույն գոյատեւել առանց ենթարկվելու ճնշումների, որպես կանոն դժվարին պայմաններում են հայտնվում: Այստեղից կարող ենք եզրակացնել, որ ներկայումս Հայաստանի քաղաքական դաշտում չկա ազատ մամուլի կամ ազատ խոսքի պահանջարկ, այլ միայն իշխանական կամ ընդդիմադիր քաղաքական ուժերի քարոզչությամբ զբաղվելու առաջարկ: Եթե ենթարկվես այդ առաջարկին, ապա ապահովված է քո գոյությունը եւ ֆինանսավորումը, եթե ոչ՝ ապա գոյություն ունեցող գովազդային դաշտը բավարար չէ նույնիսկ մեկ միլ թե շաբաթ կանոնավոր թերթ հրատարակելու համար:

Ընդհանրապես հայրենի գովազդային շուկան առանձին քննարկման թեմա է, որին **«Ազգը»** վաղ թե ուշ կանդրադառնա, սակայն այսօր Հայաստանում կատարվում է շատ վտանգավոր մեկ այլ երեւույթ, շատ լրատվամիջոցներ, որոնք իրենց ներկայացնում են որպես ընդդիմադիր, փորձում են իրենց միակողմանի եւ տարբեր քաղաքական ուժերի կարիքների համար ծառայեցվող լրատվությունը ցույց տալ որպես խոսքի ազատության դրսեւորում: Այդ լրատվամիջոցներում երբեմն չես կարող հանդիպել այլ կարծիքի, քան այն, որը նախանշում է տվյալ պարբերականը վերահսկող քաղաքական ուժի պրոպագանդայի եւ ագիտացիայի բաժնի վարիչը: Այսինքն՝ մեր նորօրյա գեբելսիկները որոշում են, թե որ թերթը ինչ պետք է գրի եւ ինչ ձեւով: Խորհրդային ժամանակներում հատուկ նման աշխատանքի պահպանումը պայմանավորված է ոչ միայն խոսքի ազատության բացակայությամբ, այլեւ նրանով, որ ժամանակը դիտարկվում է որպես որոշակի քաղաքական նպատակների ծառայեցնելու, այլ ոչ թե ազատ խոսք տարածելու միջոց: 17 տարի գոյություն ունեցող անկախ Հայաստանում այդպես էլ չստեղծվեց ժամանակի լիակատար ազատություն, ինչն էլ բերում է ազատության հասկացության այլասերում, երբ կեղծիք տարածող լրատվամիջոցները հանրության որոշ մասը ընկալում է որպես խոսքի ազատության համար պայքարող պարբերականներ: Բազմակարծությունը հավասարապես աչելի է թե՛ գործող իշխանությունների եւ թե՛ ընդդիմության համար, որեւէ ինքնադատություն թե՛ առաջինի եւ թե՛ երկրորդի նկատմամբ ընդունվում է սվինների եւ ծախվածության կամ ոչնչալեզության մեղադրանքներով: Եվ եթե փետրվարի 19-ի ընտրությունների արդյունքում իշխանության գար Լեւոն Տեր-Պետրոսյանը, արդա խոսքի ու ժամանակի ազատությունը նույնքիսի որբ վիճակում կմնար, ինչպիսին է այսօր, ինչպիսին էր երեկ:

Բնական հարց է առաջանում, իսկ ինչ է հարկավոր անել: Կարծում եմ, առաջին հերթին պետք է ստեղծել հասարակական կարծիք երկրում խոսքի իրական ազատության, այլ ոչ թե դրա իմիտացիայի մասին: Հասկանալի է, որ նման կարծիք հնարավոր չէ ձեւավորել քաղաքական կուսակցությունների միջոցով, որոնց դա հակացուցված է: Հնարավոր չէ ստեղծել նաեւ խոսքի ազատությամբ զբաղվող տարբեր ՀԿ-ների միջոցով, որոնց այս իրադրությունը ձեռնտու է, քանի որ խոսքի ազատության նման ողբալի վիճակն է նրանց համար նոր գրանտ ստանալու երաշխիք, եւ իրենց հերթական զեկույցում նրանք ձգտում են ստեղծված ֆիտուր գույներն էլ ավելի խտացնել: Խոսքի ազատությունը պրոպագանդայով ու ագիտացիայով փոխարինելու փորձերը հանգեցրել են այն բանին, որ այսօր Հայաստանում չհարգված մասնագիտությունը լրագրությունն է, իսկ հասարակական կարծիքի հարցումները ցույց են տալիս, որ «ոմն չեմ վստահում» հարցին պատասխանում են՝ լրագրողին:

Այսինքն՝ խոսքի ազատության պահանջարկի եւ առաջարկի մասին հասարակական կարծիքի ձեւավորման համար հարկավոր է, որ դրանով զբաղվեն այն լրատվամիջոցները, որոնց համար ազատություն բառն իսկապես արժեք է, այլ ոչ թե պրոպագանդայի ու ագիտացիայի միջոց, ով ձգտում է բազմակարծության եւ չի վախենում իր էջերը տրամադրել տարբեր կարծիքներ արտահայտող հեղինակների, ով չի փորձում հայիոյանքն ու հերյուրանքը որպես խոսքի ազատության ձեւ ներկայացնել, ով չի ձգտում մարդկանց անձնական վիրավորանք հասցնելը որպես ինքնադատություն ցույց տալ, այլ ցանկանում է ազատ ու անկեղծ խոսակցություն սկսել Հայաստանում խոսքի ազատություն անվան տակ ձեւավորված խորք եւ հոռի բարեերին վերջ տալու ու մեր երկրում իսկապես ազատ խոսքը արժեք դարձնելու համար:

ՁՈՒԱԳՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՆԵՔԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լուսանկարները՝ Լուսանկարիչների միության «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Գրիգոր Լուսավորչի 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Տպագրվեցին պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Անթիփեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 2.05.2008, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արշակունյաց 2: